

ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ, Լ. ԹԵԼՅԱՆ, Լ. ՂԱՄՈՅԱՆ, Ս. ՊԱՊԻԿՅԱՆ,
Տ. ՍԱՖԱՐՅԱՆ

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ (գիտական հոդվածների ժողովածու)

ՊՐԱԿ Բ

ԵՐԵՎԱՆ
ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2023

ՀՏԴ 811.19

ԳՄԴ 81.51

Ա 858

Հրապարակման է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գիտական խորհուրդը:

Պատասխանատու խմբագիր՝ Թ. Ասոյան

Ա 858

Արդի հայերենի հետազոտություններ (գիտական
հոդվածների ժողովածու): Եր.: ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ.,
2023. Պրակ Բ.- 91 էջ:

Գրքում ներկայացված են ՀՀ ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինս-
տիտուտի արդի հայերենի բաժնի աշխատակիցների աշխատանքները,
որոնք 2014 թ. հրապարակվել են տարբեր հանդեսներում: Պրակում ընդ-
գրկված նյութերը վերաբերում են ժամանակակից հայերենի ուսումնա-
սիրության տարբեր խնդիրների: Ժողովածուն կարող է օգտակար լինել
մասնագետներին և առհասարակ ժամանակակից հայոց լեզվի հարցերով
հետաքրքրվողներին:

ՀՏԴ 811.19

ԳՄԴ 81.51

ISBN 978-9939-9305-6-5

© ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, 2023

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արդի հայերենի բաժնի գիտաշխատողները իրականացրել են գիտական հետազոտություններ ժամանակակից հայոց լեզվի բնագավառում: Ուշադրության կենտրոնում են եղել հայերենի հնչյունաբանական, բառապաշարային, քերականական, խոսքային իրողությունների վերաբերող հարցերը: Հետազոտությունների արդյունքները ներկայացվել են մենագրություններում, հոդվածներում ու զեկուցումներում:

Այժմ լեզվի ինստիտուտի արդի հայերենի բաժնում ուսումնասիրություններ են կատարվում ժամանակակից հայերենի լեզվական տարբեր երևույթների ուղղությամբ: Քննվում են բառապաշարին, բառակազմությանը, ոլորտային տերմինագիտությանը, ձևաբանական և շարահյուսական նորմավորմանը, շարահյուսական կապակցման միջոցներին ու եղանակներին, հատկական փոխառություններին, լեզվաճական իրողություններին, ուսուցման խնդիրներին, խոսքային տարածված սխալներին վերաբերող բազմաթիվ հարցեր: Ուշադրություն է դարձվում Մխիթարյանների հայերենագիտական գործունեությանը արևմտահայերենի ուսումնասիրության և կանոնարկման ուղղությամբ: Հետազոտությունները կատարվում են ինչպես նկարագրական, այնպես էլ պատմական եղանակներով: Իր գիտական արդյունքները ի մի բերելու, հանրությանը և ժամանակակից հայոց լեզվի հարցերով հետաքրքրվող ներկա ու հաջորդ սերունդներին ամփոփ կերպով ներկայացնելու նպատակով ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արդի հայերենի բաժինը սկսում է հրապարակել աշխատակիցների հոդվածներն ու զեկուցումները պարունակող «Արդի հայերենի հետազոտություններ» ժողովածուների շարքը ստ տարիների: Նյութերը քաղվում են լույս տեսած տարբեր ամսագրերից ու ժողովածուներից՝ առանց հեղինակային կամ խմբագրական միջամտության:

Շարքի երկրորդ պրակը պարունակում է բաժնի աշխատակիցներ Ա. Բարսեղյանի, Լ. Թեյանի, Լ. Ղամոյանի, Ս. Պապիկյանի, Տ. Մաֆարյանի աշխատանքները, որոնք վերաբերում են արդի հայերենի շարահյուսական իրողություններին, Երևանի խոսակցական լեզվին, առանձին բառերի և հասկացությունների մեկնաբանման հարցերին: Դրանք 2014 թվականին հրապարակվել են տարբեր հանդեսներում, ժողովածուներում:

Թ. Ասոյան

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՄԱՆ ՈՉ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐ ԶԼՄ-ՆԵՐԻ ԼԵԶՎՈՒՄ*

Բարսեղյան Ամայա
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Շարահյուսական կապակցություն է նաև նախադասությունների կապակցությունը, որը, ըստ ակադ. Ս. Աբրահամյանի, շարահյուսական կառույց է՝ իր քերականական, բառական, հնչերանգային ներքին օրինաչափություններով¹: Շարահյուսական կառույցի ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն նրա կառուցվածքի ու դերի պարզաբանման, այլև նախադասության և նրա կիրառության ամբողջական պատկերման առումներով:

Խոսքը կազմված է նախադասությունից և նախադասությունների կապակցությունից: Նախադասությունների կապակցումը առավելապես կատարվում է բարդ նախադասության բաղադրիչների կապակցման հիմնական միջոցներով՝ կախված նախադասությունների կապակցման բնույթից: Նախադասությունների կապակցման համար գործածվում են նաև լեզվական այլ միջոցներ, որոնք հատուկ են միայն նրանց: Նախադասությունների կապակցման մեջ իմաստային-քերականական կապերը բազմազան են: Դժվարությունն այն է, որ բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունների համեմատությամբ նախադասությունների կապակցման մեջ բաղադրիչ նախադասությունները առավել ինքնուրույն են, որի պատճառով էլ նրանց կապը հաճախ շատ սերտ չէ, մեծ մասամբ՝ տարբեր: Հատկապես տարբեր են լինում տվյալ նախադասության՝ նախորդող ու հաջորդող նախադասությունների նկատմամբ իմաստային քերականական կապերը:

* Ջահուկյանական ընթերցումներ, Միջազգային գիտաժողովի զեկուցումներ, Եր., 2014, «Ատոլիկ» հրատ., էջ 200-205:

¹ Ս.Աբրահամյան, Հայոց լեզու. Շարահյուսություն, Ե., 2004, էջ 221:

ԶԼՄ-ների լեզվում նախադասությունների կապակցման մեջ երբեմն հանդիպում են բաղադրիչների կապի և փոխհարաբերության ոչ կանոնական դրսևորումներ:

Հոդվածում ի մի են բերված նախադասությունների կապակցման վերաբերյալ դիտարկված ոչ կանոնական դրսևորումները ԶԼՄ-ների լեզվում, և արված են ճշգրտումներ:

1. *Ոչ կանոնական դրսևորումներ՝ պայմանավորված բառական միջոցներով* (շաղկապներ, շաղկապական բառեր, դերանուններ և այլն), որոնք իրենց կապակցական դերը կատարում են՝ որոշակի հարաբերության մեջ մտնելով նախորդ, երբեմն հաջորդ նախադասության (կամ նախադասությունների) հետ:

Ինքնուրույն նախադասությունների կապակցման օրինակներ:

«Զեկուցողը նշեց, որ «Հեռուստատեսային և ռադիոյի մասին ՀՀ օրենքը առանձնահատուկ տեղ է հատկացնում Հանրային հեռուստատեսությանը՝ կարևորելով հանրային իրազեկման գործում վերջինիս առանձնակի դերակատարումը: *Եվ այդ պատճառով* (փխ.՝ ըստ ներկայացված օրենքների) նախագծերը նպատակ ունեն ավելի բարձրացնելու Հանրային հեռուստատեսության տեղն ու դերը, համբավը հասարակական կյանքում՝ արգելելով առևտրային գովազդը» (ՀՀ, 20.2.2014):

Վերջին նախադասությունը նախորդի գործողության համար հիմունք է հանդիսանում, հետևաբար այդ իմաստային կապը պետք է արտահայտվի հիմունքի հարաբերություն արտահայտող կապային կառույցով՝ ըստ օրենքների:

«Քաղաքագետ Ս.Քորնելը գրում է. «Հարավային Կովկասը կարող է հզոր պատնեշ հանդիսանալ ռուսական իմպերիալիզմի ալիքի դեմ, *սակայն միայն եթե* (փխ.՝ սակայն եթե) ԱՄՆ-ը դեմքով շրջվի դեպի տարածաշրջանի անվտանգությունը» (Ժամ., 8.4.2014):

«*Մինչ դեռևս* (փխ.՝ քանի դեռ) հստակեցված չեն զգայուն ապրանքատեսակների նկատմամբ տրվող հնարավոր արտոնությունների չափերը, նախագահի աշխատակազմի ղեկավարի տե-

ղակալ Վ. Արամյանի կարծիքով, բարձր մաքսատուրքերի կիրառման հետևանքով Հայաստանը կարող է կորցնել տարեկան 104 մլն դոլար» (Հայ. աշխ., 1.4.2014):

Որոշիչ ստորադաս նախադասությամբ կապակցությունները նախորդ նախադասությունների հետ կապակցված են *ով, ովքեր* հարաբերական բառերով *որ*-ի փոխարեն: Այսպես՝ «Խիստ արդյունավետ աշխատեցի, (փխ.՝ բուր) վեց օրում ստեղծելով 13 կտավ: Միայն մեկ օրում վեց էտյուդ կատարեցի, և դա հասկանալի է: Մեր այս հազեցած աշխատանքին *իրենց աջակցությունը բերեցին* (փխ.՝ աջակցեցին) գրողների ստեղծագործական տան տնօրեն Մովսես Մանուկյանը և մյուս աշխատողները: *Ովքեր* (փխ.՝ որոնք) մեզ համար հիանալի պայմաններ էին ստեղծել, ինչի համար հայտնում եմ իմ և իմ ընկերների շնորհակալությունը»- ասաց նա: «Երկտարեցի» է նաև Այսեր Մաթևոսյանը: *Ով* (որը) առաջին անգամ է եղել շատ տարիներ առաջ» (ՀՀ, 25.1.2014):

Ժողովրդախոսակցական ոճի դրսևորում պետք է համարել *թե բա, բա* վերաբերական բառերի գործածությունը հետևյալ օրինակում. «Վնասելու հարց չկա: Ուղղակի մենք պայմանավորվել ենք կոնսենսուսով կայացած հարցերի մասին միայն խոսել: Որովհետև, երբ ինչ-որ փակագծեր են բացվում, միանգամից դրան հաջորդում են շահարկումներ: *Թե՛ բա* ասում էիք կային ընդհանրություններ: *Բա ոնց* եղավ, որ այս հակասություններն ի հայտ եկան» (Հրապ., 8.3.2014):

Ընդհանրացման և հետևության հարաբերությամբ կապված ինքնուրույն նախադասություններով խոսքում կրկնված է *այսինքն* կապակցող շաղկապը, որը ոճական արժեք չունի: Այսպես՝ «...վերահսկողական ծառայության գործունեություններն այսօր որոշակի փոփոխությունների կարիք ունեն, որպեսզի ապահովեն ավելի ճիշտ բյուջեի կազմում և ավելի հստակ կատարում: *Այսինքն՝* ծախսերը, որ կազմվում են, և որոնք կատարվում են, ի սկզբանե լինեն վերահսկելի, ոչ թե ծախսվեն-ավարտվեն ու մի քանի տարի անց պարզվի, որ ինչ-որ խնդիրներ կան: *Այսինքն՝*

(փխ.՝ ուրեմն) ստուգման գործընթացում նախնական ստուգման կշիռը ավելի մեծացնելու (փխ.՝ մեծացնել): Սա օրվա պահանջ է և կարևոր փոփոխություն» (Ժամ., 20.6.2014):

Եթե համեմատենք ինքնուրույն նախադասությունների ոչ կանոնական կապակցությունները բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունների ոչ կանոնական (և ոչ միայն) կապակցումների հետ, մեկ անգամ ևս կհամոզվենք, որ վերջիններիս իմաստային կապը սերտ է, և առավել սերտ՝ զուգադրական շաղկապների դեպքում:

Այսպես «Շատ կարևոր է, *որպեսզի* (փխ.՝ որ) մենք տեմպերը չդանդաղեցնենք, ընդհակառակը՝ արագացնենք, *որպեսզի* վերջնականապես կարողանանք ասել, որ արտակարգ իրավիճակների նախարարությունը կայացել է, և որ բարեփոխումների արդյունքում մեզ մոտ ստեղծվել են ծառայություններ, որոնք որակյալ սպասարկում են ոչ սովորական իրավիճակում հայտնված մեր քաղաքացիներին» (ՀՀ, 6.2.2014):

Այստեղ ունենք տարբեր քերականական հարաբերություններով կապված (ենթակա, նպատակային) բաղադրիչ նախադասություններ, որում *որպեսզի* նպատակային շաղկապի գործածությունը ճիշտ չէ:

«Շնորհավորելով ներկաներին՝ վարչապետը ցանկացավ, *որպեսզի* (փխ.՝ որ) 2011-ը լրագրողների համար լինի հաջողությունների, նոր նվաճումների և մասնագիտական աճի տարի» (ՀՀ, 14.1.2011):

Ուղիղ խնդիր ստորադաս նախադասությամբ կապակցությունը գերադասի հետ պետք է կապվի *որ* շաղկապով և ոչ թե՛ *որպեսզի* նպատակային շաղկապով: «Այսօր էլ անհրաժեշտ է, *որպեսզի* (փխ.՝ որ) մեր ղեկավարությունը դիվնագիտական դաշտում կարողանա նաև հաջողություններ ունենալ» (ՀՀ, 10.5.2014):

Ենթակա ստորադաս նախադասությամբ կապակցություն է, գերադասի հետ պետք է կապվի *որ* շաղկապով: Կամ՝ «Այսքանը բավական է, *որպեսզի* (փխ.՝ որ) մենք կարողանանք հանգել այն

եզրակացության, որ այս բանակցային գործընթացում խոչընդոտն Ադրբեջանն է» (ՀՀ, 10.5.2014): «Ես համոզված եմ, որ գալիք սերունդը մեզանից ավելի լավ է պաշտպանելու մեր հայրենիքը, անձնատուր է լինելու և ավելի նվիրված է լինելու հայրենիքին *ոչ միայն* ռազմական դաշտում, այլ (փխ.՝ այլև) ամեն ինչ անելու է, որ ռազմական դաշտին չհասնի, ինչպես անվտանգության համակարգի ստեղծմամբ, տնտեսության զարգացման ուղղությամբ» (ՀՀ, 10.5.2014): «Նա հայտարարում է, որ հանուն ժողովրդի հաղթանակի և վստահության պատրաստ է կորցնել ամեն ինչ, սակայն մինչև այսօր նա կարծեք թե *ոչ միայն* չի կորցրել, այլ (փխ.՝ այլև) նույնիսկ ձեռք է բերել խաղատնային բիզնեսի արտոնյալ պայմաններ» (Ժամ., 7.5.2014): «*Երբ* նահանգապետը զանգահարում է, *սպա* ես վերցնում եմ նրա խոսափողը» (Գիտութ., հմ. 1, 2009): Այստեղ զուգորդումը սխալ է, և *սպա*-ի գործածությունը՝ ավելորդ:

բ. Ոչ կանոնական դրսևորումներ քերականական միջոցներով պայմանավորված: Նախադասությունների կապակցման բուն քերականական միջոցներ են շարահարությունը և շարադասությունը:

Շարահարական կապակցման դեպքում չկան կապակցող շաղկապներ, շաղկապական բառեր, այլ նախադասությունները գործածվում են կողք կողքի և իրար հետ կապվում են իմաստով: Սովորաբար լինում են կապակցական այլ օժանդակ միջոցներ ևս (ստորոգյալի ժամանակ, գոյականներ, դերանուններ և այլ խոսքի մասեր): Կապակցման այս եղանակի մեջ դեր են կատարում բաղադրիչ նախադասությունների միջև փոքրիկ դադարը, հնչերանգը, շարադասությունը, իմաստը: Այսպես՝ «Տարիներ առաջ թարգմանչուհի Վերա Զվյագինցևան Մոսկվայի կինոյի տանը մի երեկոյի ժամանակ ինձ ծանոթացրեց մեծանուն կինոռեժիսորի հետ: *Այդպես էլ* այդ ծանոթությունը շարունակություն չունեցավ» (ԳԹ, 18.2.2011):

Այս երկու ինքնուրույն նախադասությունները իմաստով են կապված իրար հետ: Սակայն *այդպես էլ* կապակցման օժանդակ

միջոցը տեղին չէ, որովհետև հայտնի չէ՝ ինչո՞ւ տեղի չունեցավ այդ ծանոթության շարունակությունը:

Ճիշտ է՝ ...ծանոթացրեց մեծանուն կինոռեժիսորի հետ: Իսկ այդ ծանոթությունը շարունակություն չունեցավ: Կամ՝ծանոթացրեց մեծանուն կինոռեժիսորի հետ, որի հետ ծանոթությունը շարունակություն չունեցավ՝ մեկ բարդ նախադասությամբ:

Հմմտ. «Դարձյալ կապ չկա: Արբանյակի հետ ասում են ինչ-որ բան է պատահել: Իբր վստահելի էր համարվում այս արբանյակային կապը: Ափից տասը մղոն հեռանում ես՝ այլևս չի աշխատում բջջային հեռախոսը, չկա արբանյակային կապ, խուլ փակվում է նաև էլեկտրոնային փոստը: *Այդպես* կարող է երկար շարունակվել» (ԳԹ, 8.7.2014): Այս հատվածի չորս նախադասությունների իմաստային կապը այն է, որ չեն գործում արբանյակային, հեռախոսային, էլեկտրոնային կապերը: Այդ նախադասությունները կապվում են նաև մեկ այլ օժանդակ բառական միջոցով՝ *այդպես*-ով, որը ճիշտ է:

Նախադասությունների կապակցման քերականական միջոցներից է նաև շարադասությունը: Մեծ է շարադասության դերը նախադասությունների իմաստի փոխհարաբերության հարցում: Շարադասության փոփոխության դեպքում կարող է փոխվել նախադասությունների բաղադրիչ մասերի ներքին իմաստային-քերականական փոխհարաբերությունը կամ աղավաղվել այն:

Երբեմն թարգմանության (և ոչ միայն) ժամանակ ոչ միայն շարադասությունն է փոխվում, այլև ներքին իմաստային-քերականական փոխհարաբերությունը, որը կարող է հանգեցնել անկապակցության: Նման անկապակցության օրինակներ են մամուլից քաղված հետևյալ խոսքերը. «Կողմերը քննարկել են նաև կազմակերպության հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում անվտանգության ապահովման, ինչպես նաև 2013 թվականի դեկտեմբերի 10-ին Մոսկվայում՝ ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանի և ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորոյուժայի համատեղ պայմանավորվածությունների քննարկ-

ման հարցերով հանդիպման արդյունքներով ստորագրված արձանագրության իրականացման ընթացքին վերաբերող հարցեր» (Հայ. աշխ., 6.2.2014): Կամ՝ «Այն կառուցվել է՝ հիմք ընդունելով ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ արտաքին գործերի նախարարության միջև 2013 թ. ապրիլի 30-ին Երևանում կնքված *մտադրությունների մասին հուշագիրը*: Կենտրոնը հանդիսանում է ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության մասը և օգտվում է Վիեննայի կոնվենցիայով և դիվանագիտական ներկայացուցչությունների կարգավիճակը կարգավորող երկկողմ միջազգային համաձայնագրերով սահմանված արտոնություններից և անձեռնմխելիությունից» (ՀՀ, 12.6.2014):

Անկապակցության օրինակ է նաև Հայաստանի գրողների միության հիմնադրման 80-ամյակի առթիվ Չինաստանի գրողների միության հղած հետևյալ շնորհավորանքը. «Հայաստանը երկար պատմություն ունեցող հնագույն քաղաքակրթությամբ երկիր է: Ազգային անկախության համար երկար տարիների պայքարի ընթացքում հայ ժողովուրդը *հրաժարվել է զիջելուց ու նահանջելուց՝ իր փորձառությունը փոխանակելով նաև չին ժողովրդի հետ՝ նրա ազգային-ազատագրական պայքարի ընթացքում* (ԳԹ, 11.7.2014):

Շարադասության խախտման օրինակներ են. «Բան Կի Մունը կոչ է անում անհապաղ վերսկսել *արագ արդյունքների տանող* (փխ.՝ արդյունավետ) երկխոսությունը. «Հետագա անկայունության և արյունահեղության կանխումը առաջնահերթ կարևորություն ունի, և բոլոր կողմերը պետք է ձգտեն հնարավորինս *արագ Ուկրաինան վերադարձնել բարգավաճման և ժողովրդավարության ուղի*» (ՀՀ, 20.2.2014):

«Եվ, անշուշտ, շնորհակալ եմ անցած տարվա վերջին այդպիսի հնարավորություն ընձեռելու համար ինձ և Ադրբեյջանի նախագահին՝ Լեռնային Ղարաբաղի ինդրի *խաղաղ կարգավորման ուղղությամբ* բանակցություններ վարելու ուղղությամբ» (փխ.՝ Եվ, անշուշտ, շնորհակալ եմ անցած տարվա վերջին ինձ և

Աղբբեջանի նախագահին այդպիսի հնարավորություն ընձեռելու համար՝ վարելու բանակցություններ Լեռնային Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորման ուղղությամբ) (ՀՀ, 12.6.2014):

Կամ՝ «Հասարակության շրջանում կան լուրջ դժգոհություններ: Սակայն ընդդիմադիր ուժերը նույնիսկ ի վիճակի չեն մոբիլիզացնել այն ուժերը, այսինքն ընդդիմությունը չի կարող այդ ռեսուրսները օգտագործել քաղաքական դաշտում ավելի տեսանելի լինելու համար», - նշել է Ս.Մինասյանը» (ՀՀ, 9.7.2014):

Բերենք օրինակ, որտեղ շարադասության փոփոխությունը խախտել է ժխտման ներհակական հարաբերությամբ կապված նախադասությունների ներքին իմաստային-քերականական կապը և աղավաղել այն: Այսպես՝ «Մնում է՝ ...ԲՀԿ-ականները կոնկրետ գործողություններով ապացուցեն, որ իրենք հավատարիմ են իրենց սկզբունքներին ու քառյակի գործընկերներին, արագացնեն միասնական հրավիրելու հարցը, այլ ոչ թե նպաստեն իշխանությունների նախաձեռնություններին, իսկ հետո հայտարարեն բոլորովին այլ բան՝ համոզելով, թե իրենք ժողովրդի կողքին են» (Ժող., 7.5.2014):

Պետք է լինի՝ոչ թե նպաստեն իշխանությունների նախաձեռնություններին, այլ արագացնեն միասնական հրավիրելու հարցը:

Այսպիսով՝ ՋԼՄ-ների լեզվին բնորոշ են նախադասությունների կապակցման ոչ կանոնական դրսևորումներ՝ պայմանավորված բառական, քերականական միջոցներով:

Barseghyan Amalya - Connection of the Sentence in the Irregular Expressions in the Language of Mass Media.- The syntactic structure of the sentences, its lexical, grammatical, overtone internal patterns are not always followed in the language of mass media and modern press which are clearly stated in the article. In comparison with the components of a complex sentence, the components of a compound sentence are more independent, and for this reason they are not often so closely connected.

Барсегян Амалия - Сочетание предложений и их ненормативное использование в языке СМИ.- В статье представлена синтаксическая структура предложений, в которых словесные, грамматические, обертональные внутренние закономерности не всегда соблюдаются в языке средств массовой информации, а также в современной прессе. По сравнению с составным компонентом сложного предложения, в сочетанных предложениях составные компоненты более самостоятельны и по этой же причине их связь часто не так уж тесна.

**ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՄԱՆ ՈՉ
ԿԱՆՈՆԱԿԱՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐ ԶԼՄ-ՆԵՐԻ ԼԵԶՎՈՒՄ***

**Բարսեղյան Ամայա
ԳԱԱ լեզվի ինստիտուտ**

Շարահյուսական կապակցություններից է նախադասու-
թյունների կապակցությունը, որն «իր բաղադրիչների սուկական
գումար չէ ոչ կառուցվածքային, ոչ բովանդակային առումներով,
այլ շարահյուսական կառույց է՝ իր քերականական, բառական,
հնչերանգային ներքին օրինաչափություններով»¹:

Ժամանակակից լեզվաբանությունը նախադասությունների
կապակցությունը քննում է թե՛ բարդ նախադասությունների մեջ՝
որպես բաղադրիչների կապակցություն, թե՛ անկախ, ինքնուրույն
նախադասությունների միջև՝ որպես խոսքի հատվածների կա-
պակցում: Խոսքի բաղադրիչ նախադասությունները համեմատա-
բար ավելի ինքնուրույն են, քան թե բարդ նախադասության բա-
ղադրիչները: Խոսքի հատվածների կապակցման մեջ կիրառվում
են ինչպես բարդ նախադասության բաղադրիչներին հատուկ
լեզվական միջոցներ, այնպես էլ բառային, շարահարական և լայն
առումով հնչերանգային այլ կարգի միջոցներ:

Բացի բառական միջոցներից՝ նախադասությունների կա-
պակցումը կատարվում է նրանց արտահայտած մտքի ներքին
կապով, շարադասությամբ, լայն առումով՝ հնչերանգով:

Համառոտակի անդրադառնանք բարդ նախադասության
բաղադրիչների շարահյուսական կապակցման ոչ կանոնական
դրսևորումներին, որոնք տեղ են գտել ԶԼՄ-ների լեզվում:

Դրանք են՝

* Լրաբեր հաս. Գիտությունների, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2014, էջ 200-205:

¹ Աբրահամյան Ս., *Հայոց լեզու. շարահյուսություն*, Ե., 2004, էջ 221:

ա. Ոչ կանոնական դրսևորումներ՝ պայմանավորված շաղկապների և շաղկապական բառերի սխալ գործածությամբ:

Բարդ նախադասության կառուցվածքում համադաս և ստորադաս հարաբերություններն արտահայտվում են բառական միջոցներով (շաղկապներ, հարաբերական բառեր) և շարահարությամբ:

Բարդ համադասական նախադասության (և ոչ միայն համադասական) բաղադրիչ նախադասությունների իմաստային կապը առավել սերտ է լինում գուգադրական շաղկապների դեպքում: Սակայն ՋԼՄ-ների լեզվում (նաև արդի մամուլում) ոչ միշտ է այդ գուգորդումը ճիշտ կատարվում: Ինչպես՝ միավորական հարաբերությամբ կապված բարդ համադասական նախադասության բաղադրիչները, որտեղ չկան հակադրվող եզրեր, հաճախ գործածվում են ոչ միայն... այլ գուգորդումները ոչ միայն... այլև-ի փոխարեն: Օրինակ՝ «Ինքը մտածում է ոչ միայն իր մասին, այլ ամբողջ դերասանների մասին» (դերասանի խոսքից): «Նա ոչ միայն դարի ծնունդն էր, այլ ինքն էր կերտողներից մեկը XX դարի» (կրկ. ֆիլմ): «Ցուցահանդեսը խոսում է ոչ միայն հայ արվեստի մասին, այլ դրա հեղինակի մասին» (լուրեր): «Մենք հպարտանում ենք ոչ միայն շեփոխահարով, այլ ամեն ինչով» (երգչի խոսքից): «Դա ոչ միայն ճամփորդություն է, այլ հոգու ճիչ» («Կանգառ 2-ի համար»): «Նա ոչ միայն Ռուդոլֆոյի կինն է, այլ ամեն բան նրա համաձայնությամբ պետք է լինի» (կրկ. ֆիլմ): «Մեզ մնում է շնորհավորել Բրազիլիայի հավաքականին ոչ միայն գավաթ նվաճելու, այլ հրաշալի խաղ ցուցադրելու համար» (մարզական լուրեր):

Մեկ այլ օրինակում՝ գովազդային տեքստում, ժխտումը վերաբերում է երկրորդական անդամի և չպետք է լինի երկրորդական նախադասության սկզբում: Ինչպես՝ «Հավվում է բերանում, այլ ոչ թե շոգից» (գովազդային տեքստից): Կարծում ենք պետք է լինի՝ Հավվում է ոչ թե շոգից, այլ բերանում: Կամ՝ Հավվում է բերանում, ոչ թե շոգից:

Հայտնի է՝ որոշիչ երկրորդական նախադասությունը գլխավորի հետ հիմնականում կապվում է հարաբերական բառերով՝ որ(ը), ինչպիսի, որպիսի, ինչ, որքան և այլն, որ, թե շաղկապներով, որոնք, գլխավոր նախադասության մեջ ունենալով համապատասխան հարաբերյալներ (ձևական որոշիչներ)՝ կազմում են զուգորդումներ՝ այն... որ (ը), այնպիսի... ինչպիսի, այնքան... որքան և այլն (թեև հնարավոր է նաև առանց հարաբերյալի):

Մինչդեռ ՁԼՄ-ների լեզվում (ինչպես նաև արդի մամուլում) հաճախ որոշիչ երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապվում է ով հարաբերական բառով, եթե որոշվող գոյականն անձ է կամ հատուկ անուն (իհարկե, առանց հարաբերյալի): Ինչպես՝ «Դուք մարդու այն տեսակն եք, ով (փխ.՝ որ) կոչված է ոգեշնչել մարդկանց» (ոստիկանի խոսքից): «Դրանք այն կնոջն են պատկանում, ով (փխ.՝ որ) քեզ հարվածել է» (կրկ. ֆիլմ): «Լոգարանում մենք տեսնում ենք աղջկան, ով (փխ.՝ որ) սափրել է գլուխը» (կրկ. ֆիլմ): «Իմաստուն կարող է լինել յուրաքանչյուր մարդ, ով (փխ.՝ որ) հավատ ունի» (կրկ. ֆիլմ):

Ենթակա երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապվում է հարաբերական դերանուններով և ստորադասական շաղկապներով (որ, թե): Հարաբերյալի դեպքում լինում են հետևյալ զուգորդումները. նա... ով, այն... ինչ, այն... որը, նա... որը և այլն:

Երբ գլխավոր նախադասության ենթական անձ է ցույց տալիս, որպես հարաբերյալ հանդես է գալիս նա դերանունը, իսկ երկրորդական նախադասությունը գլխավորին միանում է ով կամ որ(ը) հարաբերականներով:

Սակայն հեռուստատեսային հաղորդումների ժամանակ լինում են ոչ ճիշտ զուգորդումներ: Ինչպես՝ «Երևի այն (փխ.՝ նա), ով եղել է ցեղասպանության թանգարանում» (լուրեր): «Կյանքում հաղթում է այն (փխ.՝ նա), ով պայքարում է» (ժյուրիի խոսքից):

«Թե շաղկապի գործածության դեպքում ստորադաս նախադասության մեջ կիրառվում են հարցահարաբերական դերանուն-

ներ, ըստ որում գերադաս նախադասության ստորոգյալը կարող է լինել ժխտական կամ հաստատական բնույթի»²:

Ինչպես՝ «Անչափ կարևոր է, որ (փխ.՝ թե) գինին երբ են խմում, ում հետ են խմում» (գովազդ): Ինչպես գիտենք, որ շաղկապը հաստատական, իսկ թե-ն երկբայական իմաստային երանգ է արտահայտում: Ինչպես՝ «Ինձ թվում է, որ (փխ.՝ թե) մարդիկ սպանվում են իմ պատճառով (կրկ.՝ ֆիլմ):

Ստորոգելիական երկրորդական նախադասությամբ կապակցության գլխավոր բաղադրիչ նախադասության մեջ գործածվում է ձևականորեն արտահայտված ստորոգելի հարաբերյալի դերով: Դրանք ցուցական դերանուններ են, որոնք հարաբերական դերանունների ու շաղկապների հետ կազմում են զուգորդումներ՝ նա.... ով (որ), այն...ինչ (որ), այնպես... ինչպես, այնքան... որքան և այլն:

Երբ գլխավոր նախադասության ենթական իրի անուն է, որպես հարաբերյալ հանդես է գալիս այն ցուցական դերանունը, իսկ երկրորդական նախադասությունը գլխավորին միանում է ինչ կամ որ շաղկապով:

Այդ զուգորդումները երբեմն ճիշտ չեն կատարվում հեռուստալեզվում: Ինչպես՝ «Պատճառը նա է (փխ.՝ այն է), որ մարդ չի կարողանում հաշվարկ անել» (բանաստեղծի խոսքից): «Ամբողջ իմաստը նա է (փխ.՝ այն է), որ դուք բուժվում եք» («Մարդկային գործոն»): «Դրական ազդեցությունը նա է (փխ.՝ այն է), որ երեխան դրական լիցքեր է վերցնում շրջապատից» («Ազատ գոտի»): «Սա նա է (փխ.՝ այն է), ինչ պետք է մեզ» (կրկ.՝ ֆիլմ): «Ամենասահավորը նա է (փխ.՝ այն է), որ գիշերը կռիվ սարքեց մեր տանը» (ֆիլմ):

Օտարաբանության դրսևորում պետք է համարել այն հարաբերյալի փոխարեն նրանում -ի գործածությունը: Ինչպես՝ «Խնդիրը նրանում է (փխ.՝ այն է), որ վերջին տարիներին ես գիրացել եմ» (գովազդային տեքստից):

² Նույն տեղում, էջ 147:

Ուղիղ խնդիր երկրորդական նախադասությամբ կապակցությունը գլխավոր բաղադրիչ նախադասությանը կապվում է ոչ թե որպեսզի նպատակային շաղկապով, այլ որ մեկնական շաղկապով: Ինչպես՝ «Ես քեզ էլ եմ թույլ տալիս, որպեսզի (փխ.՝ որ) խոսես» (հաղորդավարի խոսքից): «Ամանորին ցանկանում եմ, որպեսզի (փխ.՝ որ) դուք հոգս չունենաք, սիրելի՛ երեխաներ: Ցանկանում եմ, որպեսզի (փխ.՝ որ) նոր հաջողություններ լինեն» (պատգամավորի խոսքից): «Ուզում եմ, որպեսզի (փխ.՝ որ) ոտքս խեղձ լինի ձեր տանը» («Տնից տուն»): «Ուզում եմ, որպեսզի (փխ.՝ որ) երջանիկ լինես: Ուզում եմ, որպեսզի (փխ.՝ որ) հաջորդ անգամ բալիկ լինի գրկումդ» (ն.տ.): «Ես ուզում եմ, որպեսզի (փխ.՝ որ) մենք լքենք տարածքը» (հաղորդավարի խոսքից):

Հիմունքի, պատճառի և ձևի պարագա երկրորդական նախադասությունները գլխավորին չպետք է կապվեն որպեսզի շաղկապով: Ինչպես՝ «Իրավական հիմքերն էլ թույլ են տալիս, որպեսզի (փխ.՝ որ) մարդուն վարչական պատասխանատվության ենթարկել» (լուրեր): «Բայց սառույցի կտորները շատ մեծ են, որպեսզի (փխ.՝ որ) անցնեն կամրջի տակով» (կրկ. ֆիլմ): «Ինձ հետ բավական շատ բաներ են պատահել, որպեսզի (փխ.՝ որ) ես վախենամ ճակատագրից» (կրկ. ֆիլմ): «Ես այնպես էի արել, որպեսզի (փխ.՝ որ) ոչ ոք չիմանա» (կրկ. ֆիլմ):

Ժողովրդախոսակցական ոճի դրսևորում պետք է համարել բա, քանց թե (բարբառային) շաղկապների գործածությունը իսկ-ի և քան թե-ի փոխարեն: Ինչպես՝ «Եթե դու չլինես դրա կրողը, բա ո՞վ պիտի լինի դրա կրողը» (ֆիլմ): «Չհասկացա, որ բոլորդ խարջին ձեր (ձեզ) հետ տանեք, բա մենք ի՞նչ ենք խմելու» (գովազդային տեքստից): «Պահանջները ավելի մեծ են, քանց թե մեր հնարավորությունները» (ծխախոտագործի խոսքից):

Մտահոգիչ են նաև շաղկապների գործածության հետևյալ դեպքերը. «Քանի որ շատ մակարոն ես ուտում, ապա (փխ.՝ դրա համար էլ հիմունքի պարագա կապակցություն) այստեղ կա մակարոն պատրաստելու խոհանոց» (կրկ. ֆիլմ): Պետք է խուսա-

փել նույն նախադասության մեջ շաղկապների կուտակումից: Ինչպես՝ «Մակայն քանի որ (փխ.՝ քանի որ) պատվերները շատ են, նավաշինարանը ծանրաբեռնված է» (կրկ. ֆիլմ):

բ. Ոչ կանոնական դրսևորումներ պայմանավորված շարահարությամբ և շարադասությամբ:

Նախադասությունների կապակցման բուն քերականական միջոցներից են շարահարությունը և շարադասությունը:

Նախադասությունների կապակցման շարահարության դեպքում շարահյուսական կապն արտահայտվում է առանց բառական միջոցի: Այստեղ դեր ունեն բաղադրիչ միավորների միջև փոքրիկ դադարը, հնչերանգը, շարադասությունը, իմաստը:

Նաև շարահարության դեպքում սովորաբար լինում են կապակցական այլ օժանդակ միջոցներ՝ ստորոգյալի ժամանակը, դերանուններ, գոյականներ և այլ խոսքի մասի պատկանող բառեր:

ԶԼՄ-ների լեզվում՝ հատկապես կրկնօրինակված ֆիլմերում, հանդիպում ենք նախադասությունների կապակցման ոչ ճիշտ շարահարության դեպքերի: Ինչպես՝ «Կարևոր է, որ աշխատանքը կատարված է, կատարված է մեծ սիրով, և ինքը (փխ.՝ այն) իր նպատակին ծառայում է» («Կանգառ 2-ի համար»):

Նախադասությունների կապակցման բուն քերականական միջոցներից է նաև շարադասությունը, որը շատ կարևոր է բարդ նախադասության բաղադրիչ մասերի իմաստային փոխհարաբերության հարցում:

Հեռուստատեսությամբ հեռարձակվող կրկնօրինակված ֆիլմերում (և ոչ միայն կրկնօրինակված) հաճախակի են հանդիպում շարահյուսական այնպիսի կառույցներ, որոնք այլ լեզուներից նույնությամբ են ընդօրինակվում և հայերենում ընդունելի չեն:

Շարադասության փոփոխությունը հանգեցրել է բարդ նախադասության իմաստային քերականական փոխհարաբերության փոփոխության՝ երբեմն հասնելով մտքի աղավաղման: Շարադասության այդ դերի անտեսումը կարելի է տեսնել հետևյալ օրինակներում.

«Եթե Ձեր խոստումը չկատարեք, ապա քեզ և քո տղաներին կանենք շան մանր կտրտած կեր» (կրկ. ֆիլմ) (փխ. մանր կտրտած շան կեր): «Նա որոշել է նախկին իր ունեցած կնոջ երեխաների հետ ազատ ժամանակ անցկացնել» (կրկ. ֆիլմ) (... փխ. իր նախկին կնոջից ունեցած երեխաների հետ ազատ ժամանակ անցկացնել): «Այդ մարդը գնաց պոչը վախեցած շան պես իրեն քաշած» (կրկ. ֆիլմ) (փխ. վախեցած շան պես պոչը իրեն քաշած): «Ըստեղ մեծ մտով պերաշկիներ կա» (... փխ. այստեղ մտով մեծ կարկանդակներ կան):

Շարադասության խախտում է նկատվում նաև հեռուստագովազդային նյութերում: Ինչպես՝ «Հրավիրում ենք բոլոր հանրապետության բնակիչներին (փխ. հանրապետության բոլոր բնակիչներին), որպեսզի ներկա լինեն այս միջոցառմանը»: «Խանութները ողողված են անորակ մազերի խնամքի միջոցներով» (փխ. ...մազերի խնամքի անորակ միջոցներով):

Բերենք ոչ թարգմանությամբ օրինակներ, որտեղ նախադասության շարադասության խախտումը հանգեցրել է նախադասության մտքի աղավաղման:

Ինչպես՝ «Ինչն է պատճառը, որ Հայաստանում այնքան շատ չինական երեխայի խաղալիքներ կան» («Կենդանի մատյան») (փխ. երեխայի՝ չինական այնքան շատ խաղալիքներ կան): «Իտալիա է գնում, որովհետև այնտեղ կա ավելի մեծ մամուլի ազատություն» (մարզական լուրեր) (փխ. ... այնտեղ կա մամուլի ավելի մեծ ազատություն):

Շարադասության ոչ ճիշտ ձևեր կան նաև պարզ նախադասություններում:

Բերենք օրինակներ հեռուստաթերից.

«Մեր հարաբերությունները ենթարկվում են ամրության փորձարկման, հասկանո՞ւմ ես» (ֆիլմ) (փխ. Մեր հարաբերությունների ամրությունը ստուգվում է (կամ... փորձարկվում է): «Եվ կիսվել հարուստ իր երաժշտական փորձի վրա» (լուրեր) (փխ. Եվ կիսվել իր երաժշտական հարուստ փորձի վրա): «Կլսենք մի շարք այլ

վաղուց մոռացված ավանդույթների մասին» (լուրեր) (փխ.՝ «Կլսենք վաղուց մոռացված մի շարք այլ ավանդույթների մասին): «Մարդ կա ակտիվ տարածքներում զբաղվում է քարոզչական աշխատանքով» (քարոզարշավ) (փխ.՝ Մարդ կա տարածքներում ակտիվ զբաղվում է քարոզչական աշխատանքով): «Հարցնենք բոլոր գործին առնչվող մարդկանց» (ֆիլմ) (փխ.՝ գործին առնչվող բոլոր մարդկանց): «Տեսանյութը կհետաքրքրի շատ մեր հեռուստադիտողների» (հաղորդավարի խոսքից) (փխ.՝ մեր շատ հեռուստադիտողների):

Այսպիսով՝ ՁԼՄ-ների լեզվում (ինչպես նաև արդի մամուլում) նախադասությունների կապակցությունը, ինչպես նաև նրանց բաղադրիչ նախադասությունների կապակցությունը միշտ չէ, որ ճիշտ են իրենց բառական, քերականական, հնչերանգային ներքին օրինաչափություններով: Մինչդեռ ռադիոյով և հեռուստատեսությամբ առաջին հերթին պետք է հնչի մաքուր հայերեն:

Барсегян А.- Сочетание компонентов сложного предложения и их ненормативное использование в языке сми - В языке средств массовой информации, а также в материалах современной периодики имеет место частое употребление неправильных языковых форм, связанное с ошибочным использованием союзов и союзных слов в сложном предложении. Нередки случаи нарушения грамматической и смысловой связи синтаксических компонентов, а также нарушения порядка слов.

Barseghyan A.- Connecting the components of a complex sentence and their irregular forms in the language of mass media- The syntactic structure of the sentence, its lexical, grammatical, intonation, internal patterns are not always observed in the language of mass media and modern press. These irregularities include irregular forms, related to the incorrect use of connectives and word order.

ՇԱՐԱՀՅՈՒՄԱԿԱՆ ՀՈՄԱՆԻՇՈՒԹՅԱՆ ՉՍՓԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

Թեյյան Լեոնիդ
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Հումանիշության երևույթը լեզվաբանական աշխատություններում մեկնաբանվում է որպես լեզվական նշանի երկու կողմերի՝ նշանակիչի և նշանակելիի կամ արտահայտության և բովանդակության պլանների, անհամաչափ համապատասխանության դրսևորում: Անհամաչափությունը (ասիմետրիան) հատուկ է լեզվի էությանն ընդհանրապես, առկա է նրա և՛ համակարգային, և՛ կառուցվածքային և՛ գործառական ոլորտներում, միավորների հարացուցային և շարակարգային հարաբերությունների մեջ: Հարացուցային պլանում նշանակիչի և նշանակելիի անհամաչափ հարաբերությունը ծնում է նշանի իմաստաբանական բնութագիրը ձևավորող այնպիսի երևույթներ, ինչպիսիք են բազմիմաստությունը, համանունությունը, հոմանիշությունը, սինկրետիզմը, լրացուցիչ բաշխման հարաբերությամբ կապված՝ արտահայտության գուգահեռ ձևերը: Հարաբերության այսպիսի անհամաչափությունը ներհատուկ է լեզվական բոլոր մակարդակների միավորներին՝ բառային, ձևաբանական, շարահյուսական, ինչպես նաև միապլանային միավորներին, եթե նկատի առնենք ուղղագրական-ուղղախոսական կարգի իրողությունները:

Ձևի և բովանդակության նշված կարգի փոխհարաբերությունների քննությունը իմաստաբանության բուն խնդիրն է, և բնական պետք է համարել, որ դրանք առավել խորությամբ ուսումնասիրվել են բառային իմաստաբանության շրջանակում: Հումանիշությունը լեզվական միավորների հարաբերության տեսակ է, որ բնութագրվում է դրանց նշանակությունների լրիվ կամ մասնակի

* «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, էջ 259-261:

նույնությամբ: Այս ընդհանուր սահմանումը պետք է վերաբերի արտահայտության և բովանդակության պլաններով օժտված բոլոր լեզվական միավորներին. յուրաքանչյուր դեպքում, սակայն, հոմանիշային, ինչպես նաև ձևախմբատային այլ կարգի հարաբերությունները պետք է հանդես բերեն դրսևորման յուրահատկություններ՝ կապված նախ և առաջ բառային և քերականական իմաստների յուրահատուկ բնույթի հետ: Չմտնելով բառային իմատաբանության խորխորատները՝ նշենք հոմանիշների քննության ոլորտում համընդհանուր ընդունելության արժանացած որոշ դրույթներ: Բառային հոմանիշները բաժանվում են համանիշ և նույնանիշ տեսակների: Նույնանիշները սակավաթիվ են. ցանկացած համատեքստում իրար փոխարինող բառերը ժամանակի ընթացքում որոշակիորեն տարբերակվում են: Համանիշների միջև առկա են լինում իմաստային, ոճական, գործառական բնույթի տարբերություններ:

Կարևոր է նկատի առնել, որ հոմանիշային հարաբերությունը բառերի իմաստային կառուցվածքը բաղադրող հարաբերություններից մեկն է միայն. հոմանիշային շարքում միավորված բառերից յուրաքանչյուրը նաև այլ կարգի հարաբերությունների մեջ է իմաստային տվյալ դաշտը կազմող բառերի հետ, և այդ հարաբերություններից էլ ձևավորվում է տվյալ բառի իմաստը: Անգլիացի լեզվաբան Ջոն Լայոնգի ձևակերպմամբ «այն, ինչ մենք անվանում ենք բառային միավորի իմաստ, իրենից ներկայացնում է իմաստային հարաբերությունների այն ողջ բազմությունը (ներառյալ հոմանիշությունը), որը առկա է նրա և լեզվի բառապաշարի այլ միավորների միջև»¹: Բառի իմաստային այդ նկարագիրը բաղադրող հիմնական հարացուցային հարաբերություններից է ենթանունությունը (հիպոնիմիան): Սա իմաստային դաշտի ստորակարգությունը ներկայացնող հարաբերություն է, որը հիմնված է հասկացությունների սեռատեսակային կապերի վրա: Հմմտ.,

¹ Дж. Лайонз, Введение в теоретическую лингвистику, М., 1978, с. 453.

օրինակ, կարմիր, կապույտ, կանաչ.... բառերը, որոնք «գույն» սեռային հասկացության ենթանուններն են: Ենթանունների իմաստային կապը միակողմանի է («Վարդը ծաղիկ է» ասույթը չի կարող փոխարինվել «Ծաղիկը վարդ է» ասույթով): Հոմանիշ բառերը փաստորեն փոխադարձ փոխարինելիության հարաբերությամբ կապված ենթանուններ են: Ենթանվանական դաշտի հիմնաբառը կամ գերիշխող անդամը («հիպերոնիմը») տվյալ սեռային հասկացությունն արտահայտող բառն է, որը մի աստիճան բարձր է ենթանուններից՝ ի տարբերություն հոմանիշային շարքի հիմնաբառի, որը մտնում է նույն այդ շարքի մեջ: Ըստ էության ենթանվանական դաշտի յուրաքանչյուր անդամ իր հերթին կարող է մաս կազմել մի հոմանիշային շարքի, որի անդամները դարձյալ տեսակային հարաբերությամբ կապված կլինեն «հիպերոնիմի» հետ. հմտ. կապույտ, լաջվարդ, լուրթ.... «գույն»:

Իսկ այժմ փորձենք անդրադառնալ սույն զեկուցման մեջ մեզ հետաքրքրող հիմնական խնդրին. Հնարավո՞ր է արդյոք բառային իմաստաբանության՝ վերևում ներկայացված կադապարը կիրառել նաև շարահյուսական հոմանիշների քննության ընթացքում:

Լեզվի շարահյուսական միավորները որոշակի կառուցվածք են ներկայացնում, և դրանց իմաստային կողմի գնահատականը, բնականաբար, սկզբունքորեն տարբեր է բառիմաստի գնահատումից: Ծարահյուսական միավորը որոշակի կադապարով է կառուցվում, որը կարող է բազմաթիվ իրացումներ ունենալ: Դրանց միջև առկա իմաստային հարաբերությունների բացահայտումը հաճախ տարբերությունների առիթ է հանդիսացել: Մասնավորապես շարահյուսական հոմանիշության երևույթը սահմանելիս մասնագիտական գրականության մեջ, այդ թվում նաև հայերենի նյութը քննող աշխատանքներում², առաջ են քաշվել տարբեր չափանիշներ

² Օրինակ՝ Ն.Ա. Պառնասյան, Ծարահյուսական հոմանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1970, Լ. Գ. Թեյլան, Ժամանակային և պատճառահետևանքային հարաբերություններ արտահայտող բարդ նախադասությունների հոմանիշ

ու մոտեցումներ: Առավել հաճախ տարընթաց մեկնությունների առարկա են դարձել տեսական հետևյալ խնդիրները.

1. Ի՞նչը պետք է համարվի շարահյուսական հոմանիշության պայման՝ կառույցների արտահայտած նյութական բովանդակության, թե՞ դրանց քերականական իմաստների ընդհանրությունը: Այսինքն, կարո՞ղ են հոմանիշ համարվել նույն բովանդակությունը տարբեր բառակազմերով (հոմանիշ կամ հականիշ բառերի գուգորդումներով) արտահայտող նախադասությունները (օրինակ՝ «Նա ուտում է տատիկի եփած ճաշը» և «Նա ճաշակում է մեծ մոր պատրաստած կերակուրը», «Նա միշտ ներկա է լինում դասերին» և «Նա երբեք չի բացակայում դասերից» և այլն): Ակնհայտ է, որ կառույցների շարահյուսական իմաստների միջև առկա հարաբերությունը սահմանելու նախապայման պետք է համարվի դրանց բառային կազմերի նույնությունը, այլապես բառային և շարահյուսական հոմանիշության սահմանները հնարավոր չի լինի տարազատել: Այս պայմանը կարող է խախտվել նյութական իմաստից գուրկ բառերի փոխարինումների հաշվին, եթե դրանք նույն վերացական-քերականական նշանակությունն են արտահայտում (հմմտ., օրինակ, Գ. Ջահուկյանի առանձնացրած ընդհանրական կարգերից կազմի կարգի արտահայտությունը համադասական շաղկապների կամ համապատասխան կապերի միջոցով. «Գրիգորը և Հակոբը» և «Գրիգորը Հակոբի հետ միասին», «Ոչ թե Գրիգորը, այլ Հակոբը» և «Գրիգորը Հակոբի փոխարեն» և այլն³): Նույն այս չափանիշով են սահմանվում նաև հոմանիշային կապերը բարդ նախադասությունների միջև. այստեղ էլ բաղադրիչ մասերի բառային կազմերի նույնության պայմաններում հոմանիշությունը հանգում է բաղադրիչ նախադասությունների միջև առկա իմաստային

կառույցները ժամանակակից հայերենում, Լեզվի և ոճի հարցեր, IX, Երևան, 1985, էջ 3-126:

³ Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Երևան, 1974:

հարաբերության նրբերանգներին, որոնք արտահայտվում են կապակցության միջոցների (շաղկապներ, շարահարություն) կամ կապակցության բնույթի (համադասություն, ստորադասություն) տարբերություններով:

2. Շարահյուսական կառույցների միջև իմաստային հարաբերության ձևավորման վրա ի՞նչ ազդեցություն ունեն դրանք կազմող բառերի (հատկապես բայ-ստորոգյալների) քերականական կարգերի, բարդ նախադասությունների դեպքում՝ հատկապես մասերի եղանակաժամանակային բնութագրերի տարբերությունները: Այսինքն, իմաստային ի՞նչ կարգի հարաբերություն է առկա, օրինակ, «Գնում է տուն», «Գնաց տուն», «Կգնա տուն» և այս կարգի պարզ կամ «Եթե հանդիպեմ, կասեմ», «Եթե հանդիպեի, կսեսի» և այս կարգի բարդ նախադասությունների միջև: Ակներևաբար սրանք՝ հոմանիշ կառույցներ չեն (սրանց իմաստային կապի մասին՝ ստորև), սակայն պետք է նկատի առնել, որ ձևաբանական տարբերությունները որոշակի համատեքստերում կարող են չեզոքանալ և այդպիսով գոյացնել հոմանիշ միավորներ (հմմտ. «Վաղը մեկնում եմ» և «Վաղը մեկնելու եմ», «Մարդը մահկանացու է» և «Մարդիկ մահկանացու են» և այլն):

3. Ընդունելի՞ է արդյոք տարամակարդակ միավորների (ասենք՝ պարզ և բարդ նախադասության, նախադասության և բառակապակցության, բառակապակցության և բառի և այլն) միջև հոմանիշային առնչության գոյությունը, թե՞ հոմանիշության պարտադիր պայման պետք է համարել կառուցվածքների զուգահեռությունը՝ բացառելով նաև համադասական և ստորադասական, պատմողական և հարցական և այլ կարգի միավորների հոմանիշությունը (ինչպես որ վարվում է, օրինակ, ռուս լեզվաբան Ի. Ի. Կովտոնովան⁴): Հարցը կարելի է նաև այլ կերպ ձևակերպել. հոմանիշության չափանիշ կարելի է համարել միավորների փո-

⁴ St 'u И. И. Ковтунова, О синтаксической синонимике, в кн. Вопросы культуры и речи, вып. I, М., 1955:

խաղարձ փոխակերպելիության հնարավորությունը (օր.՝ Հակոբը, որ լրագիր է վաճառում-լրագիր վաճառող Հակոբը-լրագրավաճառ Հակոբը և այլն): Նշենք, որ մասնագիտական գրականության մեջ գերիշխող է այս կարգի միավորները հոմանիշ համարելու տեսակետը:

Շարահյուսական հոմանիշության երևույթի տարբեր մեկնաբանություններն ընդհանուր առմամբ պայմանավորված են շարահյուսական միավորի արտահայտության և բովանդակության պլանների, կառուցվածքային վերացական կաղապարների և դրանց խոսքային իրացումների փոխհարաբերության տարբեր պատկերացումներով: Արտահայտվել են նաև շարահյուսական կառույցների հոմանիշությունը և այդ տերմինի գործածության նպատակահարմարությունն ընդհանրապես կասկածի տակ առնող տեսակետներ⁵:

Թեև լեզվի բառային և շարահյուսական միավորների իմաստային կառուցվածքների քննությունը տարբեր սկզբունքներ է ենթադրում, մենք կարծում ենք, որ դրանց միջև գոյություն ունեցող իմաստային հարաբերությունները ներկայացնելիս կարելի է պահպանել մոտեցման ընդհանրությունը: Մասնավորապես շարահյուսական մակարդակում ևս կարելի է առանձնացնել բառային իմաստաբանության մեջ ընդունված՝ ենթանվանական (հիպոնիմիական) և հոմանիշական դաշտերին զուգահեռ իմաստային դաշտեր: Ենթանվանական դաշտին շարահյուսական մակարդակում համապատասխանող իմաստային դաշտը կոչում ենք ստորակցական: Սրա գերիշխող (դոմինանտ) անդամ կարելի է համարել տվյալ միավորի կառուցվածքային կաղապարը, որն իր կոնկրետ իրացումների հետ կապված կլինի քերականական իմաստների

⁵ St 'u, օրինակ, А. П. Чуланова, К вопросу о целесообразности и значении термина “Синтаксическая синонимия”, Вестник Томского государственного университета, № 320, 2009.

սեռատեսակային հարաբերությամբ: Ստորակցական դաշտի անդամ միավորները բառակազմերի նույնության պայմաններում տարբերվում են քերականական կարգային իմաստներով՝ եղանակ, ժամանակ, սեռ, հոլով և այլն, որոնք, ինչպես նշեցինք, որոշակի համատեքստերում կարող են չեզոքանալ և առաջացնել հոմանիշներ: Ստորակցական դաշտի անդամներից յուրաքանչյուրը միաժամանակ մտնում է նաև հոմանիշների շարքի մեջ, որի անդամները տարբերվում են կառույցի քերականական իմաստի նրբերանգները ձևավորող կապակցության միջոցներով և ստորակցական դաշտի գերիշխող անդամի նկատմամբ գտնվում են նույն տեսակային հարաբերության մեջ:

Леонид Телян- О критериях синтаксической синонимии- В статье сделана попытка определения критериев синтаксической синонимии в общем контексте определения явления синонимии как отражения асимметричного соответствия двух сторон языкового знака. Следуя принципам выявления лексических синонимов, различаются два типа отношений между членами парадигмы реализаций данной синтаксической модели (конструкции)- гипонимическое и синонимическое. Указываются допустимые случаи нарушения идентичности лексического состава и структурного параллелизма синонимических синтаксических единиц.

Leonid Telyan.- The Criteria of Synonymousnes at Syntactic Level- In the article an attempt is made to define the criteria of syntactical synonymy in the general context of defining the phenomena of synonymy as a reflection of asymmetric coincidence of the two sides of the language sign. According to the principles of discovering lexical synonyms, two types of relations between the paradigm members of the realization of the given syntactical model (construction): hyponymous and synonymous are distinguished. Permissible cases of the disruption of lexical content and structural parallelism of synonymous syntactical units are indicated.

**ՈՉ ԳՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՎՈՒՄ՝
/Ժարգոնային բառեր, գոեհկաբանություններ/**

Ղամոյան Լուսինե
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Խոսակցական լեզուն բանավոր հաղորդակցման հիմնական միջոցն է: Անշուշտ, պետք է տարբերակել գրական լեզվի բանավոր ձևը առօրյա խոսակցական լեզվից: Այս երկու ըմբռնումների միջև էական տարբերություն կա: Եթե գրական բանավոր լեզուն ունի որոշակի համակարգ և էապես չի տարբերվում գրավոր գրականից, ապա առօրյա-խոսակցական լեզուն մեր լեզվի զարգացման այժմյան փուլում ներկայանում է որպես մի չափազանց բարդ, հեղիեղուկ սահմաններ ունեցող և տարատեսակ իրողություններով հանդես եկող մի համակարգ:

Վերջին ժամանակներս հաճախակի է խոսվում հայոց լեզվի գործառության ոչ բավարար վիճակի մասին: Ամեն օր հայերենում արձանագրվում են բազում շեղումներ, խախտումներ, տարբեր լեզվական իրողություններ:

Մոյն հողվածում մեր ուսումնասիրության նյութն ենք դարձրել Երևանի խոսակցական լեզվում հաճախակի գործածվող ոչ գրական բառերը:

Ունենալով բառակազմական հրաշալի հնարավորություններ՝ ժամանակակից հայերենը կարծես չի բավարարում լիարժեք հաղորդակցության պահանջները: Դրա փոխարեն այսօր առաջ է եկել համապատասխան լեզվական մի շերտ՝ որոշակի բառապաշարով, առոգանությամբ: Մեր հասարակությունը (հատկապես երիտասարդությունը) սկսել է գրեթե բոլոր իրադրություններում

¹ Հետազոտությունն իրականացվում է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ 13YR-6B0006 «Երևանի խոսակցական լեզուն» գիտական թեմայի շրջանակներում:

* «Ջահուկյանական ընթերցումներ: Միջազգային գիտաժողովի զեկուցումներ», Եր., 2014, «Ստողիկ» հրատ., էջ 241-245:

խոսել առօրյա-խոսակցական հայերեն, հատկապես հասարակա-
բանություններով (*քսեռքսնոց, բերնից, կայնել, հավքրվել, մոռնալ, հավնել, հասկընալ, վախցնել, նստըցնել, խոսըցնել, պատկերցնել, չոքըցնել, իրոքից, թեթնի մեջ, արագի մեջ, շուտի մեջ, ճշտով, լրջով* և այլն): Հաճախակի են հնչում նման դիմելաձևեր՝ *ախչի, արա, բռատ, ջիգյար, կյանք//կյանքուլ, ազիզ, մուրթ, արա, ապե, իմ անուշ ախպեր, մեռնեմ կյանքիդ, ցավդ տանեմ* և այլն:

Այս ամենի հետ մեկտեղ գրական լեզու է մուտք գործում, այսպես կոչված, ժարգոնային հայերենը: *Ճարգոնային, անհարկի բառերը*² գրական լեզվից դուրս են և ցածր ոճի արտահայտություններ են, դիտվելով իբրև բացասական երևույթի դրսևորում՝ մերժելի են, ունեն ժամանակավոր խոսակցական բնույթ (հները մոռացվում են, երևան են գալիս նորերը), հաճախ օգտագործվում են ուրիշներին անհասկանալի լինելու նպատակով: Նման բառեր են հաճախ գործածում *դեռահասները՝ գողական գնալ, գազան կինո, դզոդ (լավ), ջոզել, հաբոզել (լկտիանալ), տուֆտել (անկապ խոսել), բոց ա (արտասովոր, տարօրինակ, ինքնօրինակ, յուրահատուկ), այդպես նաև՝ թույն ա (թույն բառի «շատ լավ» իմաստով տարբեր կիրառությունները այսօր փոքրից մեծ օգտագործում են՝ թույն կինո, թույն աղջիկ, թույն մաշնա, թույն շոր* և այլն): *Դպրոցականների, ուսանողների* բառապաշարում ժարգոնային բնույթ ունեն, օրինակ, հաճախակի գործածվող բառերի կրճատ ձևերը՝ *անզլ* (անզլերեն), *աշխարհ* (աշխարհագրություն), *բնագ* (բնագիտություն), *թվար* (թվաբանություն), *պատմ* (պատմություն), *մագ* (մագնիտոֆոն), *ժամո* (ժամադրություն), *շպո* (ծածկաթերթիկ) և այլ բառեր: Երիտասարդները հաճախ են գործածում նման բառեր, ինչպես՝ *ֆոցնել* (խաբել), *ցրել* (գողանալ), *բքել* (շատ ծխել), *դուխով*

² *Ճարգոնը* ֆրանսերեն բառ է և նշանակում է տվյալ հասարակական խմբի կամ ուրիշ խմբակցության ընդհանուր լեզու, որը տարբերվում է ընդհանուր լեզվից իր յուրահատուկ բառերով ու արտահայտություններով:

(համարձակ), *գեղազավո* (չափազանց տգեղ), *լոք ա* (պարապություն), *ֆագոտ* (անկայուն մարդ) և այլն:

Թեև մեր հասարակությունը մերժում է ժարգոնը այն պարզ գիտակցմամբ, որ մեր օրերում այն կրողների մեծ մասը կրթական ցածր մակարդակ ունի: Յուրաքանչյուր մարդ, ով գիտելիքների զգալի պաշար է ստանում՝ հասնելով ինքնագիտակցության մի որոշակի աստիճանի, փորձում է խուսափել ժարգոնից, սակայն այսօր շատերն են խոսում խոսակցական ժարգոնախառը լեզվով, և ամենից ցավալին այն է, որ ժարգոնային արտահայտությունները խորթ չեն նաև իգական սեռի ներկայացուցիչներին:

Ժարգոնին բնորոշ են՝ *ա) բառային նոր իմաստ*, ինչպես՝ *խոտ* (հիմար), *ծախել* (մատնել), *ծախվել* (մատնվել), *կոշկվել* (վատ դրության մեջ ընկնել, դժվարության հանդիպել), *կոտրել* (հեղինակազրկել), *չորել* (կոպտել), *քաշել* (վնասել), *արյուն վերցնել* (զզվացնել), *գծերից ընկնել* (նախկին հեղինակությունը կորցնել), *կուտ տալ* (խաբել, համոզել), *ձև բռնել* (իրեն ներկայացնել ավելին, քան իրականում, ձևանալ), *յուղ վառել* (անիմաստ խոսել), *բ) օտար բառերի անկայություն*, ինչպես՝ *կառոչի* (մի խոսքով, կարճ ասած), *օտիդո* (ամբողջությամբ), *չեքեզ* (միջոցով), *վաժնի* (կարևոր), *վոռձի* (կարծես թե), *ուժե* (արդեն), *տուտժե* (իսկույն), այդպես նաև՝ *դավայ*, *վեշնի*, *պոռստը*, *կանկոռտնի*, *մաշնա*, *ժալետչիկ* և այլն, *գ) յուրահաստուկ կապակցություններ՝ անկախ մայլա*, *գազ տված*, *թաղի գող*, *հավայի բազար*, *յանը տարած*, *քյալեն թափած* և այլն:

Անժխտելի է այն փաստը, որ ցանկացած լեզվում էլ գոյություն ունեն գոեհկարբանություններ ու ժարգոնային տարրեր, որոնք ձևավորվում են տարիների ընթացքում: Մակայն Հայաստանում այսօր, շատ ցավալի է, մի հոծ խումբ ժարգոնը դարձրել է «հարազատ լեզու»: Դա խրախուսելի չէ և՛ դաստիարակչական, և՛ առավել ևս գեղագիտական առումներով: Մա լուրջ խնդիր է բարեկիրթ հասարակություն ձևավորելու ճանապարհին:

Ժարգոնային բառերի մեջ կան բազմաթիվ բայական հարադրություններ, որոնց ոչ բայական բաղադրիչը հիմնականում

օտար բառ է, ինչպես՝ *աբառոտկա խլել (պատասխանել), աղալժենի անել (զիջել), աչոտ տալ (հաշիվ տալ), ատկազ գալ (հրաժարվել), գռուզիտ անել (հոգեբանական, բարոյական կամ ֆիզիկական ճնշում գործադրելով՝ մեկին դրդել ինչ-որ քայլի), դավադիտ անել (ձանձրացնել), դուխից ընկնել (վհատվել), զաստավիտ անել (ստիպել), ժայետ անել (ափսոսալ), լումկա անել (շփոթեցնել), կայֆավատ ըլնել (ծաղրել), կուռսի ըլնել (տեղյակ լինել), նակազատ անել (պատժել), մանթո մնալ (շփոթվել), մառոզ անել (ուշադրություն գրավել), մուտիտ անել (ստել, խաբել), նառոշնի անել (դիտմամբ անել), պալիտ ըլնել (բռնվել), պոիզնաստ գալ (խոստովանել), վալնավատ ըլնել (անհանգստանալ), վանյատ անել (վատ հոտ արձակել), վիռուչատ անել (փրկել, օգնել), տոշկա բոնել (ծաղրել), ցեպիտ անել (շրջապատել), ուզավարիտ անել (համոզել), ֆագերը գցել (հունից դուրս գալ) և այլն:*

Ժարգոնի տարածմանը լայնորեն նպաստում է նաև հեռուստատեսությունը, որը թեև կոչված է բարձրացնելու հասարակության գեղագիտական մակարդակը, սակայն երբեմն ցածրորակ, երբեմն գոեհիկ հեռուստահաղորդումների և հեռուստասերիալների միջոցով ներկայացվող «գողական» աշխարհի քրեական տարրերին փորձում են ընդօրինակել պատանիները. օգտագործելով նրանց հատուկ բառապաշարը՝ կարծում են՝ դրանով ինքնատիպ են դառնում, ինչպես՝ *ատեցնյակ, ախպերնյակ, ընգերնյակ, պտա ուտաս, պտա խոսաս, հլա բոնա դրան* և այլն:

Երևանի խոսկացական լեզվում գործածվող ոչ գրական տարրերից են նաև *գոեհկարանությունները*: Դրանք բացասական երանգ ունեցող, հանրության կողմից կոպիտ, գոեհիկ ճանաչված բառերն ու արտահայտություններն են, հիմնականում արհամարհական, անարգական, հայհոյական բառերը, ինչպես՝ *քյալ, խղր, տուֆտա, քնձի, չմո* (արժանապատվությունից զուրկ): Այս բառերը ևս գրական լեզվի նորմից դուրս են և բնորոշվում են հասարակացման, պարզեցման, կոպտության երանգներով: Դրանք հատուկ են առօրյա բարբառախառն խոսակցական լեզվին, օրինակ

զխտկվիր, ռեխդ փակիր, դանդալոջ, շնթոել, լակել, խժոել, ոնդել, գարհումար ու չոռ և այլն:

Որքան էլ ցավալի է խոստովանել, մեր օրինակներն աննկատ ձայնագրությունների միջոցով գրառել ենք մեզ շրջապատող պատանիների և երիտասարդների խոսքից, որ չգիտես՝ դրանք հասարակաբանությունն են, ժարգոն, թե՛ գոեհկաբանություն. թերևս բոլորի անհաջող միասնությունն են, որոնք չափազանց տգեղ են դարձնում խոսքը: Այսպես՝ եզոտ (ուժեղ, սպորտային կազմվածք ունեցող), տրաքած (հարբած), ցկցկալ, տժժալ (հաճելի ժամանակ անցկացնել), դժժալ (շատ ուժեղ ծիծաղել), մզզցնել (ապուշացնել), խզարել (փայլուն ձևով ի կատար ածել), չորով դնել, մեքենան ցբխել, (շատ ուժեղ կոտրել), վերջն ա, երբեմն էլ՝ վեռջն ա (շատ արտասովոր), ճաքել էինք, բացում ա, ջոգած ա, մորթած ես պահել, հելար ստուց, «Ապե՛, ի՞նչ կարանք թափովի մեջ խփենք», «Գազ տու քոնը», «Կողս լովի», «Մեռնեմ սրդիդ կլապանների գնզգնզոցին», «Մի հատ գթի քեզ», «Քո սանրվածքը ինձ մորթում ա», «Ինձի էսի բեսամթ դգում ա», «Էս ի՞նչ բազար ա», «Քեզի տոշնի պահի», «Լավի վրով ա գրել, ոչ թե վատի վրով» և այլն: Այդպես նաև մի շարք բառեր ու արտահայտություններ, որոնք դարձյալ ունեն հասարակական երանգավորում (այսինքն՝ փողոցային-երիտասարդական), հիմնականում օգտագործվում են կրտսեր սերնդի ներկայացուցիչների, ինչպես նաև՝ կրթական միջին և ցածր մակարդակ ունեցողների կողմից՝ խոսքը գիտակցված ոճավորելու, միևնույն ժամանակ հասարակական մյուս խմբերի խոսքին հակադրվելու նպատակով, ինչպես՝ տուզիկ (ոչ հեղինակավոր), մամայի բալա, պայթած դեմք, հավեսով տուպոյ, ջիգյարով գեղո, գոազով գեջ, քյալի բազարներ, դեմքին թոնել (անպատվել, ասել), տոաս հանել (շատ բարկանալ), ատեց (հայրիկ), հորս արև, մորս արև, «էս ո՞վ ես ,արա՛», «երդում եմ կերե», «վրովդ կանցնեմ (սպառնալիք)», «վատ ե՞ս», «լավ չե՞ս, արա՛», «ա՛յ հոգնած», «ձիզ պահի քեզ (իրեն խելոք չպահողին՝ հորդոր)», «տուպոյ մեռնում ա», «գյաջ ըլնեմ, թե տենց սիրուն աղջիկ տեսել ես», «ագի՛զ, վրետ սիգարետ

կա՞, ախպորդ ծխցնես», «վրես փող կա՞», «կափարիչս թոնում ա», «տոռմուզ ա մոտդ», «նայի քեզ դեպոռտ չանեմ ձեր տուն», «արդեն յուղ ես վատում», «դուխ տվինք, դառար դուխովկա», «թեփ ուտում, դեսպե մեծանում ա», «դեպոռտ էղի ստուց» և այլն:

Նշված բոլոր բառերն ու արտահայտությունները, անշուշտ, որոշակիորեն տարբերվում են խոսակցական բառապաշարից իրենց ոճական-արտահայտչական գունավորմամբ:

Երբեմն նմանատիպ բառերն ու արտահայտություններն ունեն՝ ա) *հումանիզներ*, ինչպես՝ *սորս-կտոր-կադր-տիպ* (ինչ-որ մեկի բնորոշում), *տուֆտել* (անկապ խոսել) և բլլթըցնել (դուրս տալ), շոպլիկություն անել և սապոնվել՝ «քծնել», դժալ և կայֆավատ լինել՝ «ծաղրել ինչ-որ մեկին», վզին դնել և գռուզիտ անել՝ «ճնշում գործադրել», վիզ դնել և տասովկա տենալ՝ «մի բանի ճարը տեսնելը», լղել-բզել-տփել-սպանել՝ «ծեծել», ժմոտ և ժալետչիկ՝ «ժալտ», լումկա և մանթո՝ «չափազանց հիասթափված», սպանում ա և մորթում ա՝ «անչափ գրավում է», *չամռվել -կպռշկել-ունքերից կախվել-կախվել դեմքին-ծակած պահել*՝ «զզվացնել, միևնույն հարցով հոգնեցնել» և այլն, բ) *համանուններ*, ինչպես՝ կպցնել (մի տեղից մի բան ճարել)-կպցնել (ինչ-որ մեկին գրավել)-կպցնել (հարված հասցնել), հագնել (կռվել, օրինակ՝ «Էլի *հագել են* իրար էն էրկուսը»)-հագնել (երկար ժամանակ ինչ-որ նույն բանով զբաղվել, օրինակ՝ «Աչքերս քոռացավ, ի՞նչ եմ հագել սրան»), գ) *հականիշներ*՝ բիթի (հասկացող)-քյալ (բուր) և այլն:

Կարծում ենք՝ այստեղ տեղին է հիշել Իոսիֆ Բրոդսկու մադթանքը՝ ուղղված Միչիգանի համալսարանի շրջանավարտներին. «Այժմ էլ, հետագայում էլ, կարծում եմ, իմաստ ունի կենտրոնանալ սեփական լեզվի ճշգրտության վրա: Աշխատե՛ք ընդլայնել ձեր բառապաշարը և դրա հետ վարվե՛ք այնպես, ինչպես վարվում եք ձեր բանկային հաշվի հետ: Ավելի շատ ուշադրություն հատկացրեք և աշխատեք ավելացնել ձեր շահաբաժինը... Նպատակը ձեր

ինքնարտահայտումը հնարավորինս լիարժեք ու ճշգրիտ դարձնելն է...»³:

Այսպիսով՝ յուրաքանչյուրիս սրբազան առաքելությունն է մեր մայրենին անաղարտ պահելը:

«Երբեմն լեզուն համեմատում են ծովի հետ...առաջին հայացքից՝ ոչ մի ընդհանուր բան: Սակայն ծովում, ինչպես և լեզվում, հաճախ հանդիպում են անհարազատ տարրեր, այսինքն աղբ, որը ծովն ինքը նպաստավոր պայմաններում անպայման դուրս է նետում: Հուսանք, որ մեր լեզվի ինքնամաքրման շնորհիվ կհարատևի»⁴:

Ghamoyan Lusine - Non-Literary Elements in the Colloquial Language of Yerevan (slang words, vulgarisms).- Every day In the colloquial language of Yerevan, numerous deviations, violations, various facts are registered in consequence of which a corresponding language layer with its certain vocabulary, accent, unique expressive styles comes out.

Our society (especially the youth), almost in all situations, started speaking such colloquial language, which is full of slang words and vulgarism. It is a serious problem in the way of formation of polite society, and one of the biggest values of each person is to keep the mother tongue pure.

Гамоян Лусине- Нелитературные элементы в разговорном языке Еревана (жаргонные слова, вульгаризмы).- В разговорном языке Еревана часто регистрируются многочисленные отклонения, нарушения, различные факты, вследствие чего возник соответствующий языковой слой с определенным словарем, акцентом, своеобразными выразительными стилями. Наше общество (особенно молодежь) почти во всех ситуациях начало говорить на таком разговорном языке, который полон жаргонных слов и вульгаризмы. Это проблема в формировании нравственных основ, и нашей задачей должно быть сохранение родного языка чистым.

³ Գրական թերթ, 3 սեպտեմբերի, 2010:

⁴ Համացանց, www. armedia. am:

ԴԱՐՁՎԱԾՍՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՎՈՒՄ*

Ղամոյան Լուսինե
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Երևանի խոսակցական լեզվի բառապաշարի ամենաբնորոշ շերտը դարձվածաբանությունն է: Դարձվածային միավորները առօրյա ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ բառային միավորներ են, որոնց միջոցով դրսևորվում է յուրաքանչյուր ժողովրդի ազգային լեզվամտածողությունը, արտահայտվում տվյալ ժողովրդի բարքերն ու սովորույթը, կենցաղն ու ապրելակերպը: Դրանք, լինելով նաև լեզվի պատկերավորման միջոցներ, խոսքին հաղորդում են պատկերավորություն, հուզական երանգավորում, միաժամանակ նպաստում խոսքի սեղմությանն ու հակիրճությանը: Նույնիսկ գեղարվեստական լեզուն այնքան հարուստ չէ դարձվածքներով, որքան խոսակցականը, որն հատկանշվում է ժողովրդի մտածողությունը հարազատորեն, ամենայն նրբությամբ արտահայտելու կարողությամբ:

Իրենց կառուցվածքով և իմաստային յուրահատկություններով դարձվածային միավորներն առնչվում են բառակապակցություններին և նախադասություններին, սակայն ի տարբերություն սովորական բառակապակցությունների, որոնք ստեղծվում են խոսելու պահին, դարձվածքները պատրաստի, կայուն կապակցություններ են, որոնց բաղադրիչները վերաիմաստավորված են, այսինքն՝ դրանցից յուրաքանչյուրն այդ կապակցության մեջ չի պահպանում իր բառային, բառարանային բուն իմաստը և ձեռք է բերում նոր նշանակություն, ինչպես՝ «Ձվածեղի սիրուն թավի պոչն են լիզում», «Ի՞նչ ես պոչ խաղացնում», «Առաջ քո ծառը ջրի, հետո ուրիշի», «Մեփական յուղի մեջ տապակվել» և այլն:

* «Էջմիածին» հանդես, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան, 2014, էջ 86-96:

Սույն հոդվածում ընդգրկել ենք Երևանի խոսակցական լեզվից գրի առնված բազմաթիվ դարձվածային միավորներ, որոնք գործածում են տարբեր տարիքի և տարբեր սեռի բնակիչներ՝ առանց բացառության:

Այսպիսով՝ դարձվածային միավորները, մեծ ընդհանրություններ ունենալով բառերի հետ, որպես լեզվական առանձին միավորներ՝ ունեն նաև բավական տարբերություններ, հատկապես նկատելի է այն հանգամանքը, որ դրանցից շատերն ունեն առկա ստորոգման հատկանիշներ, ինչպես՝ «Գլխի տակ փափուկ քարձ դնել», «Վանքի հավերժ ուտել», «Հոր հարսանիքը միտը բերել», «Մեջներով սև կատու անցնել», «Երկու ոտքը մի մաշիկ դնել» և այլն:

Խոսքի պատկերավորության և արտահայտչականության համար յուրաքանչյուր ոք աշխատում է գործածել առավել մատչելի, առօրեական բառեր, իսկ այդպիսի բառերն ամենից առաջ մարմնի մասերի անուններն են, ինչպես՝ սիրտը բաց, գլուխը յուղել, գլուխը քարովը տալ, քիթը կախել, քթից բերել, աչքից ընկնել, աչքի պոչով նայել, ականջը ծանր, աչքը ծակ, խելքը գլխին, ձեռից գնալ, ձեռքերը լվանալ, վիզ ծռել և այլն: Նման դարձվածքները կենդանացնում են մեր լեզուն, թեև գրական լեզվի մեջ մեծ տեղ չունեն: Կան բանավոր խոսակցական լեզվի դարձվածային միավորներ էլ, որոնք գերազանցապես առօրյա բանավոր խոսքում են գործածվում, ինչպես՝ թրև գալ, խելքին փչել, ձեռից գնալ, լեղին ցամաքել, ոտ ու ձեռ ընկնել, սրտից արյուն կաթել և այլն: Այդպես նաև՝ հաճախակի գործածվող դարձվածային միավորներից են՝ ձեռքերը ծալած նստել, ջրի ճամփա դարձնել, քարը փեշից թափել, ջրի երես դուրս գալ, ծայրը ծայրին հասցնել, խոսքը կտուրը գցել, քամի անել, հոգին հանել, գլուխ պահել, խելքը գլուխը հավաքել և այլն: Ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ դարձվածային արտահայտություններից են՝ «Հա կասեմ, հա կասի, ապո՛, գյազարը քանի՞ ս ա», «Լավ էր, չէ՞, իրա ծառը ջրեց, շլանգը հավաքեց»:

Գործածվում են նաև այնպիսի դարձվածային միավորներ, որոնք խիստ ազգային երանգավորում ունեն և այլ լեզուներով հնարավոր չէ թարգմանել, ինչպես՝ *աչքդ լույս, աչքի ընկնել, երես տալ, խելքը գլուխը հավաքել, աչքով տալ, ձեռք առնել* և այլն:

Ինչպես նկատեցինք գրի առնված օրինակներից, Երևանի խոսակցական լեզվում ամենից տարածվածը երկանդամ կառույցներով դարձվածային միավորներն են, որոնք բաղադրված են տարբեր խոսքիմասային կաղապարներով, ինչպես՝ գոյական+գոյական՝ «Բա դու ի՞նչ էիր անում, *մեխի գլուխ* էիր ըտեղ», «*Ձեռքի թաշկինակ* են սարքել իրանց համար», «Ա՛յ քեզ բան, *բերանի ծամոն* դառանք», «*Քթի ծակ* չունե՛ս», «Բւմ *աչքի փուռն* ա էսի», «*Մատի փաթաթան* ես սարքել», այդպես նաև՝ ածական+գոյական կաղապարով՝ «էտ, *չոր գլուխը* զզվացրեց արդեն», «*Հերիք* ա անպոչ գդալի պես քեզ բուպեն մեկ մեջ գցես», «*Հին ոսկոր* ա, է՛», «*Մարմանդ գետից* վախեցի՛ր», գոյների անվանումների զուգորդումով՝ «*Սև օրերդ* եկան», «էն *սև ագռավը*՝ (մարդու համար)», «*Կանաչ ճանապարհ* ենք քեզ մտախում», «*Կարմիր խնձորը* բերեցին», կամ՝ գոյական+ածական՝ «*Վա՛յ, քու կողը* ինչ *հաստ ա*», «*Գրպանը ծակ ու ք պիտի գնա*», «*Աչքը շոռ մարդ ա էտի*», այդպես նաև՝ «*մեջքը պինդ*», «*ձեռքը ծանր*», «*աչքը ծակ*», «*շունչը ծանր*», «*երեսը պինդ*» և այլն, թվական+գոյական՝ «*տառաջին քայլ*», «*երրորդ ձեռք*», «*յոթերորդ երկինք*», «*երկու խոսք*», «*չորս պատ*» և այլն, դերբայ+գոյական՝ «*կոտրած տաշտակ*», «*տաշած քար*», «*թրջած հավ*», «*հալած յուղ*», «*վառելու ապրանք*», «*թափելու բան*», գոյական+դերբայ՝ «*ձեռքերը ծալած*», «*քթերը կախած*», «*աշխարհ տեսած*», «*առու թռած*», «*լոբի կերած*», «*կապր կտրած*», «*գլխին էկած*», «*թքով կպցրած*», «*գետնին կպած*», «*թոկից փախած*», «*քթից թռած*», «*թելից կախված*», «*թուղթ մրոտող*», «*աչք ծակող*», «*ձեռք բռնող*», «*լավ ուտող*» և այլն: Հաճախ գործածվում են այնպիսի երկանդամ կառույցներ, որոնց բաղադրիչները միմյանց նկատմամբ համազոր են, ինչպես՝ «*աղ ու հաց*», «*թուղթ ու գիր*», «*հաց ու պանիր*», «*խաղ ու պար*», «*թն ու թիկունք*» և այլն: Հաճախ նման

կառույցների բաղադրիչները լինում են ածականներ՝ «*Հաստ ու բարակ մի գինն ունի*», «*Կոշտ ու կոպիտ* բան ա, հեչ լավը չի», «*Թանկ ու կրակ տվել առել ես, որ ի՞նչ*» և այլն: Երբեմն էլ բաղադրիչները դերբայներ, ածականներ ու գոյականներ են լինում և գրվում են գծիկով, ինչպես՝ «*Անող-դնող աղջիկ ա*», «*Պակաս-պոստ* բաներ շատ ունի», «*Գործդ կիսատ-պոստ* ես արել», «*Էնքան երկար-բարակ* խոսեց, զայլես գնաց», «*Չէ՛, մեծ ա տարիքով, բայց դե իրա ոտով-ձեռով մարդ ա*», «*Ինձ աչքով-ունքով ա անում*» և այլն: Թվական+գոյական կառույցով հաճախակի գործածվող դարձվածային միավորներից են *մի բառով* բաղադրվածները, որոնցում վերջինս ոչ թե թվականի, այլ քնության, փոքրության իմաստ ունի, ինչպես՝ *մի բուռ, մի թիզ, մի մատ* և այլն: Որոշ կապակցություններում էլ մի թվականն արտահայտում է նմանության իմաստ, ինչպես՝ «*Մի խելքի մարդիկ էք*», «*Երկուսս էլ մի մտքի ենք*», «*Էնքան նման էին իրար, ոնց որ մի խնձոր լինեին*»: Կապերով ու կապական բառերով ածականական ԴՄ-ները հիմնականում գործածում են համեմատությունների ժամանակ, երբ ասելիքը ցանկանում են ավելի պատկերավոր դարձնել, ինչպես՝ «*Եղունգի չափ բան ա*», «*Մարի պես տղամարդ ա*», «*Մազերիս չափ դարդ եմ տեսել*», «*Մամ ջան, քեզ երկնքի աստղերի չափ եմ սիրում*» և այլն:

Եռանդամ կառույցներից տարածված են հետևյալ ԴՄ-ները՝ «*Ինչի՞, դու վերին արտի ցորեն ե՞ս*», «*Իսկական աչքի սուրմա թոցնող ա*», «*Կոպեկի համար մեռած ա*», «*Էս կարկուտի տակ ընկած կոշիկներն ինչի՞ ես հագել*», «*Էս էրեխեն ուղտի ականջում քնած ա*», «*Էս մեքենան իր դարն ապրած ա արդեն*», քառանդամ կառույցներից՝ «*Լա՛վ, ոչի՛ նչ, ջրի բերած, ջրի տարած*», «*Հազիվ մի կտոր հացի տեր էղավ*», «*Մեկի պոչը մյուսի տակն ա*», «*Մի քոռ կոպեկի համար իրար են ուտում*», «*Մի փոր հացի համար ինչ ասես կանի*», «*Հացը գլխին հարամ էղավ*» և այլն:

Կան նույնիսկ հնգանդամ կառույցներով ԴՄ-ների գործածության օրինակներ, ինչպես՝ «*Էտի սասանից յոթ օր առաջ ա ծնվել*»,

«Իր բերնի համը լավ գիտի», «Մի քոռ կոպեկի խելք չունես», «Մի ձեռքով երկու ձևերուկ ա ուզում բռնի» և այլն:

Որքան քիչ են ԴՄ-ների բաղադրիչները, այնքան շատ ու գործուն են այդպիսի դարձվածքները, ինչքան շատանում է կառույցի բաղադրիչների թիվը, այնքան քիչ ու պակաս գործուն են դառնում դրանք, որի պատճառը, մեր կարծիքով, մի կողմից՝ խոսքի համառոտության, հակիրճության, արագ արտաբերման ձգտումն է, մյուս կողմից՝ մարդու հիշողության մեջ լավ են պահվում ու հեշտությամբ մտաբերվում ավելի կարճերը:

Դարձվածային միավորների կազմության գործում ամենից առաջ վճռական նշանակություն ունեն տվյալ լեզվի բառային կազմի իմաստային հարստություններն ու բառակազմական հնարավորությունները: Հետևաբար հասկանալի է, որ ավելի շատ դարձվածներ կազմելու հնարավորություններ ունի այն լեզուն, որի բառերը ավելի հարուստ բազմիմաստությամբ են օժտված. մի հատկանիշ, որը շատ բնութագրական է հայերենին: Հայերենի դարձվածային հարուստ ֆոնդին մեծապես նպաստում են հատկապես հարադրավոր կազմությունները:

Դարձվածային միավորները, լինելով տարակազմ կառույցներ, իրենց թե՛ ձևով և թե՛ իմաստով շատ են նմանվում հայերենի հարադրություններին և շատ հաճախ նույնանում են հարադրական բայերին: Դրանք իրարից տարբերակելը բավականին դժվար է, որովհետև հարադրական բայերի մի մասը, դարձվածային արժեք ձեռք բերելով, վերածվել է դարձվածային միավորների, իսկ մյուս մասը ոչ:

Հայտնի է, որ բայը խոսքի մասերի համակարգում քերականական ամենահարուստ առանձնահատկություններով օժտված խոսքի մասն է և խոսքի մեջ ամենակարևոր դերն է խաղում. այդ նույն հատկանիշներն էլ բայից անցնում են բայական ԴՄ-ներին: Դառնալով դարձվածքի բաղադրիչ՝ բայն իր իմաստային, բառաքերականական ու գործառական հատկանիշներով է օժտում նաև դարձվածային կապակցությանը, որը ոչ միայն անվանում է գոր-

ծողությունը, եղելությունը կամ դրությունը, այլև արտահայտում է բայերի հետ կապված ամենաբազմազան վերախմաստավորված հարաբերություններ¹: Խոսակցական լեզվում հանդիպող ԴՄ-ներից ամենամեծ հաճախականություն ունեն հետևյալ բայերը՝ *գնալ*, *ձեռքից գնալ*, *ուշքից գնալ*, *գլուխը գնալ*, *խելքը գնալ*, *առնել*, *երես առնել*, *լեզու առնել*, *առաջն առնել*, *տալ*, *թն տալ*, *երես տալ*, *քամուն տալ*, *հանել*, *խելքից հանել*, *ճանապարհից հանել*, *բերել*, *խելքի բերել*, *ձեռք բերել*, *գլխին օյին բերել*, *տանել*, *գլուխ տանել*, *սկանջր տանել* և այլն:

Հանդիպող բայական ԴՄ-ները բաղկացած են մեկ, երկու, երեք և ավելի բաղադրիչներից, ինչպես՝ *թացը չորի հետ վառել*, *ջանը քոր ընկնել*, *գետնի տակ անցնել*, *մեկի ոտքի տակը փորել*, *փշերի վրա նստել*, *մատները հետն ուտել* և այլն:

Դարձվածքները հաճախ նպաստում են ավելի տեսանելի դարձնելու և բացահայտելու առանձին անձանց, կերպարների հոգեվիճակը:

Դարձվածքների միջոցով հաճախ արտահայտում ենք մեր հիացական վերաբերմունքը՝ *ի նչ եմ ասել*, *աստծու կրակ*, *կրակի կտոր*, *լսի կտոր*, զարմանքը՝ *այ քեզ բա ն*, *դու մի ասա*, *բա չես ասի*, *արի ու տես (որ)*, *ի ն չ խաբար ա*, *մեղա Աստծու*, հաճելիությունը՝ *աչքիս վրա*, *գլխիս վրա*, *բերանի ջուրը գնալ*, *փառք Աստծո* և այլն: Կան դարձվածքներ էլ, որոնց միջոցով արտահայտում ենք մեր կարեկցանքը՝ *«Խեղճ ու կրակ մարդ ա, թող տանի, ոչի նչ»*, *«Էկել, վիզը ծռել էր, ինչ անէի»*, մտերմիկ ու անմիջական վերաբերմունքը՝ *«Մեր մեջ ասած, վաղը գնալու ա մեր բաժնից»*, *«Խոսքը մեր մեջ, ասեմ, բայց մարդու բան չասես»*, *«Ինչ մեղքս թաքցնեմ, ես եմ արել»*, օրհնանքները՝ *«Ապրի արևդ»*, *«Մեռնեմ արևիդ, ո՞նց ես»*, *«Աստված կսիրես, իրան մի ասա»*, *«Տա*

¹ Խ. Բաղիկյան, *Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները*, Եր., 1986, էջ 159:

Աստված, թող քո ուզածով լինի», «Աստված բարին կատարի» և այլն:

Հաճախ դարձվածքների միջոցով խոսողն արտահայտում է իր բացասական վերաբերմունքը խոսքի առարկա հանդիսացող անձի կամ երևույթի նկատմամբ, ինչպես՝ արհամարհանք՝ *աչքերը չռել*, *աչքի գրող*, *մեծ-մեծ բրդել*, *չոր գլուխ*, *գլուխը քարը*, *գլուխ տանել*, *գլխին շան լափ թափել*, հանդիմանանք՝ *մեջքդ կոտրվի*, *տունդ չքանդվի*, *այ քո տունը շինվի*, *տունդ քանդվի*, *աստծու սիրուն*, *ի սեր աստծո*, *ինչ խաբար ա*, *հեզնանք՝ մեկ ականջով մտնել*, *մյուսով դուրս գալ*, *բախտինն քացի տալ*, *գրպանում մկներ խաղալ*, *մկան ծակը հազար թումանով առնել*, *լեզուն կապ ընկնել*, *խելքը հացի հետ ուտել*, *հալած յուղի տեղ ընդունել*, *փորը վեց-վեց անել*, *աթոռից պոկ չգալ* և այլն:

Խոսքն արտահայտիչ դարձնելու համար մարդիկ ամեն վայրկյան ինքնաբերաբար գործածում են ԴՄ-ներ, նույնիսկ մի նախադասության մեջ կարող են մի քանիսը լինել, ինչպես՝ «Դրան նայե՛ք, *մի ոտքը գերեզմանում ա*, *որ փչես կրնկնի*, էլի ուզում ա իրա ասածով լինի ամեն ինչ», «*Մատների արանքով նայի*, էտ *թոկից փախածն* ով ա, որ քեզ բան ասի», «*Էտ երկու երեսանիին* նայեք, ստեղ են ասել՝ *մարմանդ գետից վախեցիր*» և այլն:

Դարձվածային միավորներ են գործածում նաև այլ դեպքերում, երբ մեկը սանձարձակ, չափազանց անվայելուչ կերպով է խոսում, ասում են՝ «*Լեզվի կապերն արձակել է*», կամ, երբ ինչ-որ բանից գոհանում են, իրենց բավարարված են զգում, ասում են՝ «*Ձա ն, սրտիս յուղ քավեց*», բայց երբ մեկին խաբում, համոզում են, ասում են՝ «*Գլխին յուղ քսեցին, ճանապարհեցին*» և այլն: Շատ հաճախ լսում ենք՝ «*Լա վ, էլ կոկորդիլոսի արցունք մի՛ թափիր*» արտահայտությունը, երբ դիմում են այն մարդուն, որ կեղծ է արտասվում, վիշտ է ցուցադրում, մինչդեռ ներքուստ չի ապրում: Եթե փորձենք այս դարձվածքների մեջ որևէ բառ փոխել, ապա կտեսնենք, որ դրանք իրենց իմաստից կզրկվեն: Հենց այս պատճառով էլ լեզվաբանները դրանք կոչում են ազատ կապակցու-

թյուններ, այսինքն՝ դարձվածքներ, որոնք մեր գլխում մշտապես կան՝ որպես պատրաստի միավորներ, կառույցներ, որ անհրաժեշտ պահին միանգամից գործի ենք դնում:

Առօրյա խոսքում մարդիկ սիրում են հաճախ առարկան, երևույթը համեմատել տարբեր կենդանիների հետ, ինչպես՝ «Շնորհակալ եմ, արջի ծառայություն մի՛ մատուցիր», «Գայլի ախորժակ ունես, հա՛», «Հին գայլ ա էտի», «Կթու կով ոնց որ լինի, էնքան չաղ ա», «Ոնց որ աղոթած էշ լինես», «Էշի նահատակ էղավ», այդպես նաև՝ առյուծի բաժին, ծեր աղվես, ձիու ուժ, եզան համառություն, օձի կծած և այլն:

Ժողովրդախոսակցական լեզվում բավականին տարածված են նաև «Էշ կերել, էշ մեծացել ա», «Էշ մի՛ սատկի, գարուն կգա, յոնջա կուտես», «Ամենքն իրանց էշն են քշում», «Սատկած ձի են ման գալիս, որ նալերը հանեն» պատկերավոր արտահայտությունները:

Խոսակցական լեզվում գործածվող բազմաթիվ ԴՄ-ներ կան, որ առնչվում են շուն կենդանու հետ և տարաբնույթ իմաստներ են արտահայտում, օրինակ՝ ինչ-որ մեկի բախտը բերելու իմաստով ասում են՝ «Շան բախտ ունի», բայց մեկի շատ վատ վիճակը ներկայացնելիս ասում են՝ «Շան օրի ա» կամ «Շան օրն ա ընկել», անամոթ մարդու համար ասում են՝ «Շան էրես ունի», չափազանց շատ չարչարվողի համար՝ «Շան քթից ջուր ա խմում», հավաքված շատ մարդկանց համար ասում են՝ «Շունը տիրոջը չի ճանաչում», կան նաև «Շան հոտառություն ունի», «Շան լեզու ունի», «Գյուղ չկա, որ շուն չլինի», «Շուն ու կատու են դարձել», «Ընենց օրը կզգեմ, որ շունը ձեռքիցդ հաց չի վերցնի» և այլն: Շուն բառով բաղադրված մի շարք դարձվածային կապակցություններ էլ մի դեպքում հայհոյական իմաստ են արտահայտում, մի այլ դեպքում՝ թեթև հանդիմանական, մտերմական արտահայտությունների իմաստ, ինչպես՝ շան տղա, շան աղջիկ, շան որդի, երբեմն էլ՝ շան թուլա, շան լակոտ, շան ձագ և այլն:

Առօրյա խոսքում հաճախակի են գործածվում զիջական բնույթի դարձվածքներ՝ «Գլուխը քարը, ինչ ուզում աս, թող անի», «Հերն էլ անիծած, թող գնա», «Գործ չունես, դու բան մի՛ խոսա», «Ի նչ արած, մենք էլ չենք գնա», երկբայական բնույթի դարձվածքներ՝ «Աստված գիտի՛ ուր աս հիմա», «Ով գիտի՛ ինչ աս անում էստեղ», «Ինչ իմանաս՝ մինչև ուր կհասնի», «Երկու կրակի մեջ եմ ընկել, չգիտեմ ինչ անեմ», ինչպես նաև՝ երգիծական վերաբերմունք արտահայտող դարձվածքներ, ինչպես՝ «Էսի մածունը փչելով աս ուտում», «Այ, ծա՛կ փիլիսոփա», «Իսկական ցամաք ձորի աղվես աս» և այլն:

Երբեմն էլ գործի ենք դնում այնպիսի դարձվածքներ, որոնք չափազանցում են իրողությունը կամ երևույթը, դրանով փորձում ենք ուժեղացնել խոսքի տպավորությունը, ինչպես՝ «Ես արդեն չգիտեմ որն անեմ, ես կաշվիցս դուրս եմ գալիս, հազար կտոր եմ լինում, իսկ դո՛ւ...», «Ընենց կտամ, որ մկան ծակը հազար թումանով կառնես», «Մազ էր մնում, որ բռնեի, հա՛», «Ընենց լեզու ունի, օձը բնից կհանի», «Ոտով-գլխով կորանք», «Ախչի՛ ջան, դրանք հում-հում կուտեն ինձ», «Մեկ էլ, որ տեսել եմ, չէ՛, հոգիդ բուռս կհավաքեմ», այդպես նաև՝ աչքի սուրմա թոցնել, ասեղ զցելու տեղ չլինել, բերանում թուրը ցամաքել, կաշին պլոկել, սիրտը կտոր-կտոր լինել, երբեմն էլ չափազանցում ենք անհնարին իրավիճակների մատնանշումով, անհամատեղելի իրողությունների համադրումով, ինչպես՝ ուղտի ականջում քնել, լուն ուղտ շինել, աչքի միջից մազ թոցնել և այլն:

Շատ ԴՄ-ներ երբեմն պարծենկոտության արժեք ունեն՝ «Մենակ մեռնելու օրը չգիտեմ», «Խաչը իմն աս, գորությունը ես գիտեմ»:

Երբեմն գործածում ենք այնպիսի ԴՄ-ներ, որոնց արտահայտչականության հարցում կարևորվում է հանգավորումը, ինչպես՝ քիթ քթի տալ, խելք խելքի տալ, շուռ ու մուռ տալ, ծաղր ու ծանակ, նազ ու տուզ անել և այլն:

Դարձվածքներին բնորոշ է սեղմությունը, հակիրճությունը: Դրանք խտացված խոսքի անգուգական արտահայտություն են: Դարձվածքների սեղմությունը պայմանավորող հիմնական հանգամանքը բառը ընդհանրացման մեծ ուժով օգտագործելն է՝ «Գիտե՛ս արդեն դանակը ոսկորիս ես հասցրել», «Սեփական ճակատի քրտինքով ապրող մարդ ա», «Ես եմ մեղավոր, գլխիս եմ նստացրել», «Վա՛յ, էս ինչ էրեխեք են, իսկական շուն ու կատու են դարձել», «Շնորհակալ եմ, ինձ արջի ծառայություն մի՛ մատ ուցի», «Խեղճ էրեխես էնքան տանջվեց՝ հոգին բերանը էկավ» և այլն: Խոսքի սեղմությունը պայմանավորվում է ոչ միայն նրանով, որ սրանց մեջ ավելորդ ոչ մի բառ չկա, այլ որ շատ սովորական բառերը հանդես են գալիս որպես խոր բովանդակության կրողներ, որպես խորհրդանիշ:

Դարձվածային միավորների հսկայական պաշարի կողքին ունենք նաև բառ-դարձվածքներ, որոնք խոսակցական լեզվում որոշակի քանակ են կազմում, հետևաբար չպետք է անտեսենք նաև դրանք, ինչպես՝ *թքած, մեռա՛ծ, զարգանա՛ս* և այլն:

Տարբեր դարձվածքներով կարելի է հոմանշային շարքեր կազմել, օրինակ՝ «*լռել*» բառի իմաստն արտահայտելու համար կարող են գտնվել բազմաթիվ դարձվածային միավորներ, որոնք բոլորն էլ պատկերավոր արտահայտություններ են, ինչպես՝ *բերանը կապել՝ նստել, լեզուն փորը քաշել, լեզուն ծակը կոխել (գրեհկ.), լեզուն փորն ընկնել, լեզուն կտրվել, ձա՛յնը փորն ընկնել* և այլն: Այդպես նաև՝ *պատին սեղմել և պատին դեմ անել, կաշին փրկել և գլխի ճարը տեսնել, ոտքերը լիզել և ոտքերն ընկնել, ջուր ծեծել և յուղ վառել (ժրգ.), փշերի վրա նստել և ասեղների վրա նստել, մի գնդակով երկու նապաստակ որսալ և մի ձեռքով երկու ձմերուկ բռնել* և այլն:

Սովորաբար խոսակցական լեզվում գործածվող դարձվածքները կարող են նաև հականշային հարաբերության մեջ մտնել, ինչպես՝ «*աչքը դուրս*» (ամուսնական ուխտին դավաճանող) և «*աչքը դռանը*» (ամուսնական կյանքին հավատարիմ տղամարդ),

«ձեռքը բաց» (առատաձեռն) և «ձեռքը փակ» (ժլատ), «աչքի լույս» (սիրելի, պաշտելի) և «աչքի գրող» (ատելի, անտանելի), «Աստծու գառ» (խելոք, հեզ) և «Աստծու կրակ» (չար, անհանգիստ), «էծերը գնալ» (հանդարտվել) և «էծերը գալ» (կամակորոթություն անել, չափազանց ակտիվանալ) և այլն: Այդպես նաև՝ *հողին հավասարեցնել և երկինք բարձրացնել, ջրի գին և կրակի գին, հոր գին, լեզուն կարճ և լեզուն երկար:*

Դարձվածքների սաստկական երանգավորումն ավելի ակնհայտ է դառնում, երբ բաղադրիչները հականիշ բառեր են, ինչպես՝ *ծուռը նստել, դուզը խոսալ, ծանր ու թեթև անել, լավ-վատ յուրա գնալ, սևն ու սպիտակը չջոկել-ջոկել, հայիայը գնացել, վայվայն ա մնացել* և այլն:

Երբեմն համանունության երևույթներ են հանդիպում, ինչպես՝ *հողին հավասարեցնել՝ ա. խիստ քննադատել, բ. ավերել, գ. վարկաբեկել*, արժանապատվությունից զրկել: Մի շարք դարձվածքներ առաջացել են առածների և ասացվածքների հիման վրա, ինչպես՝ *պղտոր ջրում ձուկ բռնել, ձեռքը փրփուրին զցել, ջուր ծեծել, առուն թռի նոր ասա՝ հոպ, մի ձեռով երկու ձմերուկ բռնել* և այլն:

Այսպիսով՝ խոսողը, ինչ-որ իրավիճակից կամ պայմաններից ելնելով, տվյալ մարդուն, առարկան կամ իրավիճակը ավելի լավ բնորոշելու և բնութագրելու համար և դրանով իսկ իր խոսքի ուժը սաստկացնելու, ավելի ազդեցիկ ու պատկերավոր դարձնելու նպատակով, վերհիշում է լեզվում արդեն եղած, պատրաստի՝ տվյալ պահին ու իրավիճակին շատ համապատասխան դարձվածային միավորներ: Դրանց շնորհիվ խոսքը դառնում է ավելի վառ, կենդանի ու պատկերավոր:

Դարձվածային միավորները հիմնականում ժողովրդական մտածողության արդյունք են, դրանք նախ առաջանում են խոսակցական լեզվում, ապա նոր անցնում գրականին:

Гамоян Лусине- Один из самых характерных слоев словарного состава разговорного языка Еревана - фразеология. Фразы - типичные лексические единицы ежедневной речи, помощью которых проявляется национальное языковое мышление. Те, будучи также средствами фигуративности языка, передают речи фигуративность, эмоциональную окраску, в то же время способствуют краткости и сжатости речи. Для образности и выразительности речи все стараются использовать уже готовые фразеологизмы, соответствующие моменту и ситуации. Фразеологизмы сначала возникли на разговорном языке, затем перешли к литературному. Даже художественный язык не так богат фразами как разговорный.

Ghamoyan Lusine-One of the most characteristic layers of the vocabulary of the colloquial language of Yerevan is phraseology-Phrases are the typical lexical units of the daily speech which help to show the national language thinking. Those, being also means of figurativeness of the language, conduct to the speech figurativeness, emotional shading, at the same time further the briefness and brevity of the speech. For figurativeness and expressiveness of the speech everybody tries to use already ready phraseological units corresponding to the moment and a situation. The phraseological units at first arose in a spoken language, then pass to the literary. Even art language is not so rich with phrases as colloquial.

ԵՐԵՎԱՆԻ ԼԵԶՎԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ*

Ղամոյան Լուսինե
ԳԱԱ, լեզվի ինստիտուտ

Անժխտելի փաստ է, որ լեզուն է սովյալ ժողովրդի գոյության, հարատևության և ինքնահաստատման հիմքերի հիմքը: Լեզվի զարգացումը, նրա հասարակական գործառնությունը մեծապես պայմանավորվում է հասարակական այն պայմաններով, որոնցում ապրում է նրանով խոսող հասարակությունը:

Լեզվավիճակի վրա ազդող հասարակական, քաղաքական, տնտեսական ու մշակութային գործոնները բազմազան են, ինչպես՝ տարիքային խմբերը, ազգային կազմը, ժողովրդական կրթությունը, հանրության կենցաղն ու մշակութային բնութագիրը և այլն¹:

Լեզվի զարգացման գործում առաջատար դերը սովորաբար պատկանում է քաղաքներին: Հետևաբար՝ նպատակահարմար ենք գտել հայերենի խոսակցական լեզվի արդի վիճակի ուսումնասիրությունը կատարել Երևանում, որտեղ հայերենից բացի զգալի տեսակարար կշիռ ունեցող այլ լեզուներ չեն գործառում: Թեև մայրենի լեզուն են համարում գրական հայերենը, սակայն, ցավոք, այսօր հայերենի, որպես պետական լեզվի, կարգավիճակը ոչ միայն ապահովված չէ, այլև ենթարկվում է համակարգային խաթարումների, աղավաղումների, կորցնում լեզվակիրներին:

Առօրյա գործածության հայերենը Երևանում գրական լեզվի խոսակցական տարբերակն է, որն էլ բանավոր հաղորդակցման հիմնական միջոցն է: «Դա ոչ միայն գրական լեզուն տիրապետող հանրության բանավոր, անկաշկանդ, ոչ պաշտոնական խոսքն է,

* Երիտասարդ լեզվաբանների հանրապետական 4-րդ գիտաժողով, Երևան, «Ասողիկ», 2014, էջ 62-70:

¹ Տե՛ս Ն. Զաքարյան, Երևանի արդի լեզվավիճակը.- Հանրալեզվաբանական, հոգե-լեզվաբանական և համեմատալեզվաբանական հետազոտություններ, Ե., 1979, էջ 19:

այլն հասարակության այն մասի խոսքը, որի համար գրական լեզուն սովորաբար հաղորդակցման միջոց չէ»²: Այդ հայերենով երևանցիները խոսում են տանը, փողոցում, մտերիմների, աշխատանքային ընկերների հետ և այլն: Առօրյա խոսակցական հայերենը թեև հարաբերակցվում է գրական լեզվին, այդուհանդերձ, հեռանում է նրանից որոշ հատկանիշներով՝ երբեմն մաքուր, իսկ սովորաբար այս կամ այն չափով բարբառախառն կամ էլ օտարաբանություններով (հիմնականում ռուսաբանություններով) աղավաղված:

Այսօր խոսակցական հայերենն ու գրական հայերենն ակնհայտորեն հեռացել են իրարից. առօրյա շփման ժամանակ մի լեզվով ենք հաղորդակցվում, իսկ գրավոր կամ պաշտոնական հաղորդակցման ժամանակ փորձում խոսակցական լեզվի տարրերը մաքրել, որն էլ դժվարացնում է հաղորդակցումը: Առօրյա խոսակցական հայերենի և գրական հայերենի այս խզումը զգալիորեն թուլացնում է հայերենի դիրքերը մի շարք ոլորտներում (պաշտոնական գրագրություն, պետական հիմնարկներ, կրթություն, գիտություն, տեխնիկա և այլն):

Բազմաթիվ են խնդիրները՝ ուղղախոսությունից մինչև շարահյուսական կառույցներ: Այսպես՝ քանի որ խոսակցական լեզվին բնորոշ է հանպատրաստից, խոսելու ընթացքում առանց նախապատրաստվելու դրսևորվելը (լեզվաբաններն այն կոչում են ինքնաբերականություն), հաճախ երկարաշունչ բառերն ու անձնանունները բանավոր խոսքում արհեստականորեն կրճատվում են, այսպես՝ *հաջողությունը* դառնում է *հաջող, ցուեսությունը՝ ցը, մորաքույրը՝ մոք, հորաքույրը՝ հոք, հորեղբայրը՝ հոպար, մորեղբայրը՝ քեռի//քեռ* և այլն, այդպես նաև՝ *Համբո* (Համբարձում), *Մկո* (Մկրտիչ), *Ան* (Անուշիկ, Անի, Աննա, Անահիտ և այլն), *Ամո* (Արմինե), *Վլո* (Վոլոդյա), *Խչո* (Խաչատուր) և այլն: Գուցե այս պատճառով էլ հաճախ շնորհակալության փոխարեն գործածում

² Ս. Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Ե., 1984, էջ 218:

են *մերսի* օտարաբանությունը, *ցտեսության* փոխարեն՝ *պակա*-ն, որն անշուշտ հանձնարարելի չէ: Կամ, օրինակ, երբ դպրոցականները *թվաբանությունը թվաբ* են ասում, *բնագիտությունը՝ բնագ*, *մաթեմատիկան՝ մաթեմ* և այլն, հասկանում ենք, որ «ություն»-ները կրճատելով՝ արտահայտվում է կարճ խոսելու ձգտումը, այսպես կոչված՝ «տնտեսման սկզբունքը», որը հատուկ է ամեն մի խոսակցական լեզվի: Բայց երբ անձնանունների փոխարեն «մակա-նուններ» են գործածվում, սա բացասական երևույթ է, ինչպես՝ *Սոված, Բոյով, Չուբ, Ճուտ, Շակալ, Չիկո (Չաիկալ), Ճայրլ* և այլն:

Ժողովրդախոսակցական բառաշերտի մեջ առանձին որակ են կազմում հասարակաբանական-խոսակցական բառերը: Սրանք հուզաարտահայտչական երանգավորում ունեցող ցածր ոճի այն բառերն են, որոնք ունեն որոշակի հասարակաբանական ոճական երանգ և, բնականաբար, ոճական նշույթավոր բառեր են, ինչպես՝ *սառուց, կապուտ, հեր, մեր, ախպեր, գել, լեն, ծեր, կայնել, ախչի, էրկու, իրեք, եսիմ, խի, յա, ընչի, ըտե, ըսքան, ըստուց, ընդուց, ով ա սսե, ինչ ա ըլե, քառսուն, հավքել, լողնալ, վախցընել, հիշըցնել, ստեցնյակ, ախպերնյակ, ընգերնյակ* և այլն:

Երևանի խոսակցական լեզուն, ցավոք, առատ է ժարգոնային բառերով ու արտահայտություններով (*տոչկել, շվցնել, ցվրվել, քյոլել, եզոտ, ցկցկալ, տժժալ, մզզցնել, խզարել, չորով դնել, բեսամթ դգել, բըլթըցնել, լումկա, մանթո, բիթի, ճաքել էինք, բացում ա, ջոգած ա, լիշնի խոսել, գլուխ հարթուկել, ծնգլահան անել* և այլն), գոեհկաբանություններով (*քյալ, խդր, տուֆտա, հայվան, քնձոտ, շնթոկել, խուժան, գոթուզիբիլ* և այլն): Կան նաև բազմաթիվ բարբառային իրողություններ, բարբառների կամ առանձին խոսվածքների միջոցով արևելյան լեզուներից (թուրքական, պարսկական, արաբական) Երևանի խոսակցական լեզվին անցած բազմաթիվ բառեր, ինչպես՝ *պարսկերենից՝ բայիշ, բախչա, բեթար, բեխաբար, լազյան, լեշ, խամ, խիար, խումարբազ, հավես, հեչ, մահանա, մուխտառ, չանա, չանգալ* և այլն, *թուրքերենից՝ ադաշ, ամագ, արշին, բայքի, բայդուշ, բաջանադ, բիրիբքյամ, գյոռ, գյորա, դալան,*

դուզ, դուզգյունի, գոռ, գոռբա, թագա, թայ, լայադ, դոնախ, մադալ, յախու, յորդան, չափալախ, չաքուջ, ջանջալ, սադ, քյասիբ, օյադ, օյինբազ և այլն, արաբերենից՝ ալիբ, աջալ, բարաքյաթ, եթիմ, թայֆա, թադարուք, ինսդ, իսաբար, իսաթր, իսարաբ, իեր, հալալ, հալբաթ, հարամ, հարիֆ, դադր, դալաթ, դալմադալ, դամաթ, մուննաթ, նադդ, շառ, շարբաթ, ջրհանդամ, ջեբ, սալամաթ, սամթ, վախտ, քեֆ և այլն³:

Լեզվին տիրապետելու մակարդակը, խոսքի որակը և հասարակական տարբերակման աստիճանը մեծ չափով պայմանավորված են խոսողների կրթությամբ և մշակութային ընդհանուր զարգացմամբ:

Մայրենի լեզվով ճիշտ խոսել ու գրել սովորելը (նաև սովորեցնելը) և՛ ազգային պարտականություն է, և՛ կյանքի հրամայական: Որպեսզի մարդն իր միտքը ճիշտ ու գեղեցիկ արտահայտի, պետք է կարողանա իր խոսքը կառուցել լեզվի ոճական ու քերականական կանոններին համեմատ: Սակայն ցավալին այն է, որ այսօր տասներկու տարի «չոր քերականություն» սովորելուց հետո, հայախոս շրջանավարտը չի կարողանում գրավոր և բանավոր շարադրել իր մտքերը: Դրա համար քերականություն ուսուցանելուն զուգահեռ պետք է իրականացվի լեզվի, խոսքի գրավոր և բանավոր ուսուցում: Ե՛վ դպրոցներում, և՛ համալսարանական միջավայրում կանոններ սերտելու փոխարեն պետք է նախ լեզու սովորել:

Այսօր բառաձևերի բազում խախտումներով ու սխալներով են խոսում և՛ բարձրագույն, և՛ միջնակարգ կրթություն ունեցողները հավասարապես, ինչպես՝ *ավելնորդ, կանանցի, անձեռնոցիկ* (փոխ.՝ *ավելորդ, կանացի, անձեռոցիկ*), *ալանի* (նկատի ունենք՝ առանց աղի, փոխ.՝ *անալի*), *բալանի* (փոխ.՝ *բանալի*), *հաշվանդամ*

³ Տե՛ս Ս. Բաղդասարյան-Թափալցյան, Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, Ե., 1973, էջ 184-203, Ս.Ղուկասյան, Առօրյա բառարան, Ե., 2013, էջ 255-278, Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Ե., հհ. 1-4, 1971-1979:

(փոխ.՝ հաշմանդամ), տուժվել, կապնրվել, խաբնվել (փոխ.՝ տուժել, կապվել, խաբվել), տարեկետում, թույլատվություն, ութանասուն (փոխ.՝ տարկետում, թույլտվություն, ութսուն), պատճել (փոխ.՝ պատճեն), իմ մոտ, իմ վրա (փոխ.՝ ինձ մոտ, ինձ վրա) և այլն: Հաճախակի են գործածում բառիմաստային, քերականական օտարաբանություններ և օտար այնպիսի կառույցներ, ինչպիսիք են՝ «Ես ինձ մոտ եմ», «Բանը կայանում է նրանում...», «Նա համարվում է մեր կուրսի ամենալավ ուսանողը», «Էդ խանութը Ամիրյան փողոցի վրա է», «Անահիտը նվագելու է դաշնամուրի վրա», տարածված սխալ է նաև՝ «Ես Անիի վրա եմ սիրահարվել» և այլն⁴:

Բուհերի՝ լեզվի անաղարտությունը պահպանելու դերը շատ մեծ է: Մինչդեռ մեր կրթահամակարգն իր բովանդակությամբ այսպիսի խնդիր լուծել չի կարողանում: Կարծես այսօրվա կրթահամակարգի խնդիրը միանգամայն այլ է՝ «համաշխարհային շուկայի պահանջներին համապատասխան քաղաքացիներ կրթելն է»: Հայաստանում այսօր սնկի պես աճում են օտարալեզու, օտարամշակույթ հաստատություններ՝ և՛ պետական, և՛ մասնավոր: Գիտատեխնիկական հայալեզու գրականության բացակայության պատճառաբանությամբ ամուր են պահվում ռուսերենի դիրքերը, համակարգիչներ ներդնելով «անփոխարինելի» դարձնում անգլերենը: Շատերն են ցանկանում կրթվել օտար լեզվով՝ մոռանալով, որ բարեկեցության առաջին պայմանը սեփական լեզվի իմացությունն է: Մեր կարծիքով, իր երեխային օտարալեզու դպրոց տվող հայաստանաբնակ հայը գոհաբերում է և՛ իր, և՛ իր զավակի ազգային արժանապատվությունը՝ ստեղծելով պարարտ հող օտարամուլության համար:

Ճիշտ է, թեև ժամանակը ստիպում է մարդուն տիրապետել առնվազն երկու լեզվի (այդ երևույթը բնութագրվում է ազգային

⁴ Տե՛ս Պ. Բեդիրյան, Հայ լեզուն և մեր խոսքը, Արևելահայերեն խոսքի ուղեցույց, Ե., 1999:

լեզուների փոխազդեցությամբ և փոխադարձ հարստացմամբ), սակայն, ինչպես լեզվի նկատմամբ անփույթ վերաբերմունքի և լեզվական ցածր մշակույթի, այնպես էլ երկրորդ լեզուն վատ տիրապետելու պատճառով ի հայտ են գալիս բազմաթիվ սխալներ ու լեզվական շեղումներ:

Ռուսերեն բառերի մի մեծ խումբ (եթե բավարարվենք միայն բառերով՝ *պրիվետ, պակա, վաբշե, մարշրուտկա, աստանովկա, մոստ, մարոժնի, զոնտիկ, լիֆտ, պերերիվ, դակումենտ, մոստ, սադ, ռուչկա, շկաֆ* և այլն) լայնորեն գործածվում է խոսակցական հայերենում: Գուցե այս փաստը կարելի է բացատրել պարզ սովորության ուժով: Դժվար է նույն կերպ բացատրել Երևանում ռուսական դիմելաձևի (Այսինչ Այսինչովիչ) լայն տարածումը: Ակնհայտ է, որ ռուսական դիմելաձևը Երևանում դեռևս հարգանքի և հասարակական որոշակի կարգավիճակի ճանաչման և արտահայտման անփոխարինելի արտահայտություն է: Կամ՝ խոսակցական լեզվի արտասանական համակարգում ռուսերենից հայերեն ներթափանցած բառերը ռուսերենի նմանությամբ արտաբերելու սովորությունը:

Մաքուր, գեղեցիկ հայերեն խոսք այժմ, իհարկե, հաճախ կարելի է լսել՝ հասարակական վայրերում, ընտանիքներում: Քիչ չեն այն մարդիկ, որոնք ուշադիր են իրենց խոսքի նկատմամբ, սիրով, երկյուղածությամբ են վերաբերվում մայրենի լեզվին և չեն գործածում վերոհիշյալ և այլ անհարկի, ոչ հայերեն բառեր: Բայց ովքեր անփույթ են իրենց խոսքի նկատմամբ, չեն խնայում մայրենին, նրանք, բնականաբար, իրենք իրենց չեն խնայում: Այս սովորույթի ուժը հատկապես մեծ է միջանկյալ բառերի նկատմամբ (*դաժե, վայոժե, զատո, նեուժելի, պոոսոր, վաբշե, վաբշետը, վոբշեմ* և այլն):

Հասարակության տնտեսության, մշակույթի զարգացման հետ օրեցօր շատ ավելի մեծանում է անգլերեն կամ եվրոպական այլ լեզուներից վերցված բառերի տեսակարար կշիռը՝ *ok, please, thanks, hy, bye, «FULL ա», «BREND-ովի ա», «LIKE անել», «Լայքեք* և

տարածեք», «Տոի քառ ենք անում», «Ֆլեշմոք ենք անելու», «Քենսլ արա», «Քումենթել եմ», «Քոփի եմ արել», «էսօր փարթի ա», «Անցկացվում է քաստինգ», «Մերը իրա մոտ պիկ ա տվել», «Մտատուսդ կբարձրանա» և այլն:

Փաստորեն, եթե մի կողմից՝ նկատվում է Երևանում հայերենի դիրքերի ամրապնդման միտում, ապա մյուս կողմից՝ գնալով մեծանում է ժողովրդական զանգվածների՝ ռուսերենին և անգլերենին տիրապետելու աստիճանը: Այս երևույթը բացատրվում է նրանով, որ ժամանակն անհատից պահանջում է ռուսերենի, անգլերենի լավ իմացություն, և դրանց իմացության պակասը աշխատանքային գործունեության մեջ կարող է զգալի դժվարությունների առաջ կանգնեցնել, հետևաբար՝ մարդիկ չեն կարող չարձագանքել այդ երևույթին, չեն կարող նկատի չառնել կյանքի թելադրող պահանջները:

Հայերենը տիրապետող է Երևանի պետական ու հասարակական-քաղաքական կյանքում, գեղարվեստական գրականության ոլորտում: Երևանում հիմնականում հայերեն է նաև տեղեկատվական զանգվածային միջոցների լեզուն, ռադիոյի և հեռուստատեսության ծրագրերի գերակշիռ մասը: Սակայն չպետք է մոռանալ, որ այսօր մամուլի լեզուն բազմաշերտ է: Ինչ վերաբերում է հեռուստատեսությանը, ապա որոշ հաղորդումներում հնչում է մաքուր գրական հայերենը, սակայն նույնը չի կարելի ասել հեռուստատեսորիպլների կամ որոշ երգիծական հաղորդումների մասին, որոնցում հաստատապես աղավաղված է գրական հայերենը: Փողոցի լեզուն մտել է հեռուստատեսություն. երևույթ, որը շատ վտանգավոր է, հետևաբար անհրաժեշտ է հեռուստալեզվի նկատմամբ մասնագիտական և պետական լուրջ վերահսկողություն սահմանել:

Լեզվապահպանությունը ինչպես ազգային, այնպես էլ պետական լուրջ հիմնահարց է, բայց, ցավոք, դուրս է մնացել կարևորագույն համարվողների շարքից: Հայի սուրբ պարտականությունն է ուսում ստանալ հայերեն, կրթվել, մտածել, խոսել և արարել

հայերեն, քանի որ ազգային նկարագիր ունեցող մարդն ինքնին արժեք է:

Մեր ժողովրդի մեծագույն հարստությունը լեզուն է, որը պետք է պաշտպանված լինի բոլոր ոսնձգություններից:

Gamoyan Lusine- Current State of the Yerevan Language.-The vocabulary of the spoken language of Yerevan is a constantly changing and developing sphere, where linguistic and extra-linguistic, literary and non-literary different variants and realities are mutually influenced. Nowadays, the colloquial Armenian and literary Armenian of Yerevan apparently are separated from one another. This gap between colloquial and literary Armenian considerably weakens the position of Armenian in a number of spheres (official documents, education, science, technology, etc.). The problems are various starting from correct pronunciation to syntactic structures.

Гамоян Лусине- Современное состояние языка Еревана.- Разговорная лексика Еревана, постоянно меняющаяся и развивающаяся область, где взаимно влияют элементы и реалии языковых и внеязыковых, литературных и нелитературных, а также дополнительных форм. Сегодня, очевидно, разговорный язык отделился от литературного. Этот разрыв в повседневном разговорном и литературном армянском языке значительно ослабляет позиции армянского языка в ряде областей (официальная переписка, образование, наука, техника и т.д.). Есть много вопросов - начиная от орфоэпии до синтаксичес.

**ՀՈԳԵՀԱՅ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԲԱՌԱՅԻՆ
ԴՐՄԵՎՈՐՄԱՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՑ***

Պապիկյան Միլվա
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Հոգի բառը ծագում է հ.-ե.**roio-* ձևից՝ **peu-* «փչել, շնչել» արմատից (ՀԱԲ¹, 3, 107-108): Ըստ Ջահուկյանի՝ հ.-ե. **poiio-* **pau-* **pau-* «փչել, ուռչել» արմատից (ՀԱԲ², 464): Սկզբնական նշանակությամբ՝ «ոգի, շունչ, քամի, օդ», նաև՝ «անձ, մարդ, շունչ, սիրտ» (ՆՀԲ³, 2, 113): Կրոնական պատկերացումներով՝ մարդուն կենդանիներից տարբերող և Աստծու հետ կապող ոչ նյութական անմահ էություն մարդու մեջ: Քրիստոնեական կրոնում՝ Սուրբ Երրորդության անձերից մեկը՝ Սուրբ Հոգի: Հետագայում բառը ձեռք է բերել նոր իմաստներ՝ «մարդու հոգեկան աշխարհ, բնավորություն, խիղճ, ոգևորություն»: Փոխաբերաբար նշանակում է «որևէ բանի հիմնական էությունը», «հակում, խառնվածք»: Թվականների հետ գործածվելիս նշանակում է անձ, մարդ՝ *երեք հոգի*: Գործածվում է որպես կոչական բառ (հատկապես *ս հոդով*)՝ «սիրելիս, հարազատս» նշանակությամբ (ՀԲԲ⁴, 3, 123): «Բառարան Սուրբ գրոցում»⁵ բառը բացատրվում է. «Նախնիք կը կարծէին, թէ մարդուս հոգին կը բնակէր մարդուս շունչին մեջ, և շունչին հետ կը մեկնէր մարմնէն: Ուստի երբայեցերէն և յունարէն բառերը, երբ խոսքը մարդու վրայ է, կը թարգմանուին մեր Աստուածաշունչին մեջ »հո-

* Ջահուկյանական ընթերցումներ, Միջազգային գիտաժողովի զեկուցումներ, Եր., 2014, «Ատողիկ» հրատ., էջ 153-158:

¹ Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, (այսուհետև՝ ՀԱԲ) հհ. 1-4, Ե., 1971-1979 թթ.:

² Գ.Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ); Ե., 2010

³ Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), հհ. 1-2, Վենետիկ, 1836-1837:

⁴ Ս.Մայիսասեանց, Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), հհ. 1-4, Ե., 1944-1945:

⁵ Բառարան Սուրբ գրոց, Կոստանդնուպոլիս (այսուհետև՝ ԲՍԳ), 1881 (վերատպ. 1992), Ե., 1992, էջ 305:

գի», կը թարգմանուին «կենդանութիւն» կամ «շունչ», երբ անասնոց վրա է խոսքը: ...մարդուս մէջ կայ հոգևոր, բանաւոր և անմահ հոգի մը, որ է նիստ մեր մտածութեան, զգացմանց և իմաստասիրութեան, որ և կը զատէ զմեզ անբան արարածներէ, և յորում կը կայանայ գլխաւորապէս մեր նմանութիւնն ընդ Աստուծոյ»:

Հոգի բառը Աստվածաշունչ մատյանում գործածված է 460 անգամ⁶: Օրինակներ Ս. Գրքից. «Եւ ստեղծ Տէր Աստուած զմարդն հող յերկրէ. եւ փչեաց երեսս նորա *շունչ* կենդանի, եւ եղև մարդն *յոգի* կենդանի» (Օճն. Բ.7), ռուսերէնով՝ ”И создал Господь Бог человека из праха земного, и вдунул в лице его дыхание жизни, и стал человек *душею* живою” (Быт. 2. 7), «Նորա եւ ամենայն գազանք ըստ ազգի իւրեանց, եւ ամենայն սողուն շարժուն ի վերայ երկրի ըստ ազգի իւրեանց, եւ ամենայն հաւ թռչուն ըստ ազգի իւրում, մտին առ Նոյ ի տապան անդր երկու յամենայն մարմնոյ յորում է *շունչ* կենդանի» (Օճն. Է.15), “...и вошли к Ною в ковчег по паре от всякой плоти, в которой есть *дух* жизни” (Быт. 7. 15):

Օրինակներ մեր մատենագրութունից.

«Քանզի ոչ որպէս զարուեստ ուսուցանէր, այլ իբրև *զհոգի* առաքելաբար աշակերտացն տայր»⁷: «*Հոգի* երեսաց եւ զօրութիւն դեղոյ, Տէր Քրիստոս, օրհնեալ ի բարձունս»⁸: «Այսպէս *հոգին* էութիւն է և ընդունակ բարւոյ և չարի»⁹:

Հոգի բառը բաղադրութեան մեջ է մտնում *հոգե-* (հոգի+ա) և *հոգի* - ձևերով՝ *հոգեբուխ*, *հոգեզայրուստ*, *հոգեզեշ* (գիշերները գերեզմանից դուրս եկող և թափառող մեռել), *հոգեզրգիռ*, *հոգեդարձ*, *հոգեզավակ*, *հոգեզմայլ*, *հոգեզուրկ*, *հեզեթաս*, *հոգեթափանց*, *հոգեթով*, *հոգեխոռով*, *հոգեմաշ*, *հոգեշարժ*, *հոգեպարար*, *հոգեպա-*

⁶ Տե՛ս Համարաբար գրաբար Աստվածաշնչի, Հայաստանի աստվածաշնչային ընկերություն, Ս.Էջմիածին, 2012, էջ 1121:

⁷ Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն հայոց, Տիփղիս, 1913, էջ 340:

⁸ Գ.Նարեկացի, Մատենանոց Երկրպագութեան, Պուէնտս Այրէս, էջ 340:

⁹ Գ.Տաթևացի, Գիրք հարցմանց, Կոստանդնուպոլիս, 1729, էջ 23:

հուստ, հոգեվարք և այլն, հոգի՝ հոգիանալ, հոգիունակ, հոգիախաղաց, որպես բարդ բառի երկրորդ բաղադրիչ՝ հեղահոգի, դառնահոգի, երկայնահոգի, կարճահոգի և այլն:

Հոգի արմատով միջինհայերենյան բառեր՝ հոգեվարել (հոգեվարքի վիճակում լինել), հոգեպահ, հոգեփրկանք, հոգոյգալուստ (հոգեգալուստ) և այլն (ՄՀԲ¹⁰, 2, 43-44):

Հոգի բառը ԱՀԲԲ-ում բառն ունի 18 իմաստ (ԱՀԲԲ, էջ 885):

Անդրադառնանք հոգի արմատից բաղադրված *հոգեհաց* բառին:

Հոգեհաց բառը վկայված չէ գրաբարի մեզ հայտնի բառարաններում, ՄՀԲ-ում. վկայված է ՀԲԲ-ում՝ «հոգու հաց, որ ննջեցեալի տէրերը թաղումից հետո տալիս են յուղարկաւորներին և աղքատներին»¹¹ իմաստով (Մալխասյանցը ունի նաև *հոգեճաշ* բառը՝ նույն նշանակությամբ): Աճառյանը համարում է նոր բառ: Դժվար է ասել, թե *հոգեհացի* ծեսը եղել է հնում, թե՞ ոչ: Հին հայերի թաղման ծեսի նկարագրության մեջ Վ. Բոդյանը¹² նույնպես չի արձանագրում այդ բառը: Հավանաբար, այդ արարողությունն անվանվել է այլ բառով:

Հոգեհաց-ի արարողության համար թերևս կարելի է ենթադրելի համարել *գինեձօնութիւնը*-ը՝ «...եթէ անմահ է հոգին, վասն զի իւրովի ամենայն մարդ *գինեձաւնութիւնս* առնէ գնացելոցն և երդնուն նոքաւք»¹³: *Գինեձօնութիւն* բառը արձանագրված է

¹⁰ Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան*, հհ. 1-2, Ե., 1987-1992:

¹¹ *Հոգեհաց*-ը ռուսերեն թարգմանվում է *тризна* - “У древних славян пиршество в память умершего” կամ поминки - “пережиток религиозной старины- утешение после похорон в память умершего” (С. Ожегов, *Словарь русского языка*, М., 1970, стр. 550): “Славянс. Тризна может объяснено как производное от trizъ, откуда первоначальное знач. Тризна – “жертвенное заклинание трехгодовалого животного” (М. Фасмер, *Этимологический словарь русского языка*, т. 4, с. 102).

¹² Տե՛ս Վ. Բոդյան, *Հայ ազգագրություն*, Ե., 1974, էջ 171-179:

¹³ Դավիթ Անյաղթ, *Երկասիրութիւնք փիլիսոփայականք*, «Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի», Ե., 1980, էջ 204 (համահավաք քննական բնագրերը և առաջաբանը Ս. Արևշատյանի)(ցավոք, Դավիթ Անհաղթի այս երկի աշխարհաբար

Լ.Հովհաննիսյանի «Գրաբարի բառարանում»՝ «Որևէ բանի հիշատակին գինի նվիրելը» բացատրությամբ¹⁴: *Գինեձոնության* համապատասխան զուգահեռներ գտնում ենք այլ ժողովուրդների թաղման ծիսակարգում: Հին հնդեվրոպական ցեղերի թաղման արարողությունների մասին Թ.Գամկրելիձեն և Վ.Իվանովը գրում են, որ դիակիզման հաջորդ օրը՝ *լույսը բացվելուն պես*, կանայք գալիս են «հավերժական կրակի մոտ», հավաքում են մահացածի ոսկորները՝ կրակի վրա լցնելով գարեջուր, գինի և մեղրագինի¹⁵: Հին հույները դիակիզումից հետո կրակի վրա կարմիր գինի էին լցնում: Այսպես, Հոմերոսի «Իլիականում» Պատրոկլեսի դիակիզումից հետո Աքիլլեսը գինի է հեղում կրակի վրա, ապա ոսկորները հավաքելով ոսկե սափորի մեջ՝ նույն տեղում թաղում. «...Փչում էին գիշերն ի բուն, արծարծելով կրակը բորբ. Եվ Աքիլլեսն ամբողջ գիշեր կրկնատաշտակ իր բաժակով Ոսկյա կժից կարմիր *գինին* առնում ու հեղում էր գետնի վրա. Թրջում էր հողն ու ձայն տալիս Պատրոկլեսի թշվառ հոգուն»¹⁶: Հեկտորի դիակը Աքիլլեսից վերցնելիս Պրիամոսը՝ Հեկտորի հայրը, խնդրում է. «Շնորհի՛ր ուրեմն մեզ ինը օր, որ սուզ անենք նրա վրա, Ու տասներորդ օրը թաղենք, որ *հոգու հաց* ուտեն մարդիկ» (ն.տ., էջ 461):

Հին սլավոնները թաղման հաջորդ օրը գերեզման այցելելը անվանում էին «արթնացնել ննջեցյալին» կամ նախաճաշ (завтрак) տանել: Ուշակովի բառարանում «հոգեհաց» – “тризна” բառը բացատրվում է. “У древних славян поминки умершем, сопровождавшиеся пиршеством” – Ковши круговые запеняясь шипят на тризне

և ռուսերեն թարգմանությունները չկան. այն մեզ է հասել միակ ձեռագրով և թերի վիճակում (Մատենադարանի թիվ 1930 ձեռագիր). պակասում է աշխատության մեկ երրորդը:

¹⁴ Լ.Հովհաննիսյան, Գրաբարի բառարան. ՆՀԲ-ում չվկայված բառեր, Ե., 2010, էջ 85:

¹⁵ Т. Гамкрелидзе, В. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, т. 2, Тбилиси, 1984, с.826.

¹⁶ Հոմերոս, Իլիական, Ե., 1987, էջ 424 (թարգմ.՝ Մ.Խերանյանի):

плачевной Олега (Пушкин)¹⁷: Մեկ այլ բացատրությամբ՝ 1. Заключительная часть похоронного обряда у древних славян, состоявшая из жертвоприношений, военных игр, состязаний, борьбы, а позднее из поминального пиршества. 2. Церковный обряд похорон или поминовения усопшего. Обрядовое угощение с вином в память умершего после похорон или в день годовщины его смерти: “При возвращении с кладбища начинался тризна в честь покойника, и родственники и друзья бывали пьяны два, три дня или целую неделю” (Пушкин, История села Горюхина)¹⁸:

Խ. Սամուէլեանը «Հայ ընտանեկան պաշտամունքը» հոդվածում¹⁹, անդրադառնալով հայերի՝ մեռյալների հոգիներին կերակրելու և խմեցնելու հավատալիքներին, կարծում է, որ դա, անշուշտ, պատմական ժամանակներից է հասել մինչև մեր օրերը: «Գերեզմանի վրայ խմելու սովորություն մասին մեզ տեղեկություն է տալիս Վաղարշապատի 4-րդ ժողովում յօրինած (426թ.) կանոնների ԻՍ յօդուածը. «մի թոյլ տացեն քահանայք *գիներբուս* առնել ի սուգս մեռելոց և կամ կոծ դնել և աշխար առնել»²⁰: ՆՀԲ-ում *գիներբուս* բառի բացատրությունը հղվում է *գինարբուս* բառին՝ «ուտելն և ըմպելն. խնջոյք, խրախունք, կոչունք» (ՆՀԲ, 1, 552): Հայաստանի տարբեր շրջաններում պահպանվել է գերեզմանի վրա խմիչք լցնելու սովորությունը: Ննջեցյալի ազգականները ողորմաթաս են խմում՝ նախապես մի քիչ օղի կամ գինի լցնելով գերեզմանի վրա, ապա նստում են գերեզմանի կողքին և ուտում անից բերած ուտելիքները: «Ի վերջոյ ճաշի մնացորդները թողնելով

¹⁷ Толковый словарь русского языка, Госиздат. иностранных и национальных словарей, т. 4, М., 1940, с. 802:

¹⁸ Словарь русского языка АН СССР, Институт Русского языка, т. 4, изд. “Русский язык”, М., 1984, с. 413.

¹⁹ Ազգագրական հանդէս, 1904, 12-րդ գիրք, էջ 203-234:

²⁰ Մբէլ արքեպ. Մխիթարեան, *Պատմութիւն ժողովոց Հայաստան. եկեղ. .*, էջ 52 (հղումը՝ ըստ Խ.Սամուէլեան, նշվ. աշխ., էջ 2):

գերեզմանի վրայ և աւելացած խմիչքներն ածելով գերեզմանի վրայ՝ վերադանում են» (ն.տ., էջ 232):

Հոգեհաց բառը շատ հոմանիշներ ունի՝ *հոգեճաշ, հոգու հաց, մեռելահաց, ողորմաճաշ, այգալաց, գիշերժամ, սգահաց* ևն: Հոմանիշային շարքում *այգալաց* բառի առկայությունը հուշում է, որ հասկացությունը գոյություն է ունեցել քրիստոնեությունից առաջ: *Այգալաց* բառը ՀԲԲ-ում հետևյալ բացատրությունն ունի. «1. Կրօնական արարողութիւն, որ կատարվում է ննջեցեալի գերեզմանի վրայ թաղման յաջորդ օրը: 2. Այդ նոյն օրը և նոյն տեղում կատարված սուգը՝ լացը: 3. Էզլաց, հացկերույթ, որ ննջեցեալի տէրը տալիս էր թաղման քառասունքին, կամ քառասունքի բոլոր կիրակնամուտներին» (ՀԲԲ, 1, 74):

Այգլաց-ը որոշ առնչություններ ունի *այգողբ* բառի հետ, որ ժողովուրդն անվանում է *այգողբ, էզնահող, ինքնահող*: Տեղի է ունեցել *այ>է*, ապա *է>ի* հնչյունափոխություն: *Այգ-ը*՝ «առավոտյան պահը արևածագից առաջ, վաղ առավոտ» իմաստով (ԱՀԲԲ, 38) որպես արմատ բարբառներում չի պահպանվել, բայց կան դրանից բաղադրված բառեր²¹՝ *այգուց > էգուց*՝ առաջացած *այ>է* հնչյունափոխությամբ, *էքլաց* (Հմշ.)՝ «քելեխ» իմաստով, *էքպարեվ* (Վն.)՝ «այգբարև՝ ամուսնության հաջորդ առավոտյան նորապսակ զույգի կտուր բարձրանալը և նվագածուների ուղեկցությամբ արևին ողջունելը» (ՀԱԲ, 1, 166):

Այգաողբ (այգողբ) բառը թյուրմբռնման հետևանքով դարձել է *ինքնահող*՝ իբր «իբ հողին այցելելը»: Բարբառներում անվանում են նաև *էգաֆողեք, քքնաֆողեք* (Ար, Լ.Աշտ. Ղրբ.), *էգողբ* (Մշ.)՝ «Թաղման հաջորդ օրը ննջեցյալի գերեզմանը այցելելը, գերեզմանի վրա կատարվող սուգը և դրա հետ կապված արարողությունները, այգլաց»:

Թեև *հոգեհաց* բառը վկայված չէ գրաբարի մեզ հայտնի բառարաններում, բայց կա բարբառներում (Ար., Ակն., Կր., Խրբ., ՆՆ.)՝

²¹ Հայոց լեզվի բարբառային բառարան (այսուհետև՝ ՀԼԲԲ), Բ, Ե., 2002 :

հոգեհաց կամ *հոգուհաց*, Սեբաստիայի բարբառում՝ *հոգիք*։ Հայերենի մի շարք բարբառներում (Ար., Թբ., Ուրմ., Ամս., Կր., Խտջ.) *հոգեհաց*-ի համար գործածվում է *ժամահաց* բառը՝ «հոգեհաց, որ տրվում է ննջեցյալի հիշատակին պատարագից հետո» (ՀԼԲԲ, Բ, 154)։ Ի դեպ, Ղարաբաղի բարբառում *հոգեհացի* արարողությունը անվանում են *բաղարաքի* (*պատարաքի*), որ ննջեցյալի հարագատների կողմից հիշատակի ծիսային ճաշկերույթ է։ Բայազետի բարբառի Սարուխանի խոսվածքում *հոգեհաց*-ին ասում են «պաղարաք», «պաղարաք լցնել» արտահայտությունը նշանակում է հոգեհացին տրված ուտելիքը լցնել, բաժանել։

Արարատյան բարբառում *պատարագատուն* նշանակում է «մեռելատուն»։

Բարբառներում *ժամ* բառն էլ, «եկեղեցի» իմաստից բացի, ունի «ննջեցյալի հիշատակին պատարագ և հոգեհաց», *ժամատուն* բառը՝ նաև «մեռելատուն, որտեղ հոգեհաց է տրվում», *ժամ անել* կապակցությունը՝ «ննջեցյալի հիշատակին հոգեհաց տալ» իմաստները (ՀԼԲԲ, Բ, 152-153)։

Շատ դեպքերում *ժամ* և *պատարագ* բառերը հանդես են գալիս որպես շաղկապական բարդություն՝ *ժամ ու պատարագ* (Էն մենավոր ծառի տակ փոս փորեցին մի խորին, Առանց ժամ ու պատարագ, Մեջը դրին Մարոյին (Հ. Թումանյան, Մարոն)։

Պաշտումահաց բառը Արարատյան և Ղարաբաղի բարբառներում ունի «հոգեհաց, հուղարկավորությունից հետո ննջեցյալի հոգու համար տրվող հացկերույթ» իմաստը՝ «Իրիկույա ժամը որ դուս էկաւ...էկան ննջեցելատիրոջ տունը, պաշտումահաց կերան»։

Հոգեհացի համար կարելի է աղերսներ որոնել հունարենից փոխառյալ *ագապ/ե/* բառի հետ։ *Ագապ (ե)*՝ հունարեն *ἀγάπη*, ՆՀԲ-ն բացատրում է. «Մէր. սիրելու. որպէս հացկերոյթ. կերակուր արարեալ ի սիրոյ և միաբան սիրով՝ մանաւանդ ի պէտս ողորմութիւնէ աղբատաց, և յօժանդակութիւն հոգւոց ննջեցելոց» (ՆՀԲ, 1, 3)։ ՀԲԲ-ում բառը բացատրվում է. «1.Քրիստոնէության սկզբնական

շրջանում հավատացյալների համայնական ընթրիք ի հիշատակ խորհրդավոր ընթրիքի, որի ժամանակ մասնակցողները համբուրում էին միմյանց ի նշան հաշտության: 2. Մատաղ» (ՀԲԲ, 1, 3):

Հին հունարենում *ագապ/ե/* (սեր) բառից բաղադրված բայը՝ *ἀγάπαω*, իր հիմնական՝ «սիրել» իմաստից բացի՝ ունի «ննջեցալին պատիվներով հուղարկավորել, մասնակցել հուղարկավորությանը» իմաստները²²:

Ագապ/ե/ բառը բազմիցս գործածված է «Հայոց կանոնագրքերում»: «Կանոնագիրք հայոց»-ում կա այսպիսի օրինակ՝ «Ի յիշատակ վախճանելոցն յընտանեաց նոցա, որ ինչ ըստ կարգի արինաց քրիստոնէութեան, գոր հրամանաւ սուրբ հարցն կատարեն զմխիթարութիւն նոցա կամ զքառասունս եւ զազապս ի հանգիստ նոցա...»²³:

Ագապ բառը ժողովուրդը չի գործածում, բայց հասկացության հետքերը պահպանվել են, ինչպես Զատկի և Մուրբ խաչի մեռելոցների հասարակաց ճաշեր կազմակերպելը:

Այսպիսով, ընդհանրացնելով վերոշարադրյալը *հոգեհաց* հասկացության և նրա բառային դրսևորումների մասին, կարելի է ենթադրել, որ հեթանոսական գաղափարախոսության հետ առնչվող թաղման այս ծիսական արարողությունը անվանվել է այլ բառերով, սակայն հասկացությունը (հնարավոր է նաև բառը) պահպանվել է բարբառներում և, հավանաբար, բարբառներից էլ անցել է գրական հայերենին:

Papikyan Silva-From the History of the Concept ‘հոգեհաց’ hogehac, (repast) and Its Display.- The word ‘հոգեհաց’ “hogehac”; formed by the

²² Дворецкий И.Х., Древнегреческо-русский словарь, М. 1958:

²³ Կանոնագիրք հայոց, հ. Բ, Ե., 1964, էջ 15 (աշխատասիրությանը՝ Վազգեն Հալոբյանի):

root word 'hnh' "hogi" (soul), is not certified in Ancient Armenian dictionaries. For this word in Ancient Armenian, it is supposed to be the word 'qhntadonipin' "ginedzonutyun". The word was used by Davit Anhaght. We can find similarities of the 'qhntadonipin' "ginedzonutyun" ritual in other nations' burial rites. The word 'hnhuag' "hogehac" has many synonyms: hogačāš, hoga hac, merelahac, aygalac, giseražam, sgahac etc. The presence of the word "aygalac" among synonyms proves that the concept has existed before Christianity.

Папикян Сильва - Понятие слова "hogehac" и его лексическое значение.- Слово "hnhuag" (hogehac) образованное от слова "hogi" не встречается в словарях древнеармянского языка. Для обозначения этого понятия в древнеармянском языке употреблено слово qhntadonipin (ginejonutyun). В похоронных ритуалах других народов мы можем найти параллели "ginejonutyun". Слово "hogehac" имеет много синонимов - hogačāš, hoga hac, merelahac, aygalac, giseražam, sgahac и т.д. Присутствие "aygalac" в синонимическом ряду подсказывает, что это понятие существовало еще до христианства.

ԽԱՂՔ – ԽԱՅՏԱՌԱԿ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԸՄԲՈՒՆՈՒՄԸ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ*

Պապիկյան Միլվա
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Խաղք-ը *խաղ* բառի հոգնակին է, որի հոգնակիակերտ *ք*-ն ժամանակի ընթացքում կորցրել է հոգնակիի նշանակությունը և ձեռք բերել ածանցի արժեք: Ածանցը, ինչպես հայտնի է, կցվելով բառարմատին կամ հիմքին, փոխում է նրա իմաստը, կազմում նոր բառ նոր իմաստով: *Խաղք*-ը, ժամանակի ընթացքում իմաստափոխվելով, ձեռք է բերել նոր իմաստ, սակայն չի կորցրել իր նախնական իմաստերից մեկը՝ «ծաղր, կատակ, այպն»¹ (ՆՀԲ, 1, 915):

Խաղք բառը ՆՀԲ-ում *ռամկ*. նշումով է՝ «ամօթալից, այպն, ծանակ», և բացատրությունը հղվում է «խաղ» բառին, օրինակ՝ «*Խաղք ու խայտառակ* կացուցանէ զսատանայ ապաշխարութիւն»²: Մալխասյանցի ՀԲԲ³-ում բառը բացատրվում է «խայտառակ»:

Բարբառներում *խաղք*-ից կազմված են՝ *խաղքընալ* (Էվր.) «բամբասանքի առարկա դառնալ, խայտառակվել», *խաղքոել* (խաղքոնել, խաղքրել)՝ «ամոթանք տալ, խայտառակել», *խաղք լինել*՝ խայտառակվել, *խաղք շինել*, *խաղք ու խայտառակ անել* (*էնել*, *ընել*, *խաղք ու առակ դառնալ* «խայտառակվել», *խաղք ու խայտառակ լինել* (*ըլնել*), *Պոլսի բարբառում՝ խաղք ու պատառ ընել* «խայտառակել», *խաղք-խատիկ էլնել* (Վն.) հարադիր բայերը, *խաղքին դուռը* (Պլ.) «խայտառակ», *խաղք-խատիկ* (Վն.) «խայտառակություն», *խաղքկտոր* (Մլթ.) «խայտառակ, խայտառակություն», *խաղքություն* (Թբիլիսի, Պոլիս, Վան, Կարին) բառերը: Կա

*«Հայ բարբառագիտության հիմնախնդիրները » միջազգային գիտաժողով, Եր., 2014, էջ 144-151:

¹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, (այսուհետև՝ ՆՀԲ), 1836-1837, հ. 1, էջ 915:

² ՆՀԲ, էջ 917:

³ Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), Ե. 1944-1945, հ. 2, էջ 234-235:

ասացվածք՝ «*Խաղք* էդանք, խաղող ալ չկերանք», այսինքն՝ «Ոչինչ չշահեցինք, անտեղի խայտառակվեցինք»:

ՀԼԲԲ-ում *խաղք* բառն ունի հետևյալ իմաստները. «1. Խայտառակ վիճակ, խայտառակություն: 2. Ծաղրի առարկա: 3. Տիկնիկ, պաճուճապատանք: 4. Ժողովրդական զվարճություն՝ խեղկատակություն բարեկենդանի ժամանակ⁴»:

Խաղք շինել արտահայտությունը, ինչպես բացատրում է ՀԲԲ-ն, ժողովրդական զվարճություն էր բարեկենդանի ժամանակ. իշխաններին, փաշաներին ծաղրելու համար. մի մարդու հագնում էին իշխանի կամ փաշայի նման, երկար բեղերով, ասարկու կերպարանքով, էշին հակառակ նստած, ձեռքին ճիպոտ, հագին փալասներ, երեսին մուր քսած, հանդիսավոր կերպով ման էին ածում փողոցներով. *խաղք եղածը* էշի վրայից իշխանական հրամաններ էր արձակում, իսկ բազմությունը նրան ծաղր ու ծանակի էր ենթարկում՝ շարունակ բղավելով՝ «յալլա՛, յալլա՛ »:

Խաղքին մասնակցողները երեսները սպիտակեցրել են այլուրով, և այդ սովորությունը պահպանվել է դարերով: Գ. Լևոնյանը, հղելով Պերճ Պռոշյանին, բերում է Փարսի գյուղում կատարվող *խաղքի* ներկայացումները: *Խաղքի* մասնակիցների վրա այլուր է շաղ տրվում. «... իսկ վերևից այլուրը շաղ են տալիս խանի գլխին, փոշին ողջ բակը բռնում է, բոլորն այլուրոտվում են»⁵:

Բարբառներում և ժողովրդախոսակցական լեզվում *խաղք* բառը սովորաբար գործածվում է *խայտառակ* բառի հետ՝ *խաղք ու խայտառակ*:

Խայտառակ բառի գործածությունը V դարից է: Ըստ ՆՀԲ-ի՝ «առակելի կամ առակեալ՝ խաղ առնելով. առակ նշավակի, ծանակ, ծաղաճանակ ևն ...» (ՆՀԲ, 1, 918): Կազմված են *խայտառակաբար*,

⁴ Հայոց լեզվի բարբառային բառարան (այստուհետև՝ ՀԼԲԲ) Ե., 2002, հ. Բ, էջ 273:

⁵ Գ.Լևոնյան, Թատրոնը հին Հայաստանում, Ե., 1941, էջ 153: Այստեղից էլ՝ «Անալուր խաղք էր, մնաց, որ այլոտավ» ասացվածքը (Հ.Աճառյան, Գավառական բառարան, Էմինյան ազգագրական ժողովածու, Մոսկվա, 1913, էջ 168):

խայտառակագոյն, խայտառակամահ, խայտառականք, խայտառակեմ, խայտառակիչ, խայտառակութիւն բառերը: Աստվածաշունչ մատյանում բառը գործածված է երեք անգամ⁶: Օրինակ՝ «...եւ բազմացար, եւ մեծացար, եւ եկիր մտեր դու ի քաղաքս քաղաքաց, ստինք անկան քո, եւ մազք արձակեցան, եւ դու մերկ էիր, *խայտառակ*» (Եզեկ. ԺԶ. 7)՝ «Աճեցիր և ուռճացար, եկար մտար քաղաքների այս քաղաքը, ստինքներիդ կազմավորվեցին, մազերդ փարթամացան, բայց դու խայտառակ կերպով մերկ էիր» (խոսքը Երուսաղեմ քաղաքի մասին է). «Եւ ընկեցից ի վերայ քո պղծութիւնս եւ զաղտեղութիւնս քո եւ արարից զքեզ *խայտառակ*» (Նաւում, Գ. 6)՝ «Քեզ վրայ պիտի նետեմ քո պղծություններն ու աղտեղությունները և *խայտառակ* պիտի անեմ Քեզ» (Աստուածաշունչ, 1999) (խոսքը Նինվե քաղաքի մասին է):

Ժամանակակից հայերենում բառի հիմնական իմաստներն են՝ «1. ամոթալի, 2. ծաղր ու ծանակի առարկա դարձած, 3. վատ, անհանդուրժելի, 4. ստորացուցիչ, 5. Վարկաբեկված»⁷:

Խայտառակ բարդ բառը կազմված է *խայտ* արմատից և *առակ* բառից՝ «նշավակ ծաղրի առականաց նշան» բացատրությամբ⁸:

Խայտ բառը հնդեվրոպական նախալեզվից է՝ *khaid- արմատից (ՀԱԲ, 2, 327): Ունի «1. ած. բիծ ունեցող, պիսակաւոր, խատուտիկ, 2. գ. բիծ, նշան» իմաստները (ՀԲԲ, 2, 237):

Աճառյանը *խայտ* արմատի «նշան» իմաստից է առաջացած համարում *խայտառակ, խայտառակամահ, խայտառականք, խայտառակել* բառերը (ՀԱԲ, 2, 326):

Խայտ առանձին անգործածական արմատը ունի նաև «ուրախութիւն, ցնծութիւն» իմաստը՝ *խայտալ, խայտանք, խայտալից, խայտախնդրութիւն, բացախայտալ* (ՀԱԲ, 2, 327):

⁶ Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի, Ս. Էջմիածին, 2012, էջ 856:

⁷ Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, (այսուհետև՝ ԱՀԲԲ), Ե., 1976-1979, էջ 560:

⁸ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, (այսուհետև՝ ՀԱԲ), Ե., 1971-1979, հ. 2, էջ 326:

Առակ-ը կազմված է *առ* նախդիրից և *ակն* «աչք» բառից՝ *առակն*։ նախնական նշանակությունն է «օրինակ» և հաճախ գործածվում է *օրինակ* բառի հետ՝ *առակ օրինակի*։ Ունի նաև «դիտելու բան, տեսնելու առարկա» իմաստը (ՀԱԲ, 1, 249)՝ «Որպես *առակն* ամենեքեան զարմացմամբ հային (Ն. Լամբրոնացի, օրինակն՝ ըստ ՆՀԲ, 1, 283)։

ՆՀԲ-ում բառը բազմիմաստ է. «1. Առած նմանաբանական կամ այլաբանական, 2. Առեղծանելիք, մթին ասացում, 3. Օրինակ, ձև, 4. Ինչ մի առաջի եղեալ ի տեսիլ ամենեցուն, կամ առարկայ հանդիսի, 5. Որպես Ջրոյց հասարակաց, առած, 6. Որպես Առակ նշուակի, նշուակ, ծանականք. նախատինք. խայտառակություն և խայտառակ (ՆՀԲ, 1, 285)։ Վերջին իմաստի համար օրինակներից մեկը Մանդակունու ճառերից է. «Ձկապեալս մեղօք զմեղաւորսն յաշխարհատես հրապարակին ցուցանիցեն *առակ* և ծանակ՝ անտանելի ամօթով» (ՆՀԲ, 1, 283)։ Աստվածաշունչ մատյանում *առակ* բառը գործածված է 115 անգամ, ընդ որում, Նոր կտակարանում՝ ավելի շատ։ Հին և Նոր կտակարաններում բառի իմաստերի միջև նրբերանգային տարբերություններ կան։

Հին կտակարանում՝ «Եւ տաց զդոսս ի ցրումն ընդ ամենայն թագաւորութիւնս երկրի, եւ ի նախատինս, եւ *յառակ*, եւ ատելութիւն եւ յանէծս յամենայն տեղիս ուր մերժեցից զդոսս անդր» (Եր. 24. 9), աշխարհաբարով՝ «Դրանց պիտի ցրեմ աշխարհի բոլոր թագավորությունների մէջ՝ նախատինքի, *անարգանքի*, ատելութեան և անէծքի արժանացնելով ամենուրեք....» (Աստվածաշունչ, Ս. Էջնիածին, 1999)։ *Առակ*-ը թարգմանված է *անարգանք*։

Սողոմոնի առակներում (Դավթի որդի Սողոմոն թագավորին վերագրվող առակները), որոնք ունեն բարոյախրատական բնույթ, կարևորվել է մարդկային կյանքում ձեռք բերված փորձառության փոխանցումը մի սերնդից մյուսին. այստեղ *առակ* բառն ունի խրատի, խոհի, իմաստության զաղափար։

Նոր կտակարանում բառի իմաստը հիմնականում կապվում է Քրիստոսի առակների հետ, քանի որ նա ժողովրդին հասկանալի

լինելու համար իր վարդապետությունը բացատրում էր առակների միջոցով⁹: Այստեղ *առակ*-ը այլաբանական իմաստ ունի:

Միջնադարյան *առակ* հասկացությունը ավելի լայն է, քան գիտակցվում է այժմ: Միջնադարյան բեմական արվեստում, առավելապես նրա հին, բանահյուսական ձևերում *առակն ու խաղը*, խոսքն ու դրությունը երբեմն հանդես են գալիս փոխներթափանցված: Մարդկանց հետաքրքրել են ոչ միայն դրությունները (նոր տերմինով՝ բեմավիճակները), այլև խոսքը, սրամիտ երկխոսությունները, համեմատությունները:

ՀԲԲ-ում *առակ* բառն ունի 6 իմաստ. այստեղ բառի առաջնային (դոմինանտ) նշանակությունն է «Համառոտ պատմուածք, արձակ կամ ոտանաւոր, որի մէջ դուրս են բերվում մարդիկ, անասուններ, նույնիսկ անշունչ առարկաներ, այլաբանական արտաքին ձևով, որի տակ թաքնված է ներքին բարոյական իմաստ»: «Նմանություն, օրինակ»-ը բառի երրորդ իմաստն է (ՀԲԲ, 1, 214):

Ժամանակակից հայերենում *առակ*-ը բարոյախոսական բնույթի գրական ստեղծագործություն է, որտեղ այլաբանության միջոցով ներկայացվում, ծաղրվում և քննադատության են ենթարկվում մարդկանց արասները: Մովորաբար *առակի* վերջում հեղինակը դրսևորում է իր հատուկ վերաբերմունքը նկարագրածի հանդեպ, որն էլ առակի բարոյախոսությունն է: Առակը օգնում է մարդուն սովորել օրինակով: Այն դաստիարակչական բնույթ ունի: Ժողովրդական առակները եկեղեցականների կողմից համարվել են գեղջկական, ուստի՝ անարժեք՝ իրենց աշխարհիկ բնույթի պատճառով:

⁹«Եւ խօսէր ընդ նոսա բազումս *առակօք*...» (Մտթ..13.3) կամ «Զայս ամենայն խօսեցաւ Յիսուս առակօք ընդ ժողովուրդսն, եւ առանց *առակի* ոչինչ խօսէր ընդ նոսա» (Մտթ. 13. 34):

Բարբառներում *առակ* բառը հիմնականում ունի «խայտառակ» իմաստը, Պոլսի բարբառում *անգոց առագ* նշանակում է «շատ խայտառակ», Նոր Նախիջևանի բարբառում՝ *առկէ ելնէլ*՝ «ամոթը կորցնել», *առակ անել* (Ղրբ.)՝ «խայտառակել», *առկէ հանել*՝ «անպատկառ դարձնել», *առակել* բայը՝ «խայտառակել»՝ «Աղվոր մը *առակեցի* անոր» (ՀԼԲԲ, Ա, 97):

Անառակ բառը կա շատ բարբառներում. ընդ որում, **արևմրտյան** բարբառներում այն ունի «չար, անհանդարտ» իմաստը, մինչդեռ արևելյան բարբառներում՝ «անբարոյական, լկտի» իմաստները: Ինչպես նշում է Աճառյանը, Ոգմի բարբառում «անառակ» նշանակում է «խելացի, իմաստուն», իսկ *առակօք*-ը՝ «անառակ» (տե՛ս ՀԱԲ, 2, 250):

Առակ բառը մի քանի բարբառներում՝ Մուշ, Պոլիս, Սեբաստիա, նշանակում է «հայիռյանք, նախատական խոսք, հանդիմանություն»՝ «*Առակ* չմնաց, տվավ», «*Առակ* չմնաց, տղուն գլխուն թափեց» (ՀԼԲԲ, Ա, 97): *Առակ-գառակ* (Մուշ, Վան), *առակ-չառակ* (Վան), *առակ-պառակ* (Ար. Ղրբ.) բառն ունի «խաղբ-խայտառակ, լարախաղացի ծաղրածու», Վանի բարբառում՝ նաև «սեթևեթանք» իմաստները: *Առակութեն* բառը Մշո բարբառում ունի «խայտառակություն» իմաստը. ընդ որում, ասվում է, երբ ծեր կինը կամ տղամարդը կրկին ուզում է ամուսնանալ:

Մի շարք բարբառներում *խայտառակ անել*, *խայտառակել* բայը նշանակում է «բռնաբարել, անպատվել» (Ղրբ.), օր.՝ «Ասըմըն թա էդ գաղատ նախանց ըխչըկանը *խայտառակ ա արալ*» (ՀԼԲԲ, 2, 278): Գրական հայերենում այդ իմաստը չկա:

Տեսնենք՝ ի՞նչ առնչությունների են ենթարկվել *խաղբ* և *խայտառակ* բառերը:

Ինչպես նշեցինք, *խաղբ*-ը *խաղ* բառի հոգնակին է, որը հետագայում ենթարկվել է իմաստափոխության կցորդության հիմունքով: *Խաղ* բազմիմաստ բառի իմաստներից մեկն էլ հանդիսու-

թյան, ցուցադրության հետ է առնչվում, որից՝ *խաղալիկ*¹⁰ – պարող, *խաղարար*, *թատերախաղ*¹¹: Այս իմաստը պահպանված է ժամանակակից հանդիսանքային արվեստներում՝ թատրոն, կինո ևն (օր.՝ Վ. Փափագյանի *խաղը* հմայեց բոլորին):

խաղը շինել արտահայտությունը նշանակում էր ցուցադրել, ի տես ներկայացնել, *առակ*-ը նույնպես արտահայտում էր ցուցադրելու, աչքին տեսանելի դարձնելու իմաստը. *խայտ* առանձին անգործածական արմատը ունի «ուրախ, ցնծալի» իմաստը, ուրեմն *խայտառակ* բառը արտահայտում էր «ցուցադրվող, ի տես ներկայացվող ինչ-որ զվարճալի բան, ուրախ տեսարան» իմաստը:

Папикян Сильва, Восприятие понятий “xalk” и хайтарак в диалектах. - Слово xalk^c множественное число слова хаl. Частица k^c в течение времени потеряла значение множественности и получила смысл суффикса. В армянских диалектах от слова “xalk” образованы xalk^cnal, xalk^crel, xalk^c šinel, xalk^c u хайтарак anel, xalk^c u patař Ənel, xalk^c-xatik ēnel, xalk^cktor и другие слова и словосочетания.

В диалектах и народно-разговорном языке “xalk” обычно употребляется со словом “хайтарак”, которое состоит из и/е корня “хайт” и слова ařak- ař + акн. Отдельно неупотребляемый корень “хайт” имеет значение “веселый”. Слово “хайтарак” означало “показ какого-то веселого зрелища”.

Papikyan Silva - Understanding of “khaghk” and “khaytarak” (disgraceful, shameful) concepts in dialects. - “Khaghk” is the plural form of the word “khagh”. Over the course of time the plural suffix “k” has lost its plural

¹⁰ Կաքաւս կայթից և ցոյցս վազից, Խաղակցացն դիւսց գարշելեաց ճարտար խաբողաց ծուլութեամբս իմով շնորհեցի (Գ.Նարեկացի, Մատենանոցի հայկ. գրադարան, Ե., 1977, ԻԱ, էջ 72):

¹¹ Թատերախաղը՝ «խաղ թատերաց», անվանվում էին ժողովրդական խաղերը. «Յորժամ թատերախաղքն հարկանին՝ յայնժամ ողբայ եկեղեցի գկորուստ ժողովրդեան» (ՆՀԲ, 1, 798):

meaning and obtained affix value. Many words and expressions in dialects such as xalk'nal xalk'řel, xalk' šinel, xalk' u xaytarak anel, xalk' u patar Ənel, xalk'-xatik ēnel, xalk'ktor are composed of the word “khaghk”. In dialects and slang “khaghk” usually is used with the word “khaytarak”. “Khaytarak” is formed by the root word “khayt” and the word “arak”. The latter consists of the prefix “ar” and the word “akn” (eye). The root word “khayt” separately disused has the meaning of “funny, exultant”. The word “khaytarak” meant “displaying, showing something funny, a diverting scene”.

Պապիկյան Միլվա
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

ՆՀԲ-ի¹ հեղինակները, նրանց հետևողությամբ Հ.Աճառյանը և Գ.Զահուկյանը *Նեռ(ն)* բառի ծագումը կապում են Ներոն կայսեր անվանը (Ներոն – լատիներեն Nero՝ հ.-ե. *ner - «այր, տղամարդ») (ՀԱԲ², 3, 441, ՀՄԲ³, 565): Անդրադառնալով բառի ծագմանը՝ Հ. Հյուբշմանը գտնում է, որ հնչյունական օրենքներով կարելի էր բացատրել Ներոն-Նեռ անցումը, սակայն «հնչյունական օենքների ժամանակագրական հաջորդականությունը խանգարում է դրան»⁴:

Գրաբարի բառարաններում բացատրվում է «սուտ Քրիստոս, անսիրտ քրիստոս, չարագործ, չար ոգի»: Բարբառներում, ինչպես նաև ժամանակակից հայերենի ժողովրդախոսակցական տարբերակում ունի «դաժան, ռխակալ, խստասիրտ» իմաստները: Ս. Մալխասյանցի բառարանում բառն իր առաջնային (դոմինանտ) իմաստից բացի՝ ունի նաև ածականական իմաստ. «Չար, դաժան, ռխակալ (նեռ մարդ, նեռ օձ)» (ՀԲԲ⁵, 3, 451): Է.Աղայանի բառարանում՝

* Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները, Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., ՀՀ ԳԱԱ, «Գիտություն» հրատ., 2014, էջ 307-310:

¹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), հհ. 1-2, Վենետիկ, 1836-1837:

² Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հհ. 1-4, Ե., 1971-1979:

³ Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետև՝ ՀՄԲ), Ե., 2010:

⁴ «Քանի որ այն հնչյունական օրենքը, համաձան որի՝ վերջնականի ձայնավորը սղվում է, արդեն իսկ հին հայերենում գործել է, և, ընդհակառակը, քրիստոնեության և անգամ նախաքրիստոնեական պարթևական ժամանակաշրջանում վաղուց ի վեր դադարել է գործելուց»: Տե՛ս Հայնրիխ Հյուբշման, Հայագիտաան ուսումնասիրություններ, Ե., 2004, էջ 469:

⁵ Ս. Մալխասեան, Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), Ե., 1944-1945::

«1. Մուտ Քրիստոս: 2. փխբ. Չար՝ նենգ մարդ: 3. փխբ. Արյունարբու մարդ, գազան»⁶:

Ներոն և *Նեո* բառերի առնչակցության հիմքը հավանաբար Հովհան Ոսկեբերանի Թեսաղոնիկեցիների Երկրորդ թղթի մեկնության այս նախադասությունից է. «...զի խորհուրդն անօրէնութեան արդէն իսկ զօրանայ. զայս զՆերոնէ ասէ, որպէս թէ օրինակ էր նա Նեոին»⁷, ՆՀԲ-ի հեղինակներից Գաբրիել Ավետիքյանը այդ մասին գրում է. «...վասն զի Ներոն իւրով ամբարշտութեամբ, անգթութեամբ եւ անհաշտ թշնամութեամբ առ քրիստոնեայս՝ եղև անդրանիկ խորհրդական Նեոին, եւ պատկեր համատիպ. մինչ զի ոչինչ պակաս քան զՆեոն երևեալ ի չարութեան, կարծիք եղեն առ բարեմիտս՝ թէ նա ինքն իցէ Նեոն»⁸: Ինչպէս երևում է Գ. Ավետիքյանի մեկնությունից, Նեոի մասին «բարեմիտները» արդէն գիտեին և նրան համեմատում էին Ներոնի հետ՝ պատմության մեջ հայտնի որպէս քրիստոնյաների ոխերիմ հակառակորդ և հալածող:

Վարդան Այգեկցին գրում է. «...սուրբերն Աստուծոյ Հոգով աւելի վաղ տեսան ու պատմեցին Նեոի չարութիւնների ու դառը ժամանակի նեղութիւնների մասին» կամ «...որովհետեւ ամէն ոք, ով չի հաւատայ Յիսուս Քրիստոսին, ստուգապէս Նեո կկոչուի: Նաեւ ով մարդկանց չարաչար նեղութիւններ հասցնի, ճշմարտաբար Նեո կկոչուի»⁹: Ինչպէս երևում է օրինակներից, Նեոը Քրիստոսին հակառակորդ ու չարիքներ գործողն է: Համաձայն Գ. Տաթևացու մեկնաբանության՝ Նեոը ոչ թէ սատանա է, այլ, լինելով մարդ /Բ Թեսաղ. 2.3/՝ սատանայի արբանյակն է, որին խորթ են ինչպէս բնական, այնպէս էլ ավետարանական օրէնքները:

⁶ Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան(այսուհետև՝ ԱՀԲԲ), Ե., 1976, էջ 1061:

⁷ Յոհաննու Ոսկեբերանի «Մեկնութիւն թղթոցն Պաղոսի», հ. 2, Վենետիկ, 1862, էջ 463:

⁸ Մեկնութիւն ԺԴ թղթոց երանելոյն Պողոսի առաքելոյ, հ. Բ, Վենետիկ, 1811, էջ 885:

⁹ Վարդան Այգեկցի, Խրատներ, «Գանձասար» սատուածաբանական կենտրոն, Ե., 2008, էջ 146:

Նեն/ն/ բառը Աստվածաշունչ մատյանում գործածված է հինգ անգամ¹⁰՝ Նովհաննես առաքյալի ընդհանրական թղթերում՝ Ա Յհ. 2.18, Ա Յհ. 2.18, Ա Յհ. 2.22, Ա Յհ. 4.3, Բ Յհ.1.7 (համապատասխան տեղերում՝ հունարեն, լատիներեն, ասորերեն, վրացերեն բնագրերում, Անտիքրիստոս բառն է գործածված) և դրանց մեկնություններում՝ Նովան Ոսկեբերանի «Մեկնություն Աւետարանին Յոհաննու», Եփրեմ Ասորու «Մեկնություն թղթոցն Պօղոսի առ Հռովմայեցիս» և այլն:

Գ.Տաթևացին «Գիրք հարցմանց»-ում¹¹ *նեն* բառը գործածել է 38 անամ. ընդ որում, բառի իմաստը դարձյալ առնչվում է չարի գաղափարին. հմմտ. «Եւ սատակեալ վիշապին տուտն է նեոն, որ ի վերջին ժամանակս քարշէ զերրորդ մասն աստեղաց» (Գիրք հարցմանց, էջ 706):

Ղ.Ալիշանը իր «Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը» աշխատության մեջ, խոսելով տարբեր չար ոգիների մասին, անդրադառնում է նաև *Նենին*: Նա այնքան էլ չի հավատում *Ներոն-Նեն* զուգադրությանը: Ալիշանի կարծիքով՝ «հին ժամանակներում հայերիս մեջ ճանաչված պիտի լինի այդ անունը կրող մի չար ոգի, և մեր թարգմանիչները այդ անունով կոչել են դերաքրիստոսին»¹²: Ալիշանի այս միտքը զարգացնում է Թ.Ավդալբեգյանը «Միհրը հայոց մէջ» հոդվածում (Հանդէս ամսօրեայ, 1928, էջ 418-428): Նա հավանական է համարում *Նեն/ն/* բառի ծագումը Միհր աստծու անունից. բերում է *Միհր-Մեհր-Մեր-Ներ-Նեն-Նեն/ն /* փոփոխակաները:

Հեղինակի կարծիքով՝ Ներոնի ժամանակ հայերը հռոմեացիների հետ շատ լավ հարաբերությունների մեջ էին, և հեթանոս հայերը առիթ չունեին անեծքով հիշելու Ներոնին. ընդհակառակը,

¹⁰ Համարաբար գրաբար Աստվածաշնչի, Հայաստանի աստվածաշնչական ընկերություն, Ս.Էջմիածին, 2012, էջ 1348:

¹¹ Գ.Տաթևացի, Գիրք հարցմանց, Կոստանդնուպոլիս, 1729:

¹² Ղ.Ալիշան, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Ե., 2002, էջ 121:

հայտնի է, որ հայոց Տրդատ Առաջին արքան մեծ պատիվներով հյուրընկալվել է Հռոմում, իսկ Հռոմից վերադառնալուց հետո Ներոնի տված գումարով վերանորոգել է Արտաշատը և ի պատիվ կայսեր՝ անվանել «Ներոնիա»:

Միհրը լույսի, արևի, կրակի աստվածն էր միհրապաշտների մոտ: «Սակայն այդպես չէր կարող լինել ոչ-միհրապաշտների շրջանում: Ինչպես որ քաջ Արտաւագղը դառնում է դեւ Արտաւագղ, այնպես էլ լուսաւոր, բարի Միհրը միհրատեացների միջավայրում դառնում է «վատ Միհր» (ն. տ., 498): Այսինքն՝ գաղափարախոսության փոփոխության հետևանքով հին աստվածները նսեմանում են, և Միհրը նեոնանում է: «Միհր անվան Նեոն բառ դառնալը և Միհր աստծու դիւացումը մենք ժամանակով անջատ ենք պատկերացնում. կարող է Միհր անունը հասած լինել Նեոն փոփոխակին՝ նախքան Միհրի դիւանալը: Ըստ այսմ, քրիստոնէութեան մուտքից առաջ էլ կարող են Միհրին ասած լինել Նեոն: Այս դեպքում դեռ Նեո-ը կրակի բարի աստուածն է: Հետագայում է, որ Նեոն ստանում է վատ իմաստ և նշանակում է «Դերաքրիստոս»՝ նույնանիշը դառնալով «վատմիհր» գաղափարին» (ն. տ., 503):

Կարծում ենք՝ Ղ.Ալիշանի, Թ.Ավդալբեգյանի փաստարկները համոզիչ են, և կարելի է ենթադրել, որ հայերենում եղել է *Նեո(ն)* անունով ինչ-որ չար ոգի, չարի կրող, և մեր թարգմանիչները Աստվածաշունչը թարգմանելիս Դերաքրիստոս բառի փոխարեն գործածել են հենց այդ բառը:

Եթե բառը ստացվածքային բառաշերտի հետ առնչություններ չունի, ապա դա թույլ է տալիս բառիմաստի ծագման այլ վարկածներ որոնել: Կարելի է առնչություններ որոնել *նեո/ն/և ների*՝ «արու այծ»բառերի միջև:

Ների բառը վկայված չէ ՀԱԲ-ում, մեզ հայտնի գրաբարի բառարաններում, ՄՀԲ-ում¹³. արձանագրված է ԱՀԲ-ում (էջ 1055),

¹³ Ռ.Ղազարյան, Հ.ավետիսյան, Միջին հայերենի բառարան, հհ. 1-2, 1987-1992:

ԺՀԼԲԲ-ում¹⁴ և ՀԼԲԲ-ում¹⁵ «արու այծ» նշանակությամբ: Իրանական լեզուներից փոխառյալ *նոխագ* բառը նույնպես «արու այծ» է նշանակում, որի ծագումը Հ. Հյուբշմանի հետևողությամբ Հ. Աճառյանը, ապա Գ.Ջահուկյանը կապում են միջին պարսկերեն գավառական մի ձևի՝ *nuhāz*՝ «արու այծ, որ հօտին է առաջնորդում» (ՀԱԲ, 3, 463, ՀՄԲ, 570):

Միջին պարսկերենի շրջանը մ.թ.ա. 4-3-րդ դդ. մինչև մ.թ. 10-րդ դարն է: Մի թե մինչ այդ հայերը չունեին «արու այծ» հասկացությունը անվանող բառ: Կենդանիների սեռային տարբերակումը կարևոր է եղել անասնապահությամբ զբաղվող հնդեվրոպական ժողովուրդների համար:

Կարծում ենք՝ «արու այծ» հասկացությունն անվանվել է *ների* բառով, որին փոխարինել է իրանական ծագումով *նոխագ*-ը:

Հիշենք հայերենի գունանունները, որոնցից միայն *դեղին*-ը և *դեղձան*-ը հնդեվրոպական ծագում ունեն. մյուս գունանունները՝ *կարմիր*, *կապույտ*, *սև*, *սպիտակ*, իրանական փոխառություններ են, մի մասի ծագումն անհայտ է: Հնարավոր չէ, որ հիշյալ գունանունները ծանոթ չլինեին հայերին: Հավանաբար, դրանք օտար բառերի ազդեցությամբ դուրս են եկել հայերենից: Կարծում ենք՝ նույն գործընթացն է տեղի ունեցել *ների* բառի հետ:

Այժը ինչպես առաջավորասիական տարածքի, այնպես էլ հնդեվրոպական ցեղերի պաշտամունքային կենդանիներից է եղել:

Այժի պաշտամունքը տարածված է եղել հեթանոսական Հայաստանում, որի մասին վկայում են Հայկական լեռնաշխարհում սփռված այծապատկերները (իծագրեր): Ժայռապատկերներում այծերը հաճախ պատկերված են արևանշանների ուղեկցությամբ¹⁶:

¹⁴ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 3, Ե., 1969, էջ 28:

¹⁵ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 2, Ե., 2007, էջ 152:

¹⁶ Հ. Մարտիրոսյան, Հ.Բարայեյան, Գեղամա լեռների ժայռապատկերները, Հայաստանի հնագիտական հուշարձանները, 6, Ե., 1971, աղյուսակ 302:

Այծի պաշտամունքի մասին հիշատակվում է «Սասունցի Դավիթ» էպոսում. «Բաղդասար քնուկ էր, մեկ գիշեր. Մեկ էլ տեսնի, ի՞նչ տեսնի լավ: Ջոջ կուռք էղավ իծու օրինակ, Մինչի լուս չթողեց, որ էն քներ, սթերե»¹⁷:

Այծը հայ ժողովրդական հեքիաթների գլխավոր «հերոսներից» է: Երբեմն նա բարի է, կրծքով կերակրում է անպաշտպան երեխային (Այծատուր, Այծամանուկ), երբեմն էլ հակառակվում է, սկսում է պարել կամրջի վրա, այստեղից՝ «էծի պարը կամրջին կբռնի» դարձվածքը:

Այծի պաշտամունքի լուռ վկայություններն են *այծ* արմատով կազմված տեղանունները՝ *Այծաբերդ*, *Այծապար*, *Այծամանց երկիր*, *Այծասար*, *Այծից բերդ* (*Այծաց բերդ*), *Այծպտկունք*, *Այծու պտկունք*:

Այծը Հայկական լեռնաշխարհի ցեղերից շատերի տոտեմական կենդանին է:

Այծին առնչվող հայերեն շատ դարձվածքներ կան, օր.՝ *այծ-այծ լինել*, *այծերը գալ*, *այծերը գնալ*, *այծերը քշել*, *այծերով (էծերով) մարդ*, *այծերը ոչխարներից ջոկել* և այլն: Հայերենի բարբառներում հանդիպում են՝ «*էծն իր ոտովը կկախեն, ոչխարը՝ իր*» (Կարին, Շիրակ)՝ այսինքն՝ ամեն մարդ իր հանցանքին համապատասխան պիտի պատժվի: «*էծին որ գելը չտանի, Երուսաղեմ կերթա*» (Կարին, Շիրակ), այսինքն՝ անարժանին որ հնարավորություն տաս՝ ինչ ասես՝ կանի¹⁸: Այծը ինչ-որ երկակի բնույթ ունի: Ինչպես հուշում են դարձվածքները, այծը հակառակվելու, ընդդիմանալու հատկանիշ ունի. ինչպես ժողովուրդն է ասում՝ «պոզերով է»: Այդպես են անվանում նաև կամակոր, ինքնասածի մարդուն (հմմտ.

¹⁷ Սասունցի Դավիթ, Հայ ժողովրդական հերոսավեպ, Ե., 1981, էջ 42:

¹⁸ Տե՛ս Ա. Մուքիայան, Ս. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975, էջ 225:

նան ֆր. caprice¹⁹ «քմահաճույք, ինքնահաճություն» < լատիներեն capra²⁰ «այծ»):

Ըստ բանահյուսական տվյալների՝ հեթանոսական Հայաստանում *նոխազը* (*ներիս*) գոհաբերվել է Սպանդարամետին (Սանդարամետին), որ անդունդների աստվածուհին էր: Հավանաբար անդրաշխարհի հետ կապված լինելու հանգամանքով է պայմանավորված մինչև վերջերս Հայաստանի տարբեր շրջաններում տարածված առաջին տարվա ննջեցյալին Սուրբ խաչին ուլ գոհաբերելու սովորությունը, որ ժողովուրդն անվանում է *ուլոց* կամ *ուլնոց*:

Փորձենք աղերսներ գտնել *Նեռ* և *ների* «արու այծ» բառերի միջև:

Նեռ-ը, ինչպես երևում է մատենագրական տվյալներից, հակառակորդ է, բարուն հակառակ, անօրեն: Այծը նույպես կամակորու հակառակվող է և, ինչպես բանահյուսական տվյալներն են հաստատում, առնչվում է անդրաշխարհին: Նեռը նույնպես առնչվում է անդրաշխարհին: Հ.Աճառյանը գրում է. «Հայերեն նեռ ձևից փոխառեալ եմ համարում կապադավկ. յն. *νήρια*, որ ըստ Karolides 200, գործածական է ժողովրդական երգերի մեջ իբրև «Քարոն կամ մահ». կանայք հասկանում են իբրև «միւս աշխարհը»: Կարոլիդեսը բառը կցում է սանսկրիտի *narakas* «ստորերկրյա աշխարհ» բառին (ՀԱԲ, 3, 442):

Ի մի բերելով վերոշարադրյալը՝ կարող ենք ենթադրել, որ *Նեռ/ն/* անվանումով չարի կրողը թերևս կապ ունի *ների*՝ արու այծի հետ: Հ. Աճառյանի նշած Կապադովկիայի հունարեն բարբառում հանդիպող *νήρια* (ներիա) բառը կարծես հաստատում է մեր ասածը: Փոխառու լեզուն հաճախ վերցնում է փոխատու լեզվի բառի մեկ կամ մի քանի իմաստներ: Հավանաբար, Կապադովկիայի հունարեն բարբառում այդ բառը հայերենից անցած ժողովրդական

¹⁹ Ганшина К., Французско-русский словарь, М., 1977, 131:

²⁰ Дворецкий И., Латино-русский словарь, М., 1986, էջ 120:

փոխառություն է, որում առաջնայինը համարվել է *ների* (այժ)բառի կապը անդրաշխարհի հետ:

Արու այծին՝ *նոխագին*, այն է՝ *ներիին*, առաջավորասիական տարածքում մարդիկ գոհաբերում էին՝ նրան բարձր տեղից գցելով՝ նախապես նրան բեռնելով իրենց մեղքերով²¹՝ գործած մեղքերից ազատվելու համար:

Հին հնդեվրոպական ցեղերն էլ այծի գոհաբերության ծիսակարգ ունեին: Վեդայական արիսաիկ ծիսակարգում ձիու ոտքերի առաջ այծ էին գոհաբերում, որը աստվածներին պետք է տեղեկացնե՞ր գոհաբերությունների սկզբի մասին²² :

Կարծում ենք՝ ինչպես առաջավորասիական տարածքում, այնպես էլ հին Հայաստանում այծը առնչվել է մեղքի քավության գաղափարին, և *ների*-ն՝ արու այծը, ժողովրդի հիշողության մեջ պահպանվել է որպես չարի խորհրդանիշ՝ կապվելով անդրաշխարհի և չարը իր վրա կրելու գաղափարների հետ:

Ների բառը փոխվել է ն՝ իմաստով, և՝ ձևով: Կարծում ենք, *ների* բառի վերջնավանկի *ի*-ի անկումով և *ր>ռ* անցումով առաջացել է *Նեռ* բառը: Վերջնահանգի *ն*-ն, որ հաղիպում է միայն հին հայերենում, թերևս առաջացել է համաբանությամբ²³: Իմաստային տեսակետից տեղի է ունեցել իմաստափոխություն կցորդային հիմունքով:

Ենթադրելի է, որ Աստվածաշունչ մատյանի հայ թարգմանիչները Դերաքրիստոս բառի փոխարեն գործածել են հենց ժողովրդին հասկանալի և քաջածանոթ *Նեռ(ն)* բառը, որն ըմբռնվում էր որպես հակառակորդ և չարի կրող:

²¹ «Նոխագ, զի մեղս ի բարձ». տե՛ս Գ. Տաթևացի, Գիրք հարցմանց, Կոստանդնուպոլիս, 1729, էջ 361:

²² Т. Гамкрелидзе, Вяч. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, Тбилиси, 1984, 15 587:

²³ Հ. Հյուբշման, Հայագիտական հետազոտություններ, Ե., 2004, էջ 469:

Silva Papikyan- About the word *Ner/n/-* Some investigators consider the word *Ner/n/* is borrowed from the name of the Emperor Nero. Others think the similarity of these two words is casual. The word has the meanings of “cruel, spiteful and obdurate”. If the word has no relationship to the substrate lexical layer, we can look for the relationship between the words “*ner/n/*” and “*neri* (meaning billy goat)”.

ԱՆՅՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԱՆՅՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՀԱՅ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՁ*

Սաֆարյան Տաթևիկ
ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Դեռևս հունաբան ու լատինաբան քերականների հետևողությամբ բայի ցույց տված գործողությունն անվանվել է նաև «փոխադրություն»՝ նկատի ունենալով նրա անցումը, փոխադրվելը երկու առարկաների միջև, և դրանից դուրս առանձնացվել է նաև «չեզոք» կամ «միջին» վիճակը: Ձևավորվում է բայասեռի քերականական կարգը, որի առաջին հիմնավոր բացատրությունը տալիս է Միքայել Չամչյանը: Նա նշում է, որ սեռը բայի այն հատկանիշն է, որը ցույց է տալիս, թե գործող առարկան ներգործում է կրողի վրա, ներգործվում է կրողից, հանդես է բերում երկու վիճակն էլ, չի ներգործում: Եթե հանում ենք երկու հատկանիշների միացումը, որ կոչել են նաև «հասարակ» սեռ, ապա մնում է ներգործման և ոչ ներգործման հարաբերությունը՝ երեք սեռային դրսևորումներով: Չամչյանը իր բաժանման հիմունքներով առանձնացնում էր չորս սեռեր. «Սեռք բայից են որոշմունք նոցա ըստ ներգործականութեան, ըստ կրաւորականութեան, ըստ հասարակ լինելոյ և ըստ չեզոք գոլոյ»¹: Հենց ներգործման և ոչ ներգործման վիճակն էլ առնչվում է անցողականության հետ: Խաչատուր Աբովյանը ևս, նշելով երեք սեռային հատկանիշներ, առանձնացնում է նաև *անցողականը* և գրում. «Անցողական այն բայն է, որ գործողութիւն անցանի առ այլ»², այսինքն՝ անցողական է այն բայը, որի ցույց տված գործողությունը մեկից անցնում է մյուսին, և էական չէ՝ ենթակայից ինդրի³ն, թե հակառակը:

Անցողականության և անանցողականության, թվում է, բավականին հստակ բնութագիրը գնալով մտնում է բարդ հարաբե-

* «Կանթեղ» գիտական հոդվածներ, 2-3, Եր., «Ստողիկ» հրատ., 2014, էջ 155-162:

¹ Մ. Չամչեան, Քերականութիւն Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1831, էջ 110:

² Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Եր., 1950, էջ 123:

րությունների մեջ: Մանուկ Աբեղյանը սեռը դիտարկում է բայակազմության և հոլովների բաժիններում: Առաջին դեպքում նա առանձնացնում է պատճառական և կրավորական բայերը՝ իրենց ձևակազմական ցուցիչներով, իսկ հոլովների՝ որպես խնդիրների, գործածության առիթով բայերը խմբավորում է անցողական և անանցողական տեսակների: Այս առումով բոլոր բայերը բաժանում է *ենթակայական* և *առարկայական*, ապա՝ *անցողական* և *անանցողական* խմբերի: Այսինքն՝ *ենթակայական* խմբի բայերի ցույց տված գործողությունը չունի անցողականություն, գործողությունը մնում է ենթակայի կատարման մեջ, չի անցնում ոչ սուբյեկտից օբյեկտին, ոչ օբյեկտից սուբյեկտին: Եվ սեռային բաժանման կարևոր հիմքը դառնում է կրող խնդրի գոյությունը, իսկ «կրող խնդրի նկատմամբ բոլոր բայերը բաժանվում են երկու տեսակի կամ սեռի՝ անցողական և անանցողական»³: Այսպիսով՝ անցողականություն համարվում է միայն ուղղակի անցումը, երբ առկա է ուղիղ խնդիրը: Ահա թե ինչու այստեղ են դիտարկվում միայն ներգործական և պատճառական բայերը, իսկ անանցողականի մեջ՝ կրավորական և չեզոք բայերը:

Այսպիսի դասակարգումը, իր հասկանալի հիմնավորումներով հանդերձ, որոշակիորեն խախտում է հետևողականությունը: Այս սկզբունքը պահպանվում է հայ և արտասահմանյան լեզվաբանության մեջ, երբ անցողականություն են տեսնում միայն հայցական հոլովով ուղիղ խնդրի առկայությամբ: Եվ քանի որ բայստորոգյալն է նախադասության գերադաս անդամը, որին ստորադասվում է նաև ենթական, ուստի բայի ներգործականությունից է կախված նախադասության կառուցվածքը, բայն է որոշում անզամ գոյականի հոլովական կիրառության մեծ մասը: Այսպես որոշակիանում է նաև «ակտիվ» և «պասիվ» հարաբերությունը:

Տրամաբանությունը հանգեցնում է նոր հստակեցումների. եվրոպական շատ լեզուներում առանձնացվում են *ակտիվ*, *պասիվ*,

³ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 375:

նան *միջին* սեռեր: Այս վերջինը, որ համարժեք է չեզոք սեռին, հաճախ անվանվում է *անանցողական*: Եվ ստացվում է, որ ակտիվ ու պասիվ, կամ ներգործական ու կրավորական կառուցվածքները պարզապես նույն միտքը ներկայացնում են տարբեր քերականական արտահայտություններով, և նրանցից առանձնանում է բուն անանցողականությունը: Եվ ահա՝ «ակտիվ սեռին պատկանում են անցողական բայերը ակտիվ (ներգործական – S.U.) խոնարհմամբ, պասիվ սեռին՝ նույն բայերը պասիվ (կրավորական – S.U.) խոնարհմամբ, իսկ միջին (չեզոք –S.U.) սեռին պատկանում են անանցողական բայերը»⁴: Այսինքն՝ անցողականի մեջ են դիտվում ներգործական և կրավորական սեռի բայերը:

Հետաքրքիր է, որ եվրոպական լեզվաբանության մեջ կամ հնդեվրոպական լեզուների համար դիտվում է մի երևույթ, որի հատկանիշները նկատելի են նաև հայերենում. անանցողական բայերը, որոնց ցույց տված գործողությունը դուրս չի գալիս սուբյեկտի սահմաններից, համարում են նաև «բացարձակ», իսկ անցողական բայերը, որոնց գործողությունը ցույց է տալիս հարաբերություն սուբյեկտի և օբյեկտի միջև, կոչում են «հարաբերական»: Իսկ ակնհայտ է, որ հարաբերական են նաև կրավորական բայերը: Այսպես սեռի կարգը գործողի և կրողի հարաբերության մեջ է դիտվում նաև ժամանակակից հայ լեզվաբանության մեջ: Արարատ Ղարիբյանը անցողականության և անանցողականության դիրքերից սեռեր է տեսնում ըստ խնդրառության և լրացումներ պահանջելու իմաստի՝ բայերի տեսակների մեջ: Գուրգեն Մևակը փորձում է ավելի որոշակիացնել *չ* ածանցով այն ձևերը, որոնք կրավորական իմաստ չունեն և կոչվում են կրավորակերպ չեզոք բայեր, ու որպես այդպիսին անանցողական են:

Հովհաննես Բարսեղյանը, քննություն կատարելով իմացաբանական տեսանկյունից, նշում է, որ առարկաների փոխադարձ

⁴ Шубик С. А., Разработка залоговой проблематики, сб. «Грамматические концепции в языкознании XIX века», Ленинград, 1985, ст. 210.

կապն ու գործողությունը լեզվական միջոցներով արտահայտելիս տրամաբանական ենթական ու խնդիրը կարող են փոխել իրենց դերերը՝ պահպանելով անցողականությունը: Լեզվաբանը միաժամանակ կրավորական *լ/* և պատճառական *ցն* ածանցներից զատ, սեռային պատկանելությունը ձևաբանական համակարգման է ենթարկում ըստ խոնարհիչների և նշում, որ *է* խոնարհման բայերի մեծ մասը անցողական-ներգործական են, իսկ *ա* խոնարհման պարզ բայերից ներգործական են մոտ 20-ը, սոսկաձանցավոր բայերի մեծ մասը անանցողական-չեզոք են⁵:

Երևույթը համակողմանի քննության է ենթարկել Աշոտ Աբրահամյանը: Նկատելով, որ անցողականության խնդիրը ճանաչում են կամ միայն ձևային ցուցիչներով (*լ/*, *ցն*), կամ խնդրային կապակցության միջոցով, գտնում է, որ պետք է այն բացատրել նաև հակադրության հիմքով, այսինքն՝ «Երեխան վազում է», «Մատիտը կորավ» կառուցվածքներում չկան ոչ ձևային, ոչ խնդրառական արտահայտություններ, բայց պետք է տարբերակել սեռը: Ա. Աբրահամյանի դասակարգմամբ՝ անցողականությունն ու անանցողականությունը համարվում են *սեռադասեր*, որոնց մեջ մտնում են ներգործական, կրավորական և չեզոք *սեռերը*, նաև պատճառական և միջին-անդրադարձ *սեռային առումները*: Անցողական սեռադասի մեջ է դնում ներգործական սեռը և պատճառական սեռային առումը, իսկ անանցողականի մեջ՝ չեզոք և կրավորական սեռերը և միջին-անդրադարձ սեռային առման ու կրավորաձև չեզոք բայերը⁶:

Էդվարդ Ադայանը, այս խնդրին յուրովի անդրադառնալով, ենթակայի և գործողության հարաբերության մեջ առանձնացնում է ներգործական, կրավորական և չեզոք սեռերը, իսկ գործողության և

⁵ Տե՛ս, Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Եր., 1953, էջ 132:

⁶ Տե՛ս, Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, գիրք I, Եր., 1962, էջ 491-492:

խնդրի հարաբերության մեջ՝ անցողական և անանցողական սեռերը: Զգացվում է հստակեցման միտումը, երբ գիտնականը նշում է, թե «առաջինը (անցողականը) ցույց է տալիս ենթակայի գործողության «անցումը» մի այլ առարկայի, այլ կերպ ասած՝ անցողականը կանխագրում է գործողության կրող առարկա: Երկրորդը (ոչ անցողականը) այդպիսի առարկա չի պահանջում. ցույց է տալիս այնպիսի գործողություն, որ ենթական կատարում է ինքնին՝ առանց ուրիշ առարկայի վրա ներգործելու»⁷: Անցողականի մեջ դիտվում են ներգործական և պատճառական բայերը, իսկ անանցողականությունը, ըստ նրա, դրսևորվում է չորս սեռով՝ չեզոք, կրավորական, անդրադարձ, փոխադարձ: Անմիջապես նկատելի է որոշ անհետևողականություն. ձևաբանական հիմունքով կրավորական են այն բայերը, որոնք *վ/* ածանց ունեն, ներգործական, որոնք *վ/* կարող են ստանալ, չեզոք, որոնք *վ/* ածանց չեն ընդունում: Այդ դեպքում վեցի փոխարեն կունենանք ավանդական երեք սեռեր: Առաջանում է նաև մի ուրիշ ավելի կարևոր հարց. շարահյուսական առումով ինչպե՞ս կարելի հիմնավորել, որ անցողականությունը միայն ենթակայից խնդրին անցնող գործողությունն է, և ոչ թե նաև խնդրից ենթակային անցնողը: Իմաստաբանական առումով ինչ-ինչ հակասություն բացատրելի է նրանով, որ եթե կրավորական բայերի մեջ հաճախ անցման իմաստը կարևոր չէ («Տունը հիմնավոր վնասվել էր» և այլն), ապա ներգործական բայերը ևս երբեմն անկարևոր կրող առարկայի փոխարեն գործողության անընդհատությունը, հատկանիշն են շեշտում («Նա գիշերցերեկ նկարում է» և այլն): Անցողականության առումով ո՞րն է տարբերությունը «Նա լավ է գրում» և «Նա լավ ծեծվել է» կառուցվածքներում, որոնցից երկուսում էլ խնդիրներ չկան, և խիստ նկատելի կամ քիչ զգալի անցողականությունը պարզապես հակադիր ուղղություն ունի օբյեկտի և սուբյեկտի միջև: Իսկ Աղայանի հետա-

⁷ Էդ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 320:

գա բացատրության մեջ ավելի զգալի է դառնում անհետևողականությունը: Նա գրում է. «Անցողականության և անանցողականության քերականական կարգը արտահայտում է գործողի և գործողության առարկայի հարաբերությունը՝ բայի երկկողմանի հարաբերությամբ կամ դրա բացակայությամբ, մինչդեռ սեռերն արտահայտում են գործողի և գործողության հարաբերություն»⁸: Եթե սեռը միայն գործողի և գործողության հարաբերություն է, ապա այդ դեպքում տարբերություն չկա՝ «Մարդը սիրում է» և «Մարդը ապրում է» կառուցվածքներում:

Հարցի հնարավոր հստակեցումը կարող է արվել ձևակազմական-կառուցվածքային քննությամբ ևս, ինչը նկատում ենք ակադ. Գևորգ Ջահուկյանի դիտարկումներում: Խնդրին անդրադառնալով սեռի և տիպարի քննության մեջ՝ նա առանձնացնում է -*եց*, -*աց*, -*ն*, -*չ* հիմնական տիպարային տարբերակիչներ և նշում. «Երկրորդաբար տիպարային արժեք են ձեռք բերում բաղադրյալ (*ա*, *ե*) *ցն/ր* և պարզ *վ* մասնիկները, որոնց բուն ֆունկցիան սեռային տարբերությունների արտահայտումն է»⁹: Որպես սեռանիշ մասնիկներ՝ սրանք արտահայտում են անցողականություն՝ *կարդացնել* (*կարդացրել*), *վազեցնել* (*վազեցրել*), *գրվել*: Ինչպես նկատում ենք, կրավորական սեռը ևս դիտվում է անցողականության մեջ: Իսկ -*ց*, *ան/աց*, *չ* մասնիկները հանդես են գալիս «որպես անանցողականության կամ վիճակայնության արտահայտիչներ»¹⁰: Օրինակ՝ *խաղաց*, *հենանալ* (*հենացալ*): Չնայած այս կաղապարների մեջ էլ կարող ենք ունենալ անցողականություն: Օրինակ՝ *կարդաց*, *գողանալ* (*գողացալ*): Ստանում ենք «անցողականություն – անանցողականություն հակադրությունների համատեղում»¹¹, որի մեջ է, ըստ մեզ, նաև վերևում նշված անհետևողա-

⁸ Նույն տեղում, էջ 322:

⁹ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Եր., 1974, էջ 258:

¹⁰ Նույն տեղում, էջ 260:

¹¹ Նույն տեղում, էջ 262:

կանությունների պատճառներից մեկը: Ջահուկյանը նկատում է, որ շատ լեզուների նման հայերենի համար ևս ներգործականը (կամ ակտիվը) ի վերջո հավասարաթեք է գործողությանը, չեզոքը (կամ պասիվը)՝ վիճակայնությանը: Իսկ *վ* ածանցը նշում է գործողության ուղղվածությունը և ցույց է տալիս հեղինակի օտարումը, ուստի *վ* կարող են ստանալ այն բայերը, որոնք ենթադրում են պատճառ և հետևանք, ներգործող և ներգործվող, և *վ* չեն կարող ստանալ այն բայերը, որոնք բնութագրվում են եղելությամբ, վիճակով, շարժմամբ (*դեղնել, քնել, գնալ*), այսինքն՝ այստեղ բուն անանցողականությունն է: Եվ գիտնականն ամփոփում է, թե «սեռային հակադրության փոխարեն հանդես է գալիս անցողական-անանցողական տիպարային հակադրությունը»¹²:

Անցողականության և անանցողականության հարցերը նույն սահմաններում են քննվել հետազայի լեզվաբանների երկերում (Ս. Աբրահամյան, Ռ. Իշխանյան, Մ. Ասատրյան և այլք), ինչի հաստատումն է, օրինակ, Մ. Ասատրյանի եզրահանգումը, որ չնայած կրավորական սեռը ներգործականի անմիջական հակադրությունն է, բայց «ներգործական և կրավորական սեռի բայերը խնդրատական միասնություն ունեն»¹³: Այսինքն՝ իմաստաբանական, ձևաբանական և շարահյուսական մակարդակներում որոշակիորեն սահմանագատված երեք բայասեռերը, իրենց պատճառական, անդրադարձ, փոխադարձ, կրավորակերպ չեզոք ենթատեսակներով, արտահայտում են անցողական կամ անանցողական հարաբերություն: Ընդ որում՝ առաջինը ներգործական և կրավորական սեռերին է բնորոշ, իսկ երկրորդը՝ միայն չեզոք սեռին: Այս հիմնավորումը հաստատվում է նաև նրանով, որ արդի հայերենում ունենք ներգործական - չեզոք և կրավորական – չեզոք սեռային անցման դեպքեր, բայց ոչ ներգործական – կրավորական կրկնասեռություն:

¹² Նույն տեղում, էջ 271:

¹³ Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Գ, Եր., 1977, էջ 193:

Այլ կերպ, սեռային անցումը կատարվում է անցողականության և անանցողականության միջև:

Tatevik Safaryan- The issue of transitivity and intransitivity in armenian linguistics - The issue of transitivity and intransitivity continues to raise controversies until now caused by the fact that it can be observed both on morphological and syntactical levels. The transitive are considered only the verbs in passive voice, which require direct object. But the transitivity is not only the transition from the subject to object but the contrary from object to subject. It can be concluded that transitive are the verbs in active and passive voice, whereas intransitive are the neutral verbs. The confirmation for this fact serves the idea that we encounter the phenomenon of having two voices between active-neutral and passive –neutral, that is the voice transition exists between transitivity and intransitivity.

Татевик Сафарян -Вопросы переходности и непереходности в армянском языковедении- Проблемы переходности и непереходности до сих пор и по прежнему остаются спорными, потому что их можно рассматривать как в области морфологии, так и в области синтаксиса. Переходными считались только глаголы действительного залога, которые требуют прямого дополнения. Но переходность это не только переход действия от субъекта (подлежащего) к объекту (дополнению), а еще и наоборот, от дополнения к подлежащему. Поэтому в армянском языке переходными являются глаголы действительного и страдательного залога, а непереходные - среднего залога. Подтверждение этого то, что в ашхарабаре (в новом армянском литературном языке) мы встречаем двузалогность между действительным и страдательным, страдательным и средним залогами, то есть происходит залоговый переход между переходности и непереходности.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք.....	3
Բարսեղյան Ա.Գ.-Նախադասությունների կապակցման ոչ կանոնական դրսևորումներ ՁԼՄ-ների լեզվում	5
Բարսեղյան Ա.Գ.- Բարդ նախադասության բաղադրիչների կապակցման ոչ կանոնական դրսևորումներ ՁԼՄ-ների լեզվում.....	14
Թեյյան Լ.- Շարահյուսական հոմանիշության չափանիշների մասին.....	22
Ղամոյան Լ. Ա.- Ոչ գրական տարրեր Երևանի խոսակցական լեզվում/Ժարգոնային բառեր, գոեհկարբանություններ/.....	29
Ղամոյան Լ. Ա.-Դարձվածային միավորները Երևանի խոսակցական լեզվում	36
Ղամոյան Լ. Ա.-Երևանի լեզվի արդի վիճակը.....	48
Պապիկյան Ս. Վ.- «Հոգեհաց» հասկացության և նրա բառային դրսևորման պատմությունից	56
Պապիկյան Ս. Վ.-Խաղք – խայտառակ հասկացությունների ըմբռնումը բարբառներում	65
Պապիկյան Ս. Վ.-Նեո/ն/ բառի մասին	73
Սաֆարյան Տ. Վ.-Անցողականության և անանցողականության հարցերը հայ լեզվաբանության մեջ	82

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊՐԱԿ Բ

Ձևավորումը և էջադրումը՝
Մ.Խառատյանի

Կազմը՝ Ս. Արևշատյանի